Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի երկրորդ եռամսյակ

ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ՕՐԵՆՔԸ

Քեյթ Բերթոն

Բովանդակություն

Դաս 1.	29.03-04.04	Օրենքները Քրիստոսի օրերում	7
Դաս 2.	05.04-11.04	Քրիստոսը և Մովսեսի օրենքը	10
Դաս 3.	12.04-18.04	Քրիստոսը և կրոնական ավանդույթները	25
Դաս 4.	19.04-25.04	Քրիստոսն ու օրենքը Լեռան քարոզում	34
Դաս 5.	26.04-02.05	Քրիստոսն ու շաբաթը	43
Դաս 6.	03.05-09.05	Քրիստոսի մահն ու օրենքը	52
Դաս 7.	10.05-16.05	«Օրենքի վախճանը Քրիստոսն է»	61
Դաս 8.	17.05-23.05	Աստծո օրենքը և Քրիստոսի օրենքը	69
Դաս 9.	24.05-30.05	Քրիստոսը, օրենքը և Ավետարանը	78
Դաս 10	31.05-06.06	Քրիստոսը, օրենքը և պատվիրանները	87
Դաս 11.	07.06-13.06	Առաքյալներն ու օրենքը	95
Դաս 12.	14.06-20.06	Քրիստոսի եկեղեցին ու օրենքը	104
Դաս 13.	21.06-27.06	Քրիստոսի արքայությունն ու օրենքը	113

ԵՐԵՎԱՆ
2014

ՄԵԾ ՔԱՂԱՔՆԵՐ

ԳՈՐԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

8 հունվարի – Մինսկ

5 փետրվարի – Նովոսիբիրսկ

5 մարտի – Կիև - Ավետարանչության դպրոց

2 ապրիլի – Խաբարովսկ

7 մայիսի – Սանկտ-Պետերբուրգ

4 հունիսի – Դոնի Ռոստով

2 հուլիսի – Աղոթք ավետարանչության մեջ եկեղեցու բոլոր անդամների ներգրավվածության մասին

6 օգոստոսի – Քիշնև

3 սեպտեմբերի – Երևան

1 հոկտեմբերի – Խարկով

5 նոյեմբերի – Ալմա-Աթա

3 դեկտեմբերի – Աղոթք մկտրվածների՝ հավատքում հաստատվելու մասին

2014

Աղոթքի նախաձեռնություն

«24 ԺԱՄ ԱՂՈԹՔԻ ՄԵՋ»

Սա միասնական աղոթք է՝ մեծ քաղաքներում ավետարանչական աշխատանքի մասին:

«Այժմ ժամանակն է ջանասիրաբար Աստծուն որոնելու և ողջ աշխարհի միլիոնավոր մարդկանց Նրա ծրագրերը հասցնելու համար:

Այժմ ժամանակն է Սուրբ Հոգու առաջնորդությամբ մեր ընդհանուր ուշադրությունը կենտրոնացնելու երկրագնդի մեծ քաղաքներում հոգիներ նվաճելու ռազմավարությունների ծրագրման վրա:

Այժմ ժամանակն է այդ աշխատանքը կատարելու անհապաղ և հոգու խոր խոնարհությամբ, անկեղծ աղոթքով՝ լրջորեն հետազոտելով Աստվածաշունչը և առանձնահատուկ ուշադրություն դարձնելով համընդգրկուն ավետարանչության Աստծո զարմանահրաշ ծրագրերին այն քաղաքներում, որոնք ներկայացված են Սուրբ Գրքում և Մարգարեության Հոգու աշխատություններում: Չկա առավել սուրբ աշխատանք, քան մեր ջանքերը միավորելը երկնային ջանքերին՝ այս ժամի Աստծո լուրը՝ Քրիստոսի զորության, հույսի և արդարության երեք հրեշտակների լուրը, երկրի քաղաքներում հռչակելու մեջ:

Այժմ ժամանակն է՝ լցվելու հավատով, հույսով, ինչի շնորհիվ Աստված մեր առջև կբացի ճանապարհը, որպեսզի իրականացվի առաքելությունը մեծ քաղաքացիների համար, և հռչակվի ճշմարտությունը, որովհետև առանց ճշմարտության «հնարավոր չէ հաճո լինել Աստծուն»:

Այժմ ժամանակն է, գտնվելով մեր աշխարհի անհավատ բնակիչների մեջ, առավել ուժեղ, քան երբևէ, պաշտպանելու աստվածաշնչյան ճշմարտությունը, անգամ եթե փլուզվի երկինքը:

Այժմ ժամանակն է հետևում թողնելու քաղաքական քաղաքավարությունը և պաշտպանել աստվածաշնչյան հավատի ու համոզմունքի մաքրությունը:

Այժմ ժամանակն է լինելու հեռատես՝ հավատալով և մարդկանց հռչակելով այն մասին, որ Աստված եղել է, կա և գալու է: Այն մա-

սին, որ Նա մեր երկրի Արարիչն է, Ով այն ստեղծել է ոչ շատ վաղուց՝ տառացիորեն վեց օրերի ընթացքում: Այն մասին, որ Նա Փրկիչն է, Ով եկել է մահանալու մեզ համար և մեր փոխարեն: Այն մասին, որ Նա եկող Արքան է, Ով տեղ կպատրաստի մեզ համար: Հայտնություն գրքի երեք հրեշտակների պատգամը լուր է այսօրվա համար: Այդ լուրը բովանդակում է կանչ, նախազգուշացում և մեծագույն հույս» (ՅՕԱ համաշխարհային Եկեղեցու ղեկավար Թեդ Ուիլսոնի 28.09.2013թ. քարոզից):

Մեծ քաղաքներում միլիոնավոր մարդիկ ապրում են առանց Աստծո, առանց հույսի: Ավելի ու ավելի շատ մարդիկ են լքում գյուղը և աշխատանքի որոնումներով տեղափոխվում մեծ քաղաքներ:

ՅՕԱ եկեղեցու առջև խոշոր խնդիրներ են կանգնած՝ մարդկանց լույս տալ և պատմել ճշմարտության մասին: Դրա համար ավետարանչական ծրագրեր են անցկացվում, առողջության ցուցահանդեսներ, տարատեսակ երիտասարդական ակցիաներ, շփման երեկոներ, սոցիալական ակցիաներ և այլ միջոցառումներ:

Մենք պետք է ավելի շատ աղոթենք, որ այդ առաքելության իրականացման համար ունենանք Սուրբ Հոգու զորությունը:

«Աղոթքը հավատավոր մարդու գլխավոր նեցուկն ու եկեղեցու բոլոր բաժինների շարժիչ ուժն է: Ոչ մի եկեղեցի չի կարողանա գոյություն ունենալ, զարգանալ և պտուղներ բերել՝ առանց աղոթքի սատարման: Ցանկացած ծառայություն, ավետարանչական նախագիծ կամ ավետարանչական ծրագիր իրենց սկիզբն են առնում աղոթքի մեջ, ծնվում են աղոթքի մեջ, աճում և հաջողության են հասնում լոկ աղոթքի միջոցով: Երկրային պատմության ավարտի մոտենալուն զուգընթաց, երբ մարդկային ցեղի թշնամին իր ողջ ուժով ջանում է շեղել ուշադրությունը, նրանք, ովքեր այժմ տքնում են առաջավոր գծում, պետք է, ինչպես երբեք նախկինում, արթուն լինեն և աղոթեն: Առանց անխոնջ աղոթքի և ջանադիր զգոնության՝ մենք գտնվում ենք անհոգ դառնալու և ճիշտ ճանապարհից շեղվելու վտանգի մեջ» (Է. Ուայթ, Աղոթք, 37):

Առաջարկում ենք բոլորին և հրավիրում ենք բոլոր ցանկացողներին՝ ամեն ամսվա առաջին չորեքշաբթի օրը միավորվել Եվրասիական բաժանմունքի մեծ քաղաքների համար ծոմի և աղոթքի մեջ:

ԵԱՔ
աղոթքի
ծառայություն

ՕՐԵՆՔԸ ԵՎ ՍԵՐԸ

«Երկնքում մեծ պայքարի հենց սկզբից սատանաի մտադրությունն էր՝ տապալել Աստծո Օրենքը» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 582):

Ինչո՞ւ: Որովհետև օրենքը՝ որպես Աստծո կառավարման հիմք, արտացոլում է տիեզերքի բարոյական մաքրությունը, և այդ օրենքի տապալումը կնշանակեր արարման բարոյական կարգի տապալում:

Խորհեցե՛ք այս մասին: Եթե գոյություն չունենար Աստված և ոչ մի կյանք, տիեզերքը ապաբարոյական կլիներ: Ո՛չ թե անբարոյական, երբ գոյություն ունի սխալ բարոյականություն, այլ ապաբարոյական, երբ բարոյականություն չկա առհասարակ, որովհետև անաստված տիեզերքում ոչ մի անկենդան քար, որ բախվում է մի այլ քարի, չի կարող բարոյական հատկանիշներ ցուցաբերել:

Սակայն Աստված կա, գոյություն ունեն նաև մարդիկ, և մենք ստեղծվել ենք որպես բարոյական էակներ՝ օժտված սիրելու և սիրված լինելու ընդունակությամբ: Բայց այդ սիրո գոյության համար պետք է գոյություն ունենա նաև ազատություն՝ *բարոյական* ազատություն, որովհետև սերը բարոյական հայեցակարգ է, որը չի կարող դրսևորվել ապաբարոյական տիեզերքում (որը բաղկացած է լոկ քարերից և անկենդան տարածությունից):

Իսկ բարոյականությունը ենթադրում է ընտրություն ճշտի և սխալի, բարու և չարի միջև: Այդ պատճառով տիեզերքի համար բարոյական լինելու, բարու կամ չարի, ճշտի կամ սխալի ներուժն օգտագործելու միակ հնարավորությունը օրենքի առկայության մեջ է, որը սահմանում է ճիշտն ու սխալը: Եվ, իհարկե, տիեզերքն ունի այդպիսի օրենք:

«Արդ ի՞նչ ասենք, օրենքը մե՞ղք է. բայց ես մեղքը չէի իմանա՝ եթե ոչ օրենքով, և ցանկությունը չէի ճանաչի, եթե օրենքը չասեր՝ մի՛ ցանկացիր» (Հռոմեացիս 7.7):

Արդյոք մե՞ղք է կարմրահեր լինելը: Ո՛չ: Ինչո՞ւ: Որովհետև Աստծո օրենքը չի դատապարտում շիկակարմիր վարսերը: Եթե գոյություն ունենար այդ արգելքը, ինչպես գոյություն ունի ագահության արգելքը («Մի՛ ցանկացիր»), այդ դեպքում շիկակարմիր վարսեր ունենալը մեղք կհամարվեր: Սակայն շիկակարմրահեր լինելը մեղք չէ:

Բարոյականությունն առանց օրենքի նույնքան անհնար է, որքան անհնար է միտքը՝ առանց բանականության: Մեր տիեզերքը բարոյական է, որովհետև Աստված ստեղծել է ազատ էակների, ովքեր պատասխանատու են Նրա օրենքի առջև: Եթե գոյություն չունենար ագահությունն արգելող օրենքը, ապա չէր լինի նաև ագահության մեղ-

քը. եթե չկա շիկակարմիր մազեր ունենենալու արգելքը, դրա մեջ էլ մեղք չկա՝ անկախ այն բանից, թե տիեզերքում որքան շիկակարմրահեր ագահ էակներ կան:

Աստված մարդկանց ստեղծել է սիրելու ընդունակությամբ: Բայց սերը չի կարող գոյություն ունենալ առանց ազատության՝ բարոյական ազատության: Իսկ բարոյական ազատությունը չի կարող գոյություն ունենալ առանց օրենքի՝ բարոյական օրենքի: Սերը հիմնված է ազատության վրա, իսկ ազատությունը՝ օրենքի: Հետևապես, Աստծո կառավարման էությունը, այդ կառավարման՝ սիրո կառավարման հիմքը պետք է լինի Աստծո օրենքը: Ահա թե ինչու էր Էլեն Ուայթը գրում սատանայի՝ «օրենքը տապալելու» ցանկության մասին: Հարձակումները օրենքի վրա՝ հարձակումներ են ոչ միայն Քրիստոսի բնավորության, այլ նաև արարման բուն բարոյական կարգի դեմ:

Այդ պատճառով առաջիկա եռամսյակում շաբաթօրյա դպրոցում ուսումնասիրելու թեման է՝ Քրիստոսը և Նրա օրենքը: Մենք ուսումնասիրելու ենք օրենքը, հատկապես՝ այն հարցը, թե ինչու այդքան շատ քրիստոնյաներ, չհասկանալով օրենքի և շնորհի միջև եղած փոխադարձ կապը, ընկել են Տասնաբանյա օրենքի ժխտման ծուղակը և այդպիսով ակամայից սատարում են «Աստծո օրենքը տապալելու» փորձերը:

Բայց Աստվածաշունչը հստակ կերպով ասում է. «Որովհետև սա է Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհաննես 5.3): Աստծո հանդեպ մեր սիրո և Նրա պատվիրաները պահելու միջև փոխադարձ կապն ավելի ուժեղ է, քան մենք կարծում ենք: Մենք կարող ենք սիրել Աստծուն, որովհետև ապրում ենք տիեզերքում, որտեղ կարող է գոյություն ունենալ սերը, իսկ այն կարող է գոյություն ունենալ այն պատճառով, որ տիեզերքը բարոյական է: Այդ բարոյական լինելը, գոնե մեզ՝ արարված էակներիս համար, հիմնված է Աստծո բարոյական օրենքի վրա: Օրենքի Տիրոջ և հենց օրենքի փոխադարձ կապն էլ մենք ուսումնասիրելու ենք առաջիկա եռամսյակի ընթացքում:

Քեյթ Աուգուստես Բերթոնը կրոն է դասավանդում Օքվուդի համալսարանում, որտեղ նա նաև ծառայում է որպես Աղվենտիստական համահեղական կապերի կենտրոնի համակարգող: Քեյթ Բերթոնի դոկտորական թեզը, որ նա պաշտպանել է Հյուսիսարևմտյան համալսարանում (Northwestern University), կենտրոնացված է օրենքի դերի վրա Պողոս առաքյալի՝ հռոմեացիներին հղված ուղերձում:

ՕՐԵՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԵՐՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 2.1-5, Եբրայեցիս 10.28, Երկրորդ Օրինաց 17.2-6, Ղևտացոց 1.1-9, Ղուկաս 14.1-6, Հակոբոս 2.8-12:

Հիշելու համարը.

«Ուրեմն երբ հեթանոսները, որ օրենք չունեն, բնությամբ օրենքի գործերն անեն, սրանք, թեև օրենք չունեն, իրենք են իրենց համար օրենք» (Հռոմեացիս 2.14):

Քաղաքացիական հասարակությունների մեծ մասում կարող են միաժամանակ տարբեր օրենքներ գործել: Յուրաքանչյուրին վերաբերող համընդհանուր օրենքները կարող են գոյատևել տեղական օրենքների հետ միասին, որոնք գործում են միայն որոշակի տարածքում:

Նորկտակարանյան ժամանակներում, երբ մարդն օգտագործում էր «օրենք» բառը (հունարեն՝ *nomos*, լատիներեն՝ *lex*, իսկ եբրայերեն՝ *Tora*), այն կարող էր ենթադրել օրենքների ցանկացած ժողովածու: Թե հատկապես որ օրենքին է վերաբերում խոսքը, հաճախ կարելի էր հասկանալ միայն զրույցի համատեքստից: Այդ պատճառով դասերի թեմայի ուսումնասիրության ժամանակ մենք ստիպված ենք միշտ հաշվի առնել անմիջական համատեքստը, որպեսզի հասկանանք, թե որ օրենքի մասին է խոսքը:

Այս շաբաթ մենք կդիտարկենք զանազան օրենքներ, որոնք գործում էին հասարակության մեջ Քրիստոսի և վաղ եկեղեցու ժամանակներում: Մենք ուշադրություն կդարձնենք այդ օրենքներին՝ բացառապես հիմք դնելու այն օրենքի՝ Աստծո բարոյական օրենքի՝ Տասնաբանյա օրենքի ուսումնասիրության համար, որը եռամսյակի ընթացքում լինելու է մեր ուշադրության կենտրոնում:

Հռոմեական օրենքը

Կարդացե՛ք Ղուկաս 2.1-5-ը: Ի՞նչ կարող ենք սովորել այն բանից, թե ինչպես էին գործում Տիրոջ՝ այս երկու հավատարիմ հետևորդները իրենց ժամանակի քաղաքական իրավիճակում:

_____

_____

Հանրապետության ձևավորման ժամանակից հռոմեացիները գիտակցում էին հստակ ձևավորված օրենսդրության կարիքը՝ հասարակությանը կառավարելու համար: Հռոմեացիների կողմից փաստացի հաստատված համակարգը շարունակում է մնալ ժամանակակից շատ ժողովրդավարական պետությունների իրավական համակարգի հիմքը:

Դեպքերի մեծ մասի ժամանակ Հռոմը ենթակա պետություններին թույլ էր տալիս հետևելու սեփական սովորույթներին, սակայն բոլորից ակնկալվում էր հնազանդություն կայսերական և սենատորական օրենքներին: Դա, անշուշտ, վերաբերում էր նաև Հովսեփին ու Մարիամին:

Հռոմեական օրենքի նպատակը հասարակական կարգի պահպանությունն էր: Որպես այդպիսին՝ այն շոշափում էր ոչ միայն պետական հարցեր, այլև կանոնակարգում էր սոցիալական և ընտանեկան փոխհարաբերությունները: Հռոմեական օրենքը ոչ միայն նկարագրում էր հանրային պաշտոններում մարդկանց ընտրության ընթացակարգը, այլ նաև վերաբերում էր այնպիսի հարցերի, ինչպիսիք են ամուսնական անհավատարմությունն ու տիրոջ և ստրուկի փոխհարաբերությունները: Շատ հռոմեական սոցիալական նորմեր համանման էին այն նորմերին, որոնք հանդիպում էին Հին Կտակարանում և այլ հասարակություններում: Այն մշակույթը հասկանալու համար, որի ժամանակ գրվել են Նոր Կտակարանի գրքերը, պետք է հաշվի առնեն այն փաստը, որ հռոմեական կայսրությունը ձևավորում էր Հիսուսի և վաղ եկեղեցու ժամանակվա աշխարհի քաղաքական ֆոնը: Նոր Կտակարանում տեղի ունեցող շատ բաներ, օրինակ՝ Հիսուսի մահը, Պողոսի բանտարկությունը, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, եթե բավարար տեղեկատվություն ունենք այն ժամանակվա մասին: Իհարկե, փրկության հիմունքները հասկանալու համար պարտադիր չէ, որ մարդը հռոմեական պատմության մասնագետ լինի, սակայն

սեփական՝ պատմական գիտելիքների ընդլայնումը կարող է միանգամայն օգտակար լինել:

Չնայելով աստվածային հրաշալի նախախնամությանը՝ կապված Մարիամի հղիության հետ, և Աստծո ակներև առաջնորդությանը, Մարիամն ու Հովսեփը անտրտունջ հնազանդվեցին երկրի օրենքին, որը նրանցից պահանջում էր երկարատև հոգնեցուցիչ ճանապարհորդության մեկնել՝ Մարիամի հղիության վերջին ժամանակահատվածում: Մի՞թե ավելի լավ չէր մնալ տանը՝ հաշվի առնելով առանձնահատուկ հանգամանքները: Ի՞նչ են ասում նրանց գործողություններն այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվենք մենք քաղաքացիական օրենքին: (Խորհեցե՛ք, թե որքան հեշտորեն կարող էին նրանք արդարացնել իրենց անհնազանդությունը):

Երկուշաբթի **մարտի 31**

Մովսեսի օրենքը՝ քաղաքացիական

Թեև Հիսուսի ժամանակներում հրեաները գտնվում էին հռոմեացիների իշխանության ներքո, նրանց իրավունք էր շնորհվել՝ իրենց կրոնը դավանելու և իրենց սովորույթներին հետևելու (*տե՛ս Գործք առաքելոց 18.15*): Հրեական օրենքի կատարմանը հետևող օրենսդիր մարմինը կոչվում էր «սինեդրիոն»: Սինեդրիոնը, որ երբեմն հիշատակվում է որպես խորհուրդ (*Հովհաննես 11.47*), բաղկացած էր 71 մարդուց, ովքեր ընտրվում էին քահանաներից, ավագներից, ռաբբիներից, և ղեկավարվում էր քահանայապետի կողմից: Այն իրենից յուրատեսակ Գերագույն դատարան էր ներկայացնում, որը դիտարկում էր հրեական սովորույթներին, ավանդույթներին և օրենքներին վերաբերող գործերը:

Հրեական քաղաքացիական օրենքը հիմնված էր Մովսեսի Հնգամատյանում գրի առնված քաղաքացիական օրենսգրքերի վրա: Քանի որ Մովսեսն էր գրել աստվածաշնչյան առաջին հինգ գրքերը, այդ օրենքը կոչվում է Մովսիսական: Մովսեսին տալով օրենքները՝ Աստված ցանկանում էր տեսնել պետություն, որտեղ Ինքը գլուխն է, իսկ ժողովուրդը հետևում է Իր պատվիրաններին: Հիսուսի ժամանակներում հրեաները ենթակա էին հռոմեական օրենքին: Սակայն հռոմեական կառավարությունը թույլ էր տալիս նրանց Մովսեսի օրենքներն օգտագործել իրենց սովորույթներին վերաբերող հարցերի լուծման հա-

մար: Այստեղ սինեդրիոնի աշխատանքը հատկապես կարևոր էր:

Նոր Կտակարանում կան Մովսեսի օրենքի կիրառման օրինակներ քաղաքացիական հարցերի համատեքստում. հրեաներից առաջվա նման սպասվում էր կես սիկղի չափով տաճարի տուրքի վճարում (Մատթեոս 17.24-27, Ելից 30.13), ամուսնալուծությունները կատարվում էին Մովսեսի հրահանգների համաձայն (Մատթեոս 19.7, Երկրորդ Օրինաց 24.1-4), ժողովուրդը պահում էր լևիրաթը (օրենք, որի համաձայն՝ այրուն պետք է կնության առնի նրա հանգուցյալ ամուսնու եղբայրը) (Մատթեոս 22.24, Երկրորդ Օրինաց 25.5), տղաների համար կատարվում էր թլփատության ծեսը (Հովհաննես 7.23, Ղևտացոց 12.3), իսկ շնացողները ենթակա էին քարկոծման (Հովհաննես 8.3-5, Երկրորդ Օրինաց 22.23,24):

Կարդացե՛ք Մատթեոս 26.59-61, Եբրայեցիս 10.28 և Երկրորդ Օրինաց 17.2-6-ը: Ի՞նչ կարևոր սկզբունք են բովանդակում այս համարները: Ի՞նչ են ասում դրանք ազնվության և արդարամտության՝ աստվածաշնչյան հայեցակարգի մասին: _____

_____

_____

Կարդացե՛ք հատվածներ քաղաքացիական օրենքների ժողովածուից, որոնք գրի են առնված Աստվածաշնչի առաջին գրքերում: Մեզ համար հեշտ չէ հասկանալ այդ օրենքներից մի քանիսի տրամաբանությունը, այնպես չէ՞: (Տե՛ս, օրինակ, Երկրորդ Օրինաց 21): Հաշվի առնելով, որ այդ օրենքների հեղինակը Աստված է, մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ամեն ինչում վստահել Աստծուն, հատկապես եթե ինչ-որ բանր մինչև վերջ հասկանալի չէ մեզ:

Երեքշաբթի ապրիլի 1

Մովսեսի օրենքը՝ ծիսական

Կարդացե՛ք Ղևտացոց 1.1-9, 2.14-16, 5.11-13-ը: Ինչի՞ն էին վերաբերում այդ օրենքները: Ո՞րն էր դրանց նպատակը: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են սովորեցնում դրանք: _____

_____

_____

Բացի քաղաքացիական օրենքներից, հին Իսրայելում գոյություն ուներ նաև այսպես կոչված ծիսական օրենք: Այդ օրենքի կիզակենտրոն կետը սրբարանն էր ու ծառայությունն այնտեղ: Այս ամենը Իսրայելի

զավակներին ցույց էր տալիս փրկության պատմությունը և մատնացույց անում եկող Մեսիային: Այսօրվա համարներում հիշատակվում է, որ այդ ծառայության շնորհիվ մարդը մաքրվում էր մեղքից: Կարելի է ասել, որ այդ օրենքները «մինի-մարգարեություններ» էին Քրիստոսի և Նրա փրկության ծառայության մասին:

«Ծիսական օրենքը տրված էր Քրիստոսի կողմից: Եվ ավելի ուշ, երբ այդ օրենքն արդեն հարկավոր չէր պահել, Պողոսը հրեաներին ցույց տվեց դրա իրական նշանակությունը՝ նշելով նրա տեղը փրկագնման ծրագրում և առնչությունը Քրիստոսի գործերին: Մեծն առաքյալը այդ օրենքն անվանում է փառավոր, իր աստվածային Արարչին արժանի: Հանդիսավոր ծառայությունը Սրբարանում խորհրդանշում էր այն խոշոր ճշմարտությունները, որոնք կբացահայտվեն գալիք սերունդներին… Այդպիսով, խավարի և ուրացության բոլոր դարերում մարդկանց սրտերում պահպանվում էր կենդանի հավատը, մինչև որ վրա հասավ խոստացված Փրկչի գալստյան ժամանակը (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 367):

Թեև ծիսական համակարգը սահմանվել էր Հիսուսի կողմից, այն միայն անհրաժեշտ էր, որպեսզի ծառայի որպես նախակերպար ապագա իրողության՝ Հիսուսի գալստյան, Նրա մահվան և քահանայապետական ծառայության խորհրդանիշ: Երբ Նա ավարտեց Իր ծառայությունը երկրի վրա, վերացավ այդ հին համակարգի անհրաժեշտությունը՝ իր բոլոր զոհաբերություններով, ծեսերով ու տոներով հանդերձ (տե՛ս Եբրայեցիս 9.9-12): Թեև այսօր մենք արդեն չենք պահում ծիսական օրենքը, բայց, ուսումնասիրելով այն, կարող ենք ավելի խոր ներթափանցել փրկության ծրագրի էության մեջ:

Կենդանիների զոհաբերությունները կենտրոնական տեղ էին զբաղեցնում սրբարանի ծառայության մեջ, քանի որ մատնացույց էին անում Հիսուսի մահը: Մտորե՛ք, թե որքան նշանակալից է այն փաստը, որ մեր փրկությունը կարող էր տեղի ունենալ միայն՝ հանուն մեզ կատարած Նրա ծառայության միջոցով: Ի՞նչ է ասում սա մեզ մեղքի ծանրության մասին:

Չորեքշաբթի ապրիլի 2

Ռաբբիական օրենքը

Բացի Մովսիսական օրենքից, Հիսուսի ժամանակակից հրեաները ծանոթ էին նաև ռաբբիների օրենքին: Ռաբբիները փարիսեցիների

կողմից հանդիսանում էին յուրատեսակ միջոց՝ ուսուցանելու համար միջոցը, քանի որ պատասխանատու էին, որ Մովսեսի օրենքը ժողովրդի համար չկորցնի իր կարևորությունն ու արդիականությունը: Մովսեսի Հնգամատյանի մեջ ռաբբիները հաշվում էին 613 օրենք (ներառյալ 39՝ շաբաթ օրվա վերաբերյալ) և դրանք դրել էին իրենց օրենսդրության հիմքում: Այդ գրված օրենքները նրանք լրացնում էին բանավոր կարգադրություններով, որոնք բաղկացած էին առաջատար ռաբբիների մեկնություններից:

Բանավոր օրենքը հանրահայտ է որպես «խալախա», ինչը նշանակում է «գնալ»: Ռաբբիները համարում էին, որ եթե մարդիկ պահեն բազում «խալախոտաները» («խալախայի» հոգնակին), ապա «կգնան» 613 գլխավոր օրենքների ճանապարհով: Թեև ռաբբիական «խալախոտաները» ի սկզբանե ի հայտ եկան որպես բանավոր օրենք, հետագայում կանոնակարգվեցին և գրի առնվեցին գրքի ձևով: Հիսուսի ժամանակներից պահպանվել են Թորայի որոշ մեկնաբանություններ՝ Միդրաշ կոչվող մեկնություններում, այն ժամանակ, երբ այլ մեկնություններ գրի են առնված իրավական Միշնա ժողովածուի մեջ: Շատ կրոնասեր հրեաներ դարերի ընթացքում ձգտում էին և մեր ժամանակներում էլ ձգտում են խստորեն պահել այդ օրենքները:

Կարդացե՛ք Ղուկաս 14.1-6 և Հովհաննես 9-ը: Թեև Հիսուսին մեղադրում էին շաբաթը խախտելու մեջ՝ այն պատճառով, որ Նա այդ օրը բժշկում էր մարդկանց, դուք կարո՞ղ եք Հին Կտակարանում ցուցում գտնել այն մասին, որ շաբաթ օրը բժշկելը մեղք է: Ինչպե՞ս է օգնում Ձեր պատասխանը՝ որոշ խնդիրներ հասկանալու համար, որոնց հետ Հիսուսը ստիպված էր գործ ունենալ: Եվ, որ ավելի կարևոր է, մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այդ դեպքերից, որոնք կօգնեն մեզ համոզվելու, որ մենք նման սխալներ ենք գործում՝ ճիշտ ճանապարհով «գնալու» մեր փորձերում:

_____

_____

_____

_____

Մեր ժամանակակիցներին այդ բանավոր օրենքներից շատերը տարակուսանք են հարուցում, հատկապես՝ երբ դրանք փորձում էին օգտագործել Հիսուսի դեմ, սակայն խնդիրը ավելի շուտ ազգի առաջնորդների դիրքորոշման, և ոչ թե բուն օրենքների մեջ էր: Թեև հաճախ «խալախոտաների» պահպանմանը շատ ձևականորեն էին վերաբերվում, այդ օրենքները պետք է հոգևորության տարր ներմու-

ծեին ամենասովորական երկրային գործերի մեջ՝ դրանց կրոնական նշանակություն հաղորդելով:

Ինչպե՞ս կարող ենք մենք սովորել կրոնական նշանակություն հաղորդել անգամ ամենասովորական կենցաղային գործերին:

Հինգշաբթի ապրիլի 3

Բարոյական օրենքը

Ինչպիսի ազդեցություն էլ գործեին հռոմեական օրենքը, Մովսեսի օրենքը և ռաբբիական օրենքը առաջին դարի հրեաների կյանքի վրա, հրեական կրոնին հարող շատ մարդիկ ապրում էին Պաղեստինի սահմաններից դուրս և հռոմեական կայսրության սահմաններից շատ հեռու: Այդ պատճառով վերոհիշյալ օրենքներից շատերը նրանց կյանքում խոշոր դեր չէին խաղում:

Բայց միևնույն ժամանակ իրեն Իսրայելի Աստծո հետևորդը համարող ցանկացած մարդ պետք է պահեր Տասը պատվիրանները:

«Տասը պատվիրանները Իսրայելի համար բարոյականության հիմքն էին: Ուխտն Աստվածաշնչում օգտագործվող փոխաբերություն է՝ այդ հարաբերությունների նկարագրման համար: Թեև տվյալ փոխաբերությունը վերցված է միջազգային իրավունքի ոլորտից, սխալ է պատվիրանները հասկանալ միայն որպես Աստծո հանդեպ Իսրայելի պարտավորությունների հակիրճ շարադրանք… Հնազանդությունը պատվիրաններին ոչ այնքան ենթարկում էր Աստվածային կամքին, որքան արձագանք սիրուն» (Leslie J. Hoppe, «Ten Commandments», Eerdmans Dictionary of the Bible (Grand Rapids, Mich.: Eerdmans, 2000), էջ 1285):

Տասը պատվիրանները գերազանցում էին ցանկացած օրենսդրական համակարգի, որ հայտնի էին առաջին դարի հրեաներին: Անգամ փարիսեցիները, ովքեր մանրակրկիտորեն անգիր էին սովորում 613 մովսիսական օրենքները, ընդունում էին Տասը պատվիրանների կարևորությունը: Միշնայի մի բաժինը, որը կոչվում էր Թամիդ (5.1), բովանդակում է ռաբբիական հրահանգ՝ ամեն օր կրկնել Տասը պատվիրանները: Համարվում էր, որ մյուս բոլոր օրենքները բովանդակվում են Տասը պատվիրանների օրենքում: Հրեա փիլիսոփա, Հիսուսի ժամանակակից Փիլոնը մի ամբողջ գիրք է գրել՝ բոլոր աստվածաշնչյան գրքերի մեջ Տասը պատվիրանների կենտրոնական տեղի մասին:

Կարդացե՛ք Մատթեոս 19.16-19, Հռոմեացիս 13.8-10 և Հակոբոս 2.8-12-ը: Ի՞նչ են ասում այս համարները Քրիստոսի հետևորդների կյանքում Տասը պատվիրանների դերի մասին: _____

_____

_____

_____

Իրենց հրեա եղբայրակիցների նման, Նոր Կտակարանի ոգեշընչված հեղինակները հասկանում էին Տասը պատվիրանների նշանակությունը՝ Աստծո ժողովրդի համար: Թեև տվյալ եռամսյակի որոշ դասեր վերաբերելու են Քրիստոսի ժամանակ գործող մյուս օրենքների հետ Նրա փոխհարաբերություններին, հիմնական ուշադրությունը հատկացված է Նրա վերաբերմունքին Տասը պատվիրանների նկատմամբ, որոնք հաճախ անվանում են «բարոյական օրենք»:

Ուրբաթ ապրիլի 4

Հեկտագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վկայություններ եկեղեցու համար» գրքի 1-ին հատորից կարդացե՛ք «Երդում» գլուխը (201-204):

«Եթե Ադամը չխախտեր Աստծո Օրենքը, կարիք չէր լինի հաստատել նաև ծիսական օրենքը: Բարի լուրն առաջին անգամ Ադամին տրվեց մարգարեությամբ, երբ հռչակվեց, որ կնոջ սերունդը կջախջախի օձի գլուխը, և այս Բարի լուրը հաջորդ սերունդների միջոցով փոխանցվում էր Նոյին, Աբրահամին և Մովսեսին: Աստծո օրենքի և փրկության ծրագրի իմացությունը Ադամին ու Եվային հայտնվեց Իր՝ Հիսուսի կողմից: Նախածնողները խնամքով պահպանում էին այդ կարևոր դասը և այն փոխանցում էին իրենց զավակներին ու զավակների զավակներին: Այդպես պահպանվում էր գիտությունը Աստծո օրենքի մասին» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, գիրք 1, 230):

Հարցեր քննարկման համար

1. Իսրայելին ղեկավարելու համար՝ Մովսեսի կողմից օրենքները գրի առնվելուց շատ առաջ եգիպտացիներն ու բաբելոնացիներն ունեին քաղաքացիական օրենքների իրենց օրենսգրքերը, որոնք իրենց իմաստով մասամբ նման էին Աստծո որոշ օրենքների: Անգամ աստվածամերժ հասարակություններում կան օրենքներ, որոնք պաշտպանում են մարդկանց և նրանց ունեցվածքը: Օրենքը հաճախ հիմնվում

է բարոյական հայեցակարգերի վրա, այսինքն՝ օրենքը պետք է դրդի մարդկանց՝ խուսափելու չարի որոշակի դրսևորումներից և բարին գործելու: Բայց ի՞նչն է բարու և չարի ըմբռնման չափանիշը:

2. Բարու և չարի հայեցակարգն ինչպե՞ս է առաջ քաշում Աստծո գոյության հարցը: Այլ խոսքերով, եթե Աստված չկա, որտեղի՞ց են մարդիկ վերցնում բարու և չարի հասկացությունները:
3. Տարբեր իրադրություններում մենք հաճախ օգտագործում ենք օրենքի հայեցակարգը: Մենք խոսում ենք ձգողականության օրենքի, շարժման օրենքի, միջազգային օրենքների, ներպետական օրենքների, հարկային օրենքների մասին: Ի՞նչ ընդհանուր բան կա այս բոլոր օրենքների մեջ: Որո՞նք են օրենքներից ցանկացածի խախտման հնարավոր հետևանքները: Ո՞րն է օրենքների հետ փոխգործակցության առավելությունները: Օրենքի սկզբունքներն ինչպե՞ս են օգնում ձեզ՝ հասկանալու համար Տասը պատվիրանների նպատակը հավատավոր մարդկանց կյանքում:
4. Վերադարձե՛ք չորեքշաբթի օրվա դասին և խոսե՛ք այն մասին, թե ինչու մենք՝ որպես եկեղեցի, պետք է զգուշանանք՝ չգործելու համար այն նույն սխալը, որ թույլ տվեցին որոշ հրեական հոգևոր առաջնորդներ՝ օրենքը ծանրաբեռնելով հորինված հրահանգներով: Ինչո՞ւ է նման սխալ թույլ տալն ավելի հեշտ, քան մենք կարծում ենք՝ անկախ այն բանից, թե ինչ բարի մտադրություններ ունենք:

ՔՐԻՍՏՈՍՆ ՈՒ ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 2.21-24, Ելից 13.2,12, Ղուկաս 2.41-52, Մատթեոս 17.23-26, Հովհաննես 8.1-11, Երկրորդ Օրինաց 22.23,24:

Հիշելու համարը.

«Որովհետև եթե դուք Մովսեսին հավատայիք, ինձ էլ կհավատայիք, որովհետև նա ինձ համար գրեց» (Հովհաննես 5.46):

Շատ քրիստոնյաներ դաստիարակվել են այնպիսի պատմություններով, որ Հիսուսը, իբր, բացասաբար էր վերաբերվում հրեական կրոնին: Դարեր շարունակ այս մոլորությունը լոկ սնուցում էր հակասեմիտականությունը: Հիսուսն արտահայտվել է միայն կրոնի չարաշահումների, բայց ոչ բուն կրոնի դեմ: Ի վերջո, Նա ինքն է հիմնել այն:

Քրիստոսի կյանքի և ծառայության մասին ավետարանչական պատումը վկայում է, որ Նա հավատարիմ հրեա էր՝ Իր ծննդյան պահից մինչև երկրային կյանքի վերջին շաբաթը լիովին խորամուխ եղած հրեական մշակույթի մեջ:

Ինչպես առաջին դարի յուրաքանչյուր հավատարիմ հրեա՝ Հիսուսը պահում էր Մովսիսական օրենքը: Մեծացած լինելով հավատարիմ հրեա ծնողների ընտանիքում՝ Նա բարձր էր գնահատում Իր հարուստ երկրային ժառանգությունը, որն արմատավորված էր Աստծո նախախնամությամբ: Աստված Ինքն էր ոգեշնչել Մովսեսին՝ գրի առնել այդ օրենքները՝ ցանկանալով ստեղծել հասարակություն, որը կարտացոլեր Աստծո կամքը և ուղեցույց աստղ կդառնար այլ ազգերի համար: Հիսուսը հավատարմորեն հետևում էր օրենքին: Թլփատությունը, տոներին տաճար այցելելը, հարկերի ու տուրքերի վճարման հանդեպ վերաբերմունքը՝ այդ ամենը վկայում է, որ Հիսուս Քրիստոսը հավատարիմ էր նախակերպարների համակարգին, որոնք, ինչպես Նա գիտեր, շուտով կիրագործվեն Իր մահվան և երկնային ծառայության մեջ:

Այս շաբաթ մենք ավելի ուշադիր կդիտարկենք այն օրենքները, որոնց հետևում էր Հիսուսը:

Թլփատությունն ու նվիրաբերումը (Ղուկաս 2.21-24)

Աստված ուխտ կնքեց Աբրահամի հետ և խոստացավ, որ նա կդառնա շատ ազգերի հայր (Ծննդոց 17.4): Երբ Աստված կնքեց այդ ուխտը, իննսունիններամյա Աբրահամը ուներ 13-ամյա որդի՝ Իսմայելը, և շարունակում էր սպասել իր խոստացված որդու՝ Իսահակի ծննդյանը: Սակայն նրան հրամայվեց, որ թլփատվի ինքը և այդ ծեսը կատարի իր տան յուրաքանչյուր արական սեռի անդամի նկատմամբ: Աստված նաև հրամայեց Աբրահամին՝ այդ օրվանից սկսած՝ հետագայում էլ ութերորդ օրը թլփատել իր տանը ծնված յուրաքանչյուր տղայի (Ծննդոց 17.9-12): Ուխտի այս նշանը այնքան կարևոր էր, որ թլփատությունը կատարվում էր անգամ այն ժամանակ, երբ ութերորդ օրը շաբաթ էր լինում (Ղևտացոց 12.3, Հովհաննես 7.22):

Այս ճշմարտությունը օգնում է մեզ՝ ավելի լավ հասկանալու Հիսուսի կյանքի առաջին օրերը: Ավետարանը հստակ կերպով վկայում է այն մասին, որ Հովսեփն ու Մարիամը իրենց աստվածավախության շնորհիվ, որոշակի իմաստով, ընտրված էին դառնալու Հիսուսի երկրային ծնողները: Հովսեփը անվանված է «արդար մարդ» (Մատթեոս 1.19), իսկ Մարիամի մասին ասված է, որ նա «Աստծուց շնորհ գտավ» (Ղուկաս 1.30): Երբ Հիսուսը դարձավ ութ օրական, ծնողները Նրան անուն տվեցին և կատարեցին թլփատության ծեսը՝ ճիշտ այնպես, ինչպես անցյալում անվանվել և թլփատվել էին հրեա շատ տղաների:

Խորհե՞ք միայն. Աստծո անարատ Որդին մարդկային մարմնով անցնում է այն ծեսի միջով, որ Նա Ինքն էր սահմանել շատ դարեր առաջ:

Կարդացե՛ք Ղուկաս 2.21-24-ը՝ Ելից 13.2,12-ի և Ղևտացոց 12.1-8-ի համատեքստում: Այս համարները է՞լ ինչ են հայտնում մեզ Հովսեփի ու Մարիամի մասին: Մենք ի՞նչ կարող ենք սովորել նրանց օրինակից: _____

_____

_____

_____

Աստվածաշունչը հստակ կերպով ասում է, որ Մարիամը կույս էր, երբ Աստված ընտրեց նրան՝ Հիսուսի մայրը դառնալու համար (Ղուկաս

1.27): Այդ պատճառով Հիսուսը նրա համար եղավ առաջին «արգանդը բացող» Երեխան: Համաձայն Ելից 13-ի՝ Իսրայելի յուրաքանչյուր առաջնեկ (դա վերաբերում էր ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիներին) պետք է նվիրաբերվեր Աստծուն: Նաև Ղևտացոց 12.2-5-ում օրենքն ավելացնում է, որ տղայի ծնունդից հետո կինը, ծիսական օրենքի համաձայն, անմաքուր էր լինում 40 օրվա ընթացքում (և 80 օր, եթե աղջիկ էր ծնվում): Այդ ժամանակահատվածի ավարտին նա պետք է երևար քահանային և զոհ մատուցեր: Լինելով բարեպաշտ հրեաներ՝ Մարիամն ու Հովսեփը ճշգրտորեն կատարում էին Մովսեսի կողմից օրենքում հրահանգվածը, որ ծնված Մանուկը Իր վրա կրեր ուխտի նշանը:

Երկուշաբթի **ապրիլի 7**

Հրեական տոները (Հովհաննես 5.1)

«Սրանից հետո տոն էր հրեաների, և Հիսուսը վեր ելավ Երուսաղեմ» (Հովհաննես 5.1)

Հիմնական տարեկան տոներից մեկը բաղարջակերաց յոթնօրյա տոնն էր, որը սկսվում էր զատիկից: Տոնը նվիրված էր եգիպտական գերությունից իսրայելացիների ազատագրմանը, երբ կործանիչ հրեշտակը անցավ այն դռների մոտով, որոնց դրանդիները օծված էին արյամբ: Ավետարանները պատմում են երեք դեպքի մասին, երբ Հիսուսը տոնում էր զատիկը (Ղուկաս 2.41-43, Հովհաննես 2.13-23, Մատթեոս 26.17-20):

Զատկից հիսուն օր հետո շավուոթ տոնն էր, որը հաճախ անվանում են «Հիսուն օր» նշանակող հունարեն պենտեկոստե բառով: Թեև Սուրբ գիրքը չի նշում, թե ինչի կապակցությամբ է տոնվում պենտեկոստեն, ռաբբիները համարում էին, որ այդ օրը հիշեցնում էր այն օրվա մասին, երբ օրենքը տվեց Մովսեսը: Ավետարաններում չի հիշատակվում, թե Հիսուսը տոնում էր պենտեկոստեն: Սակայն Իր համբարձումից առաջ Նա աշակերտներին հրամայեց Երուսաղեմում սպասել Սուրբ Հոգով մկրտությանը (Գործք առաքելոց 1.4,5): Փաստորեն այդ իրադարձությունը տեղի ունեցավ պենտեկոստեի օրը (Գործք առաքելոց 2.1-4):

Հրեական օրացույցում տոնական պարբերաշրջանն ավարտում էր տաղավարահարաց տոնը և քավության օրը (Յոմ Կիպպուր): Քավության օրը մեղքից բանակատեղի մաքրման և Աստծո հետ ժո-

ղովրդի հաշտության օրն էր: Տաղավարահարաց տոնը հիշեցնում էր այն ժամանակվա մասին, երբ Իսրայելը անապատում բնակվում էր վրանների մեջ:

Բացի Մովսեսի օրենքում հիշատակված տոներից, հրեաներն ունեին ևս երկու տոն, որոնք հիշեցնում էին պատմական իրադարձություններին Աստծո միջամտելու մասին: Առաջինը Փուրիմն էր, որը սահմանվել էր ի հիշատակ՝ Եսթերի ժամանակ ցեղասպանությունից Իսրայել ժողովրդի փրկության (տե՛ս Եսթեր 9.26-28): Երկրորդ տոնը Խանուկան էր, որը հայտնի էր նաև որպես տաճարի նորոգման տոն (Հովհաննես 10.22), որն իրականացվում էր ի հիշատակ Անտիոք Եպիփանի կատարած պղծումից տաճարի մաքրման, ինչպես նաև՝ հույների դեմ մաքաբեացիների հաղթանակի՝ ՔԱ 165 թվականին:

Իհարկե, աստվածաշնչյան տոների մեծ մասը վաղուց արդեն կորցրել են այժմեականությունը, գոնե քրիստոնյաների համար, քանի որ իրենց կատարումն են գտել Քրիստոսում: Սակայն մենք կարող ենք շատ բան սովորել՝ հետազոտելով այդ տոները և դրանց բովանդակած լուրերը. չէ՞ որ դրանք բոլորը խոսում են Աստծո փրկարար շնորհի և Իր ժողովրդին ազատագրելու Նրա զորության մասին:

Թեև մենք այլևս չենք պահում վերոհիշյալ տոները, ի՞նչ կարող ենք անել, որ աչքից չկորցնենք Աստծո ներկայության իրողությունը, չմոռանանք, թե ինչ է արել Նա մեզ համար և ինչ է սպասում մեզանից:

Երեքշաբթի **ապրիլի 8**

Հիսուսը տաճարում

Նոր Կտակարանը քիչ տեղեկություններ է բովանդակում Հիսուսի մանկության մասին: Սակայն մի բավականին խորիմաստ հատված (Ղուկաս 2.41-52) պատմում է, թե ինչպես Զատկի տոնի ժամանակ Հիսուսն ու Իր ծնողները այցելեցին Երուսաղեմ: Կարդացե՛ք այդ հատվածը և պատասխանե՛ք հարցերին:

Այս պատմությունն ինչպե՞ս է օգնում լուսաբանելու Ավետարանների հրեական մշակութային համատեքստը, և որքանով է կրոնը նշանակալի տեղ զբաղեցնում ողջ տեղի ունեցածի մեջ:

_____

_____

_____

Որքանո՞վ է կարևոր այն փաստը, որ այս պատմությունը տեղի է ունեցել Զատկի ժամանակ: _____

_____

_____

Հիսուսի ծնողները քանի՞ օր չէին գտնում Նրան: Ինչի՞ մասին է հիշեցնում սա ձեզ: _____

_____

_____

_____

Հիսուսը հնազանդ երեխա էր, և Նրա պատասխանը ծնողներին՝ հնչում է որպես փափուկ հանդիմանություն: Ի՞նչ կարևոր միտք է բովանդակվում Նրա պատասխանի մեջ: Դա ի՞նչ է ասում մեզ մեր կյանքի գերակայությունների մասին: _____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ղուկաս 2.51-ը: Ի՞նչ է նշանակում «Նա... նրանց [ծնողներին] հնազանդ էր» արտահայտությունը: Այս համարն ինչպե՞ս է ցույց տալիս, թե Աստված որքա՜ն իջավ մեզ մոտ, որպեսզի մեզ փրկություն պարգևի: Սա ի՞նչ կարող է սովորեցնել մեզ՝ հարկավոր ժամանակ և հարկավոր տեղում ենթարկվելու անհրաժեշտության մասին:

Չորեքշաբթի **ապրիլի 9**

Տուրքերը (Մատթեոս 17.23-26)

Անցյալ շաբաթվա դասում նշված էր, որ Մովսեսի օրենքը բովանդակում էր ինչպես քաղաքացիական, այնպես էլ ծիսական հրահանգներ: Ծիսական օրենքները ցույց էին տալիս, որ տաճարը հրեաների կրոնական կյանքի կենտրոնն էր: Առաջին դարում տաճարը, ըստ երևույթին, մնում էր միակ անվնաս մնացած վայրը, որը ազգային նույնականության զգացում էր հաղորդում հրեաներին:

Հիսուսի ծառայության ժամանակ Երուսաղեմի տաճարում վերակառուցում էր իրականացվում: Հերովդես Մեծը այդ վիթխարի նախագիծը ձեռնարկել էր մոտավորապես ՔԱ 20 թվականին, և այն լիովին ավարտված չէր՝ ընդհուպ մինչև ՔՀ 66 թվականը: Հասկանալով, թե շատ հրեաներ որքան լրջորեն էին վերաբերվում իրենց հավատին,

հռոմեացիները նրանց թույլ էին տալիս իրենց սեփական տուրքերը հավաքել՝ տաճարի պահպանման ծախսերը ծածկելու համար: 20 տարեկանից բարձր յուրաքանչյուր հրեա տղամարդ պետք է կես սիկղի չափով տուրք վճարեր՝ անկախ իր տնտեսական վիճակից (Ելից 30.13, 38.26):

Կարդացե՛ք Մատթեոս 17.23-26-ը: Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց. «Որպեսզի նրանց չգայթակղեցնենք»: Այստեղ ներկայացված ո՞ր սկզբունքն է, որ մենք նույնպես պետք է կիրառենք մեր կյանքում: _____

_____

_____

_____

Ըստ երևույթին, տաճարային հարկահավաքները ճանապարհորդում էին գավառներում՝ ապահովելով տուրքերի հավաքումը բոլոր տղամարդկանցից: Պետրոսի անհապաղ պատասխանը հարկահավաքներին՝ այնպիսի տպավորություն է ստեղծում, որ Հիսուսը կանոնավոր վճարում էր տուրքերը (Մատթեոս 17.23,24): Սակայն, լինելով Աստծո Որդի, Հիսուսը հարցականի տակ է դնում Իր Հոր տունը պահելու համար տուրքի վճարման իրավաչափությունը:

«Եթե Հիսուսն առանց առարկության վճարեր տուրքը, Նա, ըստ էության, արդարացի կճանաչեր նրանց մեղադրանքները և դրանով իսկ կհրաժարվեր Իր աստվածային էությունից: Ու թեև Նա անհրաժեշտ համարեց կատարել այդ պահանջը, սակայն հերքեց այն հիմքը, որի փաստարկմամբ այդ պահանջը ներկայացվել էր: Վճարելով տուրքը՝ Նա վկայեց Իր աստվածային էությունը: Ակհայտ էր, որ Նա մեկ է Աստծո հետ, և այդ պատճառով Նա, ի տարբերություն թագավորության հասարակ քաղաքացիների, ազատված էր տուրքի վճարումից» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 434):

Այնուամենայնիվ, Հիսուսը գերադասեց հնազանդվել իշխանությունների պահանջներին և Պետրոսին հրամայեց դրամ հանել առաջին բռնված ձկան բերանից: Ձկան բերանում գտնված սիկղը բավարար էր, որպեսզի վճարվեր տուրքը երկուսի՝ Հիսուսի և Պետրոսի համար:

Իմանալով, որ այդ վիթխարի շինությունը շուտով ավերվելու է, Հիսուսն, այնուամենայնիվ, վճարեց տաճարի տուրքը (Մատթեոս 24.1,2): Ի՞նչ է ասում սա տասանորդը վերադարձնելու և ընծաների մեջ հավատարիմ լինելու անհրաժեշտության մասին՝ չնայելով առկա խնդիրներին:

Օրենքի կատարումը (Մատթեոս 5.17-20)

Ինչպես տեսնում ենք, Հիսուսը հավատարիմ քաղաքացի էր՝ հրեա տղամարդկանց վրա դրված պահանջները կատարող, անգամ երբ Նրա կյանքին վտանգ էր սպառնում (տե՛ս, օրինակ, Հովհաննես 7.1,25,26, 10.31): Ավելին, Հիսուսը պարզորոշ ասել է, որ Իր նպատակն էր ոչ թե «օրենքը կամ մարգարեները» վերացնելը, այլ դրանք կատարելը (Մատթեոս 2.17-20):

Այդ դեպքում ինչպե՞ս կարող ենք հասկանալ Հովհաննես 8.1-11 և Մատթեոս 19.1-9 հատվածները Երկրորդ Օրինաց 22.23,24 և 24.1-4-ի համատեքստում: Ի՞նչ է կատարվում այստեղ: _____

_____

_____

_____

_____

Փարիսեցիները բազմիցս փորձում էին Հիսուսին ներկայացնել՝ որպես օրենքը խախտող (տե՛ս, օրինակ, Հովհաննես 8.4-6-ը): Նրա մոտ բերելով շնության մեջ բռնված կնոջը՝ նրանք հարցը հետևյալ կերպ դրեցին. «Մովսեսը օրենքում մեզ պատվիրեց այդպիսիներին քարկոծել: Դո՞ւ ինչ կասես»: Հետաքրքիր է նշել, որ Հիսուսը ուղղակի պատասխան չի տալիս նրանց հարցին: Փաստորեն, Իր պատասխանով Նա հաստատում է Մովսեսի օրենքը. «Ձեզանից ով որ անմեղ է, թո՛ղ առաջ նա քար նետի նրա վրա» (Հովհաննես 8.7): Հիսուսը չի ասում, թե կնոջը պետք չէ քարկոծել. Նա ուղղակի այդ այրերին ստիպում է գիտակցել, որ իրենք նույնպես խախտում են օրենքը: Անգամ կնոջն ազատելը չի հակասում Մովսեսի օրենքին, քանի որ ոչ ոք մեղադրելու նպատակով մատնացույց չի անում նրան, իսկ արդարադատությունն իրականացնելու համար առնվազն երկու վկա էր հարկավոր (Երկրորդ Օրինաց 17.6):

Պատասխանելով ապահարզանի և նոր ամուսնություն կնքելու վերաբերյալ հարցին՝ Հիսուսն ասես հակասում է Մովսիսական օրենքին՝ ընդգծելով, որ ի սկզբանե ապահարզանի համար իրավաբանական հիմքեր չկան (Մատթեոս 19.4-6): Երբ փարիսեցիները նշում են Երկրորդ Օրինաց 24.1-4-ում Մովսեսի կարգադրությունը, Հիսուսը ամեն բան իր տեղն է դնում: Մովսեսը *չի կարգադրել* ամուսնալուծվել, այլ մարդկային խստասրտության պատճառով *թույլ է տալիս* ամուսնա-

լուծվել: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ պարզաբանելով Մովսիսական օրենքը, Հիսուսը չի վերացնում այն: Հիսուսը հավատարիմ հրեա էր ամեն ինչում, Նա հետևում էր Մովսիսական օրենքին:

Ինչպե՞ս հավասարակշռություն գտնենք արդարացիության և ողորմածության միջև՝ այն մարդկանց հանդեպ, ովքեր (ինչպես և մենք ամենքս) մեղքեր են գործում: Իսկ եթե սխալվենք (իսկ մենք, որպես ընկած արարածներ, հենց դա էլ անում ենք), ապա ավելի լավ է դեպի արդարացիությո՞ւն, թե՞ ողորմություն: Ինչո՞ւ:

Ուրբաթ ապրիլի 11

Հետագա ուսումնասիրության համար

Անցած դասի թեմայի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Տաղավարահարաց տոնին» (447-454) և «Ցանցերի մեջ» (455-462) գլուխները:

«Տարին երեք անգամ կրոնական տոների ժամանակ հրեաները պետք է հավաքվեին Երուսաղեմում: Այդպիսին էր Իսրայելի անտեսանելի Առաջնորդի հրամանը՝ տրված ամպի սյունից: Գերության ժամանակ հրեաները չէին կարող հետևել այդ հրահանգին: Բայց, վերադառնալով իրենց երկիրը, նրանք կրկին սկսեցին նշել ու պահել այդ հիշատակի օրերը: Աստված ցանկանում էր, որ ամենամյա տոները մարդկանց հիշեցնեին Իր մասին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 447):

«Միանգամայն բնական է, որ Հիսուսի ծնողները Նրա մեջ առաջին հերթին իրենց սեփական երեխային էին տեսնում: Նա ամեն օր նրանց հետ էր, Նրա կյանքը շատ բանով հիշեցնում էր սովորական երեխայի կյանքը, և ծնողների համար դժվար էր գիտակցել, որ Հիսուսն իրականում Աստծո Որդին էր: Փրկչի ներկայությամբ նրանք ենթարկվում էին աշխարհին պարգևված շնորհը չգնահատելու վտանգին: Նրա հետ բաժանումից առաջ եկած տրտմությունը և Հիսուսի խոսքերի փափուկ հանդիմանությունը պետք է նրանց գիտակցության մեջ տպավորեին պարտքի սրբությունը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 81):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք այսպիսի զարմանահրաշ ճշմարտության մասին. թեև Հիսուսն Ինքն էր սահմանել օրենքները, Նա ենթարկվում էր դրանց, երբ

մարդկային մարմին առավ: Ի՞նչ է ասում սա մեզ Աստծո բնավորության մասին:

2. Ձանացե՛ք ձեզ դնել Հովսեփի ու Մարիամի տեղը: Արժե՞ զարմանալ, որ նրանք միշտ չէ,որ հասկանում էին Հիսուսին: Ամե՞ն բան է հասկանալի ձեզ: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել վստահել ու հնազանդվել անգամ այն ժամանակ, երբ շատ բան մեզ հասկանալի չէ:
3. Դուք ի՞նչ կպատասխանեիք այն քրիստոնյային, ով պնդում է, որ մենք պետք է պահենք բոլոր հինկտակարանյան տոները: Խորհուրդ. զրույցը կարելի է սկսել հարցից. «Դուք ինչպե՞ս եք մտադիր պահել այդ տոները, եթե դրանք բոլորը կապված էին տաճարի հետ, որը վաղուց արդեն ավերված է, և զոհի կենդանիների արյունը հեղելու հետ, ինչը նույնպես կորցրել է իր նշանակությունը»:

ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 23.1-7, Մատթեոս 15.1-6, Եսայիա 29.13, Մատթեոս 5.17-20, Հռոմեացիս 10.3:

Հիշելու համարը.

«Այս ժողովուրդը իր բերանով է մոտենում Ինձ, և շրթունքներով է Ինձ պատվում, բայց իրենց սիրտն Ինձանից հեռացած՝ ջոկված է: Զուր տեղն են պաշտում ինձ՝ վարդապետություններ սովորեցնելով, որ մարդկանց պատվերներ են» (Մատթեոս 15.8,9):

Մեթոդիստական եկեղեցու հիմնադիր Ջոն Ուեսլին ենթադրում էր, թե աստվածաբանության վրա չորս գործոն է ազդում. հավատը, բանականությունը, Սուրբ գիրքը և ավանդույթը: Սակայն նա նկատի չուներ, որ դրանք հավասարազոր են: Նա ընդունում էր, որ ամեն ինչի հիմքում ընկած է Աստվածաշունչը, սակայն համարում էր, որ մարդու անձնական հավատը, տրամաբանելու ընդունակությունը և կրոնական պրակտիկան ազդում են այն բանի վրա, թե ինչպես է մեկնաբանվում Աստվածաշունչը: Եթե Ուեսլին այսօր հարություն առներ, կցնցվեր՝ հայտնաբերելով, որ ժամանակակից շատ աստվածաբաններ, ովքեր հետևում են ուելսյան ավանդույթին (ինչպես նաև՝ այլ ավանդույթների), բանականությունը, ավանդությունն ու անձնական կարծիքը ավելի վեր են դասում Սուրբ գրքի հստակ ուսմունքից:

Այս շաբաթվա դասը դիտարկում է կրոնական ավանդույթները, որոնց հիման վրա որոշ դպիրներ և փարիսեցիներ կառուցում էին իրենց ուսմունքը: Այդ ավանդույթները գրած ռաբբիները խորապես պատվում էին Սուրբ գիրքը և մտադիր չէին ավանդույթներին Աստծո Խոսքի կարգավիճակը հատկացնել, սակայն նրանց նախանձախնդիր աշակերտներից ոմանք լուրի մեկնությունը շփոթել էին բուն լուրի հետ և դրանով իսկ ուշադրությունը Աստծո՝ գրի առնված հայտնությունից շեղել էին դեպի մարդկային ավանդույթը:

«Մովսեսի աթոռի վրա»

Թեև դպիրներն ու փարիսեցիները մեզ ներկայանում են որպես երկու տարբեր խմբեր, որոնք հանգամանքների բերումով լծվել էին նույն գործին, դպիրները, հավանաբար, փարիսեցիների ենթախումբ էին (տե՛ս Գործք առաքելոց 23.9): Փարիսեցիները նշանավոր խումբ դարձան հունական կայսրության ժամանակներում: Համարվում է, որ նրանք բարեպաշտ հրեական կրոնական հոսանքի (որը հայտնի էր որպես խասիդիզմ) ներկայացուցիչների մնացած սերունդներն էին, ովքեր մասնակցել էին Հունաստանի դեմ Մակաբեացիների ապստամբությանը:

«Փարիսեցիներ» անվանումը ծագում է եբրայերեն «պարաս»-ից, որը նշանակում է «առանձնացնել»: Այն ժամանակ, երբ շատ հրեաներ հայտնվեցին հեթանոսական մշակույթների ազդեցության ենթակայությամբ, փարիսեցիներն իրենց պարտքն էին համարում հոգ տանել այն մասին, որ յուրաքանչյուր հրեա տղամարդ սովորի օրենքը: Իրենց նպատակին հասնելու համար նրանք հաստատեցին ռաբբիի պաշտոնը: Այդ բառը տառացիորեն նշանակում է «իմ մեծ», «իմ տեր» կամ «իմ ուսուցիչ»:

Ասելով. «Մովսեսի աթոռի վրա դպիրները և փարիսեցիները նստեցին»՝ Հիսուսն ընդունում էր նրանց կարգավիճակը՝ որպես ժողովրդի ուսուցիչներ (Մատթեոս 23.2,3): Չէ՞ որ, այսպես թե այնպես, նրանք իրենց վրա պատասխանատվություն էին վերցրել, որ սովորեցնեն ժողովրդին օրենքի ճանապարհները:

Կարդացե՛ք Մատթեոս 23.1-7-ը: Ո՞րն էր դպիրների և փարիսեցիների գլխավոր խնդիրը: _____

_____

_____

Ավետարաններում ամենից հաճախ բացասական արձագանքներ են հանդիպում դպիրների և փարիսեցիների մասին: Հաշվի առնելով նրանցից շատերի (բայց ոչ բոլորի) մեղքը Հիսուսի մահվան և Նրա հետևորդների հալածանքների մեջ՝ նման բացասական մոտեցումը միանգամայն արդարացված է: Ստեղծվում է տպավորություն, թե այդ խմբերի անդամները թաքնվում էին անկյուններում և ծառերի հետևում՝ սպասելով, թե երբ մարդիկ ինչ-որ սխալ կգործեն, որպեսզի հետո օրենքն օգտագործեն նրանց դեմ: Փարիսեցու այդպիսի կերպարը այն-

քան հաճախ է հանդիպում Սուրբ գրքում, որ այդ բառն սկսել է օգտագործվել որպես «օրենսգետ» բառի հոմանիշ: Ավելի ուշադիր քննարկելով բերված տեքստը՝ մենք հայնտաբերում ենք, որ փորիսեցիների հետ փոխհարաբերություններում Հիսուսի համար մեծ խնդիր էր ոչ այնքան նրանց ցանկությունը, որ շրջապատողները պահեն Մովսեսի օրենքները, որքան այն, որ նրանք իրենք այն չէին պահում: Նրանք կեղծավոր, երեսպաշտ անձինք էին՝ մի բան ասում էին, մի այլ բան՝ անում: Բայց անգամ երբ փարիսեցիներն ինչ-որ ճիշտ բան էին անում, նրանք անում էին սխալ շարժառիթներով:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք, թե Հիսուսն ինչ էր ասում դպիրների և փարիսեցիների մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ ինքներս մեղավոր չենք նույն բանում:

Երկուշաբթի **ապրիլի 14**

Մարդկային պատվիրաններ

Թեև դպիրներն ու փարիսեցիները նստում էին «Մովսեսի աթոռին», նրանց կրոնական ուսուցման հիմքը դուրս էր գալիս Հին Կտակարանի սահմաններից: Օրենքը, որ սովորեցնում էին փարիսեցիները, բաղկացած էր առաջատար ռաբբիների կողմից աստվածաշնչյան տեքստի մեկնաբանություններից: Այդ մեկնաբանությունները պետք է ոչ թե փոխարինեին Սուրբ գրքին, այլ դրանց ճիշտ բացատրություն տային: Սկզբում դրանք փոխանցվում էին բանավոր կերպով, սակայն ավելի ուշ դպիրներն սկսեցին դրանք հավաքել գրքերի մեջ:

Ռաբբիական օրենքի առաջին պաշտոնական հրատարակությունն ի հայտ եկավ ՔՀ երկրորդ դարի վերջից ոչ շուտ, երբ Ռաբբի Եհուդա հա-Նասին (Հուդա-իշխան) ստեղծեց Միշնան: Միշնայում գրի առնված օրենքներն ընդգրկում են ռաբբիական մեկնաբանության մոտ չորս դար: Ռաբբիներից շատերը, ում մեկնությունները մտան Միշնա, ապրում էին Քրիստոսի ժամանակներում: Դրանիցից ամենա հռչակավորները Հիլելն ու Շամայն են: Նրանց մեջ հանդիպում են նաև Գամաղիելը՝ Հիլելի թոռը, Սողոսի (Պողոս առաքյալի) ուսուցիչը:

Կարդացե՛ք Մատթեոս 15.1-6-ը: Ի՞նչ վիճելի հարցի մասին է խոսվում այստեղ: ի՞նչ մոլորություն է ձգտում ուղղել Հիսուսը:

_____

_____

_____

Առաջին դասին մենք իմացանք «խալախա» կոչվող ռաբբիական օրենքների մասին, որը նշանակում է «գնալ»: Ռաբբիները համարում էին՝ եթե մարդը քայլում է փոքր օրենքների ճանապարհով, դրանով իսկ պաշտպանված է հիմնական օրենքների խախտումից: Սակայն աստիճանաբար փոքր օրենքներն սկսեցին հիմնականների կարգավիճակ ստանալ, և որոշ ժամանակ անց արդեն դժվար էր ավանդույթը տարբերել աստվածաշնչյան ճշմարտությունից:

Խնդիրը ոչ թե այն էր, որ փարիսեցիներն ունեին սեփական օրենքներ, այլ այն, որ նրանք այդ կանոնները բարձրացրել էին մինչև դավանաբանության մակարդակի: Ոչ մի մարդ իրավունք չունի կրոնական սահմանափակումներ ստեղծել և դրանք բարձրացնել Աստծո հրամանի մակարդակի: Բայց սա չի նշանակում, թե հավատավոր մարդկանց խումբը իրավունք չունի սահմանել կանոններ, որոնք օգնում են նրանց՝ կարգավորելու հասարակական վարքը: Գործնական հրահանգները կարող են մեծ վիճահարույց հարց լինել օրենքը պահելու հարցում: Սակայն երբեք չի կարելի թույլ տալ, որ հրահանգները զբաղեցնեն հենց օրենքի տեղը:

Ի՞նչ կանոններ, ավանդույթներ ու սովորույթներ ունենք մենք՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ: Դրանք ինչպե՞ս են օգնում մեզ՝ օրենքին առավել հավատարիմ ու հնազանդ լինելու օրենքին: Գրի՛ առեք դրանք և շաբաթ օրը ձեր գրառումները բերե՛ք դասին: Քննարկե՛ք, թե դրանք ինչ դեր են խաղում ձեր համայնքի կյանքում:

Երեքշաբթի **ապրիլի 15**

Ապուպապերի ավանդույթները

Ինչպես արդեն տեսանք, որոշ ռաբբիներ այնքան մեծ ուշադրություն էին դարձնում՝ Մովսեսի օրենքը պահելու ընթացքում՝ որպես գործիք ստեղծված կանոններին ու ավանդույթներին, որ դադարել էին տարբերել մեկը մյուսից: Որոշ ժամանակ անց ռաբբիների բառերը կանոնական կարգավիճակ ստացան: Մարդիկ մտածում էին, որ ռաբբիների խրատները նույնքան պարտադիր էին կատարելու համար, որքան և Սուրբ գիրքը: Ամենայն հավանականությամբ, երբ ռաբբիներն ի սկզբանե գրում էին իրենց մեկնությունները, մտադիր չէին դրանք ավելացնել Սուրբ գրքին: Սակայն ռաբբիների նվիրյալ աշակերտներն

իրենց պարտքը համարեցին այդ նշված մեկնություններով կիսվել մյուս մարդկանց հետ:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Մատթեոս 15.1,2-ը: Մովսեսի առաջին հինգ գրքերից որի՞ վրա է հիմնված այդ ավանդույթը: Տե՛ս նաև Մարկոս 7.3,4 և Մատթեոս 15.11-ը: _____

_____

_____

Հազիվ թե որևէ մեկին հաջողվի գտնել աստվածաշնչյան համար, որը հրամայում է. «Անհրաժեշտ է ուտելուց առաջ լվանալ ձեռքերը»: Սակայն դա չկանգնեցրեց դպիրներին ու փարիսեցիներին, երբ նրանք եկան հակադրվելու Հիսուսին: Նրանք չէին պնդում, որ աշակերտները խախտում են Մովսեսի օրենքը, խոսքը վերաբերում էր ապուպապերի ավանդույթների խախտմանը: Լարվածությունը, որով նրանք տալիս են հարցը, ցույց է տալիս, որ փարիսեցիների համար դա լուրջ կրոնական խախտում էր:

Առողջապահության ոլորտի մասնագետները և ծնողները, հավանաբար, կցանկանային հիգիենայի տեսակետից խելամիտ հիմնավորում տալ ձեռքերը լվանալու այդ բացահայտ փարիսեցիական պարտադրանքին: Սակայն հետազոտողները համարում են, որ իրականում նրանց հետաքրքրում էր ոչ թե անձնական հիգիենան, այլ ծիսական անմաքրությունը: Փարիսեցիներին անհանգստացնում էր, որ օրվա ընթացքում առօրյա աշխատանք կատարելով, մարդիկ ակամայից դիպչում են պղծված առարկաների: Հետևաբար, եթե նրանք ուտում են առանց լվացվելու, նշանակում է՝ համաձայն ծիսական օրենքի՝ պղծվում են՝ դիպչելով սննդին: Բայց փարիսեցիներին ուղղված Իր պատասխանի մեջ (տե՛ս Մատթեոս 15.11) Հիսուսն ամեն բան իր տեղը դրեց:

Կարդացե՛ք Եսայիա 29.13-ը: Ի՞նչ կարևոր աստվածաշնչան սկզբունքներ են բացահայտված այստեղ: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք հիշենք դրանց մասին:

Չորեքշաբթի ապրիլի 16

Մարդկային պատվիրանները

«Աստծո պատվիրանների փոխարինումը մարդկայիններով չէր դադարում: Անգամ քրիստոնյաների մեջ ընդունված են պատվերներ ու սովորույթներ, որոնց միակ հիմքը հայրերի ավանդույթներն են: Նման

պատվերները, որոնք հիմնվում են միայն մարդկային հեղինակության վրա, դուրս են մղել աստվածային պատվիրանները: Մարդիկ կապվում են ավանդույթներին, երկյուղում են սովորույթներից և ատում են նրանց, ովքեր փորձում են ցույց տալ իրենց մոլորությունները… Աստված կոչ է անում մեզ ՝ հենվել ոչ թե այսպես կոչված եկեղեցու հայրերի հեղինակության, այլ հավիտենական Հոր՝ երկնքի ու երկրի Տիրոջ Խոսքի վրա» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 398):

Կարդացե՛ք Մատթեոս 15.3-6-ը՝ Ելից 20.12, Երկրորդ Օրինաց 5.16, Մատթեոս 19.19 և Եփեսացիս 6.2-ի համատեքստում: Ի՞նչ երկու լուրջ մեղադրանքներ է առաջ քաշում Հիսուսը փարիսեցիների դեմ: _____

_____

_____

Երբ փարիսեցիները դիմեցին Հիսուսին՝ Նրա աշակերտներին մեղադրելով, որ ուտում են առանց ձեռքերը լվանալու, սպասում էին, որ Նա անմիջապես կպատասխանի իրենց մեղադրանքին: Սակայն, հետևելով իր եզակի վարվելակերպին, Հիսուսը նրանց պատասխանեց խնդրի բուն էությունը շոշափող հարցով: Հիսուսը ցանկանում էր, որ նրանք իմանան. խնդիրը ոչ թե ձեռքերը լվանալը և Աստծուն ընծայելը, այլ աստվածայինի նկատմամբ մարդկային ստանդարտների մեծարումն է: Փարիսեցիները կարող էին ձեռքերը լվանալու հարցում տրամաբանական բացատրություն տալ իրենց դիրքորոշմանը: Ակներևաբար, այդ ուսյալ այրերը նաև բացատրում էին, որ, իրենց միջոցներն ուղղորդելով Աստծո գործին և ոչ թե ծնողներին խնամելուն, նրանք իրենց անչափելի սերն են արտահայտում Աստծո հանդեպ:

Թեև իրենց գործողություններում փարիսեցիները կարող էին ղեկավարվել տրամաբանությամբ, Աստված չի ակնկալում, որ մարդիկ Իրեն կսիրեն իրենց սեփական պայմաններով: Լավ է, որ նրանց անհանգստացնում էին կարգապահության և սուրբ կյանքի հարցերը, բայց այդպիսի անհանգստությունը երբեք չպետք է մթագներ Աստծո կամքը: Փարիսեցիները պետք է հիշեին, որ Մովսեսի գրի առած 613 օրենքները ներդաշնակ էին միմյանց և մեկը մյուսին չէին հակասում: Օրենքներից ոչ մեկը դուրս չէր մղում մյուսին: Սակայն փարիսեցիները պահանջում էին, որ մարդիկ պահեն «ապուպապերի ավանդույթները», իսկ դա արժեզրկում էր Աստծո Խոսքը (Մատթեոս 15.6), առնվազն այնքանով, որքանով նրանք իրենք էին դրանում շահագրգռված: Իրենց համարելով օրենքի պահապաններ՝ փարիսեցիները ակնհայտորեն ցնցված ու անգամ վրդովված էին այն պնդումից, որ իրենք իրականում

խախտում են այն և անգամ վերացնում՝ այն նույն ավանդույթներով, որոնք, իրենց կարծիքով, օգնում էին մարդկանց՝ ավելի լավ պահելու օրենքը:

Հինգշաբթի **ապրիլի 17**

Փարիսեցիների արդարությանը գերազանցող արդարություն (Մատթեոս 5.20)

Կարդացե՛ք Մատթեոս 5.17-20-ը: Ինչպե՞ս պետք է հասկանալ Հիսուսի ծանուցումը (տե՛ս Մատթեոս 5.20)՝ մեր դասի համատեքստում: Տե՛ս նաև Հռոմեացիս 10.3: _____

_____

_____

Եթե Մատթեոս 5.20 համարը կարդանք համատեքստից դուրս, գուցե տպավորություն ստեղծվի, որ դա փարիսեցիներին իրենց փարիսեցիության մեջ գերազանցելու կոչ է, այսինքն՝ արե՛ք այն, ինչ նրանք են անում, բայց է՛լ ավելի շատ:

Բայց մի՞թե այդ մասին է խոսում Հիսուսը: Բարեբախտաբար, մենք կարող ենք գտնել այս հարցի պատասխանը: Երեկվա դասն ընդգծում էր, որ դպիրներին ու փարիսեցիներին հատուկ էր ավանդույթները Աստծո օրենքից վեր դասելը: Հիսուսն ստիպված էր ասել նրանց, որ նրանց գործողություններն արժեզրկում են Աստծո պարզ Խոսքը: Երկուշաբթի օրվա դասի մեջ նաև նշված է, որ թեև դպիրների ու փարիսեցիների ուսմունքը, հավանաբար, լավ բովանդակություն ուներ, նրանցից շատերը ապրում էին երեսպաշտի կյանքով:

Հաշվի առնելով այս համատեքստը՝ դժվար չէ սահմանել Հիսուսի ասածի ճշմարիտ իմաստը: Միանգամայն հնարավոր է, որ Նա հիմնվում է Իր մեկ այլ նախազգուշացման վրա՝ «Արդ, ով որ այս ամենափոքր պատվիրանքներից մեկը քանդի և մարդկանց այնպես սովորեցնի, նա փոքրագույն կկանչվի երկնքի արքայությունում» (Մատթեոս 5.19): Փարիսեցիներն այնքան կենտրոնացած էին մարդկային ծագում ունեցող օրենքների վրա, որ ակներևաբար խախտում էին Աստծո օրենքը: Նրանց արդարությունը հիմնված էր սեփական ջանքերի վրա և այդ պատճառով վնասակար էր: Եսայիան վաղուց էր հռչակել, որ մարդկային արդարությունը ավելին չէ, քան աղտոտված հագուստը (Եսայիա 64.6):

Հիսուսին հաճո է սրտից բխող արդարությունը: Ձեռքերը լվանալու դեպքում Նա ցույց տվեց փարիսեցիների սխալը՝ մեջբերելով Եսայիա 29.13-ը. «Այս ժողովուրդը իր բերանովն է մոտենում ինձ, և իր շրթունքներով է ինձ պատվում, իսկ նրանց սիրտը հեռու է ինձանից»: Աստծուն հաճո արդարությունը ավելի խորն է, քան տեսանելի դրսևորումները:

Հիսուսը կոչ է անում փարիսեցիների «արդարությանը» գերազանցող արդարության: Իսկական արդարությունը ձեռք չի բերվում կանոնների ժողովածուի մանրակրկիտ կատարմամբ. այն կարելի է ձեռք բերել միայն Հիսուսի Քրիստոսի հավատով՝ ապավինելով Նրա արդարությանը: Այդ արդարությունը սեփական «Ես»-ը ենթարկելու և Հիսուսի կարիքը՝ որպես մեր Քավչարար Ջոհ և մեր Օրինակ, անկեղծ գիտակցելու արդյունքն է:

Կարդացե՛ք Հռոմեացիս 10.3-ը: Ինչպե՞ս է մեզ օգնում այս համարը՝ հասկանալու ճշմարիտ արդարության էությունը:

Ուրբաթ **ապրիլի 18**

Հետագա ուսումնասիրության համար

Տվյալ թեմայով ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Ավանդույթներ» (395-398), «Ասում եմ ձեզ, փարիսեցիներ» (610-620) գլուխները: Կարդացե՛ք նաև Մատթեոս 23-ը:

«Թո՛ղ բոլորը, ովքեր ընունում են մարդկային հեղինակությունը, եկեղեցու սովորույթները կամ հայրերի ավանդույթները, ականջ դնեն Քրիստոսի նախազգուշացմանը. «Զուր տեղն են պաշտում Ինձ՝ վարդապետություններ սովորեցնելով, որ մարդկանց պատվերներ են» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 398):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ ավանդույթների ենք հետևում մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս: Ինչո՞ւ է կարևոր՝ դրանք հատկապես որպես ավանդույթներ ընդունելը: Ինչո՞ւ են կարևոր ավանդույթները, և ո՞րն է դրանց դերը մեր հասարակության կյանքում: Դրանցից որո՞նք ունեն համընդհանուր

նշանակություն, և որո՞նք են հիմնված տեղական կամ մշակութային գործոնների վրա:

2. «Ոչ հազվադեպ հավատավորները թույլ էին տալիս մարդկային հոգիների թշնամուն՝ իրենց միջոցով կատարել իր գործը՝ հենց այն ժամանակ, երբ հարկավոր էր, որ նրանք իրենց լիովին նվիրեին Աստծուն և Նրա գործի առաջընթացին: Եվ այդ հարցում,առանց իրենց հաշիվ տալու, նրանք շատ էին շեղվել արդարության ճանապարհից: Պահպանելով քննադատության ոգին և թերություններ որոնելով ուրիշների մեջ, ունենալով փարիսեցիական աստվածավախություն և հպարտություն՝ նրանք տրտմեցրին Աստծո Հոգուն և լրջորեն դանդաղեցրեցին Աստծո լրաբերների աշխատանքը» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հատոր 9, 125): Մարդը, «առանց իրեն հաշիվ տալու», ինչպե՞ս է նահանջում արդարության ճանապարհներից: Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկենք մենք՝ ինքաարդարացման որոգայթը չընկնելու համար:

3. Մտորե՛ք ձեր եկեղեցում երկրպագություն անցկացնելու կարգի մասին: Ինչո՞ւ է հենց այդպիսի կարգ սահմանված ձեր համայնքում: Ո՞րն է երկրպագության յուրաքանչյուր բաղադրիչի նշանակությունը (օրինակ՝ քարոզ, փառաբանություն, հովվի աղոթք և այլն): Ի՞նչ դասեր կարող եք քաղել դուք երկրպագության ընթացքից, որոնք օգնում են՝ տեսնելու, թե որքան սերտորեն է ավանդույթը շաղկապված մեր հավատին: Միևնույն ժամանակ մենք պետք է հարցնենք. եթե դա միայն ավանդույթ է և ոչ ավելին, մի՞թե դա վատ է:

ՔՐԻՍՏՈՍՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 5.17-20, Ղուկաս 16.16, Մատթեոս 5.21-32, Հռոմեացիս 7.24, Մատթեոս 5.33-37, 5.38-48:

Հիշելու համարը.

«Մի՛ կարծեք, թե Ես եկա օրենքը կամ մարգարեները քանդելու. Ես չեկա քանդելու, այլ կատարելու: Որովհետև ճշմարիտն ասում եմ ձեզ. մինչև որ երկինքն ու երկիրս անցնեն, օրենքից մի կետ կամ մի փոքրիկ նշանագիր չի անցնի, մինչև որ բոլորը չկատարվի» (Մատթեոս 5.17,18):

Երբ մարդիկ մտածում են Լեռան քարոզի մասին, մեքենայաբար այն կապում են «երանությունների հետ» (Մատթեոս 5.1-12): Սակայն լեռան քարոզը երեք գլուխ է զբաղեցնում, որոնք բաժանվում են չորս մասի: Երանությունները մտնում են միայն առաջին մասի մեջ: Երկրորդում Հիսուսը քրիստոնյաներին համեմատում է լույսի ու աղի հետ (Մատթեոս 5.13-16): Երրորդ մասում Նա ցույց է տալիս օրենքի *նոր*, առավել խորիմաստ կողմը: (Մատթեոս 5.17-48): Հետո գալիս է եզրափակիչ, ամենաերկար մասը (Մատթեոս 6.1-7.23), որտեղ Փրկիչը շարադրում է հստակ ուսմունքը՝ քրիստոնեական վարքի մասին: Քարոզն ավարտվում է իմաստուն և անմիտ շինարարների մասին առակով (Մատթեոս 7.24-27), որն ընդգծում է՝ Աստծո կոչին ականջալուր լինելու կարևորությունը:

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք Լեռան քարոզի երրորդ մասը՝ (Մատթեոս 5.17-48) տեսնելու, թե այն ինչ է ասում օրենքի մասին: Աստվածաբաններն այդ մասն անվանում են «հակաթեզիսներ», քանի որ այստեղ շարադրված են կտրուկ հակադրություններ:

«Ոչ մի կետ կամ ոչ մի փոքրիկ նշանագիր»

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Մատթեոս 5.17-20-ը: Հետաքրքիր է, որ Հիսուսն այստեղ ծանրակշիռ կերպով շեշտադրում է օրենքը և միևնույն ժամանակ մերկացնող հայտարարություն է անում դպիրների ու փարիսեցիների մասին: Ի՞նչ կարևոր դաս է բովանդակվում այս հատվածում՝ օրենքին ճշմարիտ հնազանդվելու մասին: _____

_____

_____

Լեռան քարոզի տվյալ մասը Հիսուսն սկսում է այն հավաստիացումից, որ Ինքը եկել է ոչ թե «օրենքն ու մարգարեները» քանդելու համար (Մատթեոս 5.17): Շատերը Նրա խոսքերն ընկալում են որպես ինչ-որ ստանդարտ արտահայտություն, որը վերաբերում է ողջ Հին Կտակարանին, թեև համարում նշում չկա այդ մասին (տե՛ս նաև Մատթեոս 7.12, 11.13, 22.40, Ղուկաս 16.16, Գործք առաքելոց 13.15, 24.14, Հռոմեացիս 3.21): Չնայելով Իր ընդդիմախոսների այդ հայտարարություններին՝ Հիսուսը չէր գործում այն նույն Գրքի դեմ, որը բացահայտում էր Իր Հոր կամքը: Հակառակը, Նրա նպատակն էր՝ «կատարել» օրենքը և մարգարեները, ոչ թե վերացնել դրանք:

«Կատարել» թարգմանված բառը (պլերոո) բառացիորեն նշանակում է «լցնել» կամ «ավարտել»: Այն փոխանցում է մինչև եզրերը լցվելու իմաստը: «Կատարել»-ը մեկնաբանելու երկու տարբերակ կա: Մեկը շեշադրում է Հիսուսին, Ում մեջ Սուրբ գիրքն ստացավ իր կատարումը (օրինակ՝ Ղուկաս 24.25-27, Հովհաննես 5.39): Սակայն տվյալ համարի ըմբռնման բանալին գտնվում է անմիջական համատեքստում, ինչը ցույց է տալիս, որ Հիսուսն եկավ ոչ թե խախտելու Սուրբ գիրքը, այլ բացահայտելու նրա ներքին էությունը (սա երկրորդ տարբերակն է):

Նշելով Իր համընդգրկուն նպատակը՝ Հիսուսը ողջ Հին Կտակարանից շեշտը փոխադրեց մասնավորապես Օրենքի վրա: Գիտենալով, որ մի անգամ մարդիկ Իրեն մեղադրելու են Օրենքը վերացնելու մեջ, Նա հայտարարում է. քանի դեռ մնում են երկինքն ու երկիրը, օրենքը գոյություն կունենա, «մինչև որ բոլորը կատարվի» (Մատթեոս 5.18): Այդ խոսքով Հիսուսը հաստատում է օրենքի մշտենջանականությունը:

Փաստորեն օրենքն այնքան կարևոր է, որ նրա սկզբունքները բոլոր խախտողները փոքրագույններ են անվանված Նրա թագավորության մեջ: Սա նշանակում է, որ նման մարդիկ առհասարակ չեն լինի Նրա թագավորության մեջ: Մյուս կողմից, օրենքը պահողները կլինեն արքայությունում: Հիսուսն ընդգծում է, որ Աստծուն հարկավոր չէ դպիրների ու փարիսեցիների սին արդարությունը: Նրան հաճո է սրտից բխող արդարությունը, որ սիրում է Աստծուն և ձգտում է կատարել Նրա կամքը:

Երկուշաբթի **ապրիլի 21**

Սպանություն (Մատթեոս 5.21-26)

Նշելով Օրենքը կատարելու Իր մտադրությունը՝ Հիսուսն սկսում է բացատրել, թե որն է դպիրների ու փարիսեցիների արդարությանը գերազանցող արդարությունը: Նա մեջբերում է վեցերորդ պատվիրանը (Ելից 20.13) և Մովսեսի օրենքի հիման վրա խոսում է այն խախտելու պատժի մասին (Ելից 21.12, Ղևտացոց 24.17):

Վեցերորդ պատվիրանում չեն քննարկվում բոլոր դեպքերը, երբ մարդն սպանում է մեկ ուրիշի: Չկանխամտածված սպանության դեպքում մարդը կարող էր փախչել քաղաք-ապաստան և ժամանակավոր ապաստան գտնել (Ելից 21.13, Թվոց 35.12): Սակայն նա, ով կանխամտածված խլում էր մարդու կյանքը, անհապաղ ենթարկվում էր դատաստանի: Իր բացատրության մեջ Հիսուսը կենտրոնանում է ոչ թե բուն արարքի, այլ կատարված հանցագործության դրդապատճառների ու ցանկությունների վրա: Սպանությունը կարող է կատարվել պատահաբար, բայց սպանելու մտադրություն ունեցող մարդն անցել է ծրագրման փուլով: Մեղքը ծնվել է դեռևս նախքան այդ սոսկալի հանցագործության կատարվելը: Շատ հնարավոր հանցագործներ չեն սպանում միայն այն պատճառով, որ այդ հնարավորությունը չունեն:

Կարդացե՛ք Մատթեոս 5.22-ը: Ո՞ր դեպքն է Հիսուսը հավասարեցնում սպանությանը: Ա Հովհաննես 3.15 համարն ինչպե՞ս է ընդգծում այդ միտքը: Ի՞նչ խնդիր է մատնացույց անում Հիսուսը, և դա ի՞նչ է ասում մեզ Աստծո օրենքի ազդեցության ոլորտի մասին: _____

_____

_____

Թեև Աստվածաշունչը հաճախ է խոսում խոսքերի ուժի մասին,

Հիսուսն այստեղ անցնում է առավել խորը մակարդակի: Հաճախ կոպիտ խոսքերի կամ անեծքների միակ նպատակը հասցեատիրոջ մեջ բացասական զբացմունքներ առաջ բերելու ցանկությունն է: Հիսուսի միտքը կատարելապես պարզ է: Սպանության մեղքի մեջ են ո՛չ միայն սպանություն գործողները, այլև նրանք, ովքեր շրջապատողներին կոպիտ խոսքեր են ասում, և անգամ նրանք, ովքեր սպանիչ մտքեր են հղանում: Նման մտքեր հղացող անձանց Հիսուսը խորհուրդ է տալիս հաշտվել իրենց հնարավոր զոհերի հետ՝ զոհասեղանի մոտ գալուց առաջ (Մատթեոս 5.23-26):

Խորհե՛ք այսօրվա տեքստերում ընթերցված՝ Հիսուսի խոսքերի նշանակության մասին: Որքանո՞վ է հաջողվում ձեզ՝ հետևել Նրա խորհուրդներին: Ի՞նչ են ասում ձեզ այդքան բարձր պահանջները՝ Քրիստոսի արդարությամբ անդադար ծածկված լինելու անհրաժեշտության մասին:

Երեքշաբթի **ապրիլի 22**

Շնություն (Մատթեոս 5.27-32)

Հիսուսի հետևյալ խոսքերը վերաբերում են շնության մասին պատվիրանին: Սկզբում Նա մեջբերում է յոթերորդ պատվիրանը. «Մի՛ շնացիր»: Մովսեսի օրենքի համատեքստում շնությունը կատարվում էր, երբ ամուսնացած մարդը ինտիմ հարաբերության մեջ էր մտնում որևէ մեկի հետ՝ բացի իր ամուսնուց: Օրենքը միանգամայն հստակ կերպով խոսում էր այն մասին, որ շնության մեջ մեղավոր երկու կողմերն էլ պետք է մահապատժի ենթարկվեն: Ինչպես և վեցերորդ պատվիրանի դեպքում, Հիսուսը բացահայտում էր այս կոնկրետ պատվիրանի առավել խորը իմաստը:

Հաճախ շնությունը սկսվում է որոշակի արարքների իրականացումից ոչ շատ առաջ: Ինչպես սպանությունն է ծնվում մարդուն անուղղելի վնաս հասցնելու մտադրությունից, այնպես էլ շնությունն է ծնվում այն նույն պահին, երբ մարդն սկսում է ցանկասիրաբար երազել մեկ այլ մարդու, ում հետ ինքը ամուսացած չէ:

Կարդացե՛ք Մատթեոս 5.29,30-ը: Կարելի՞ է առավել համոզիչ կերպով նկարագրել մեղքի վտանգավորությունը: Կարդացե՛ք նաև Հռոմեացիս 7.24-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են բովանդակվում համարտեքստում: _____

_____

Այստեղ Հիսուսը մեղքերի, մասնավորապես՝ շնության մեղքի դեմ գործուն միջոց է առաջարկում: Մարդու որոշումը պետք է լինի ոչ թե մեղավոր արարք թույլ տալը կամ թույլ չտալը, այլ արմատական «ինքնավիրահատություն» իրականացնելը: Օգտագործելով հզոր փոխաբերություններ՝ Հիսուսը վերոհիշյալ խնդիրներն ունեցող մարդուն խորհուրդ է տալիս անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել, եթե նա ցանկանում է մտնել Աստծո արքայությունը: Դա կարող է նշանակել նոր աշխատանքի որոնում կամ ցանկալի ընկերության դադարեցում, բայց հավիտենական պարգևն անհամեմատ ավելի թանկ արժե, քան տվյալ պահին փոթորկվող բոլոր կրքերը: Վավաշոտ հայացք ունեցող ամուսնացած տղամարդկանց կոչ անելով վերահսկել իրենց դրդումները՝ Հիսուսն արտահայտվեց ի պաշտպանություն ամուսնական հավատարմության՝ ողջ կյանքի ընթացքում:

«Աստծո կամքին լիակատար հնազանդությունը պատկերավոր կերպով համեմատվում է աչքը հանելու կամ ձեռքը կտրելու հետ: Մեզ հաճախ թվում է, թե սեփական կամքն Աստծուն հնազանդեցնելը նշանակում է համաձայնել՝ ապրելու հաշմված կամ խեղված կյանքով: Բայց Քրիստոսն ասում է. ձեզ համար ավելի լավ է, որ ձեր սեփական «ես»-ը հաշմվի, վիրավորվի ու խեղվի, եթե դա կնպաստի հավիտենական կյանք մտնելուն: Այն, ինչ հաճախ թվում է դժբախտություն, իրականում ծառայում է մեծագույն բարիքին» (է. Ուայթ, Երջանիկ կյանքի կանոնները, 61): Ի՞նչ են նշանակում այս բառերն անձամբ ձեզ համար:

Չորեքշաբթի ապրիլի 23

Խոստումներ, խոստումներ... (Մատթեոս 5.33-37)

Առաջին երկու հակադրույթները (սպանություն և շնություն) հիմնված են Տասնաբանյայի վրա: *Ամուսնալուծությանը, կեղծ երդմանը* և *Ամբոխ առջև տրված երդումը կատարելուն* վերաբերող հակադրույթները հիմնված են Մովսեսի օրենքի մյուս բաժինների վրա:

Կարդացե՛ք Ղևտացոց 19.11-13-ը: Ի՞նչ կարևոր պահեր ենք մենք գտնում այստեղ: Տե՛ս նաև Ելից 20.7-ը: _____

_____

Մովսիսական օրենքը, որից մեջբերում է անում Հիսուսը, գրի է առնված Ղևտացոց գրքի այն բաժնում, որտեղ դատապարտվում են

տարբեր տեսակի մեքենայությունները: Հիսուսի խոսքերից պարզ է, որ Նրան հուզում են *մտադրությունները*: Ցանկացած մարդ, ով խոստում է տալիս, բայց մտադիր չէ կատարել այն, գիտակցաբար որոշում է ընդունում հօգուտ մեղքի:

Այն ժամանակ, երբ կեղծ երդման վերաբերյալ հրամանը վերաբերում է այլ մարդկանց տրված խոստումներին, երկրորդ հրամանը վերաբերում է Աստծուն տրված խոստումներին:

Կարդացե՛ք երկրորդ Օրինաց 23.21-23-ը: Այս համարներն ինչպե՞ս են փոխհամաձայնեցվում Մատթեոս 5.33-37-ում Հիսուսի ցուցումների հետ: Տե՛ս նաև Գործք առաքելոց 5.1-11-ը: _

Ի տարբերություն նրա, թե ով է մեղավոր կեղծ երդման մեջ, Աստծուն՝ ֆինանսների հետ կապված խոստում տվող մարդը պարտադիր չէ, որ խորամանկելու մտադրություն ունենա: Սակայն Հիսուսը գիտի մարդկային էությունը և զգուշացնում է այն խոստումներից, որոնց համար հետագայում մարդը կարող է զղջալ: Անանիայի և Սափիրայի պատմությունը, ովքեր Աստծուն խոստում էին տվել՝ այն կատարելու լիակատար մտադրությամբ, բայց հետո փոխեցին իրենց միտքը և աստվածային մահապատիժն ստացան, հզոր օրինակ է այն բանի, թե ինչպես է Աստված վերաբերվում այդ մեղքին: Խոստումներ տալու փոխարեն, որոնց կատարումը կարող է անգամ մեր ուժերից վեր լինել, քրիստոնյան պետք է ազնիվ մարդ լինի, ում «այո»-ն նշանակում է «այո», իսկ «ոչ»-ը՝ «ոչ»:

Խորհե՛ք ձեր խոստման մասին (մարդուն կամ Աստծուն), որը դուք մտադիր էիք կատարել, բայց չկատարեցիք: Ինչպե՞ս սովորենք ավելի զգուշորեն վերաբերվել այս հարցին: Ի՞նչ կասեք ինքներդ ձեզ տված և նույնպես չկատարած խոստումների մասին:

Հինգշաբթի **ապրիլի 24**

Հատուցման օրենքը (lex talionis) (Մատթեոս 5.38-48)

Առաջին հայացքից թվում է, թե ողջ հատվածի գլխավոր թեման վրեժխնդրությունն է (Մատթեոս 5.38-48): Այս թեման վերաբերում է Մովսիսական օրենքում գրի առնված շատ հրամանների, որոնք վերա-

բերում են հանցագործության դիմաց համարժեք հատուցման սկզբունքին: Տվյալ սկզբունքն արտահայտվում է լատիներեն *lex talionis* եզրույթով, ինչը նշանակում է «հատուցման օրենք»:

Ինչպես մենք տեսնում ենք մի շարք հատվածներում (Ելից 21.22-25, Ղևտացոց 24.17-21, Երկրորդ Օրինաց 19.21), օրենքը կոչ է անում, որ հանցագործը վերապրի այն նույնը, ինչ և իր զոհը: Եթե զոհը զրկվում էր աչքից, ձեռքից, ոտքից կամ կյանքից, դրանից պետք է զրկվեր նաև հանցագործը: Այդպիսի «հատուցման օրենքը» գործում էր մի շարք հին քաղաքակրթություններում: Իսկ ինչո՞ւ ոչ. չէ՞ որ այնտեղ կարծես արտահայտված է արդարացիության պարզ սկզբունքը:

Կարևոր է հասկանալ, որ այդ սկզբունքը հարկավոր էր այն բանի համար, որ *սահմանափակվի* հատուցումը, զսպվի մարդկանց չափազանցված արձագանքը՝ իրենց հասցված վնասին, բացի այն արձագանքից, որի օրինական իրավունքը իրենք ունեն: Այդպիսով, օրենքը պետք է երաշխավորեր արդարադատության ճիշտ, և ոչ թե խեղաթյուրված կատարումը:

Այդ պատճառով Մատթեոս 5.38-42-ում Հիսուսը հարցականի տակ չի դնում հանցանքի դիմաց մարդու պատիժը պահանջող օրենքի լեգիտիմությունը: Նա կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպիսին պետք է լինի քրիստոնյաների վերաբերմունքը իրենց հետ անարդարացի վարվողների հանդեպ: Վերժխնդրության հնարավորություն որոնելու փոխարեն՝ քրիստոնյաները պետք է վիրավորողին բարությամբ հատուցեն: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե ձեր մեջ գործում է Աստծո շնորհը: Իր կոչում Հիսուսը փորձում է մեզ հասցնել այն առավել բարձր ըմբռնմանը, թե ինչ է նշանակում լինել Տիրոջ հետևորդը:

Եզրափակիչ հակաթեզիսը վերաբերում է բարեկամների հանդեպ սերը և թշնամիների հանդեպ ատելությունը խրախուսող դիրքորոշմանը: Մերձավորին սիրելու պատվիրանը գրի է առնված Ղևտացոց 19.18-ում, բայց գոյություն չունի որևէ որոշակի աստվածաշնչյան համար տեքստ, որը կոչ է անում ատել թշնամիներին, այդ միտքը չկա նաև Երկրորդ Օրինաց 23.3-6-ում:

Հիսուսի ժամանակներում հրեաները գտնվում էին հռոմեացիների իշխանության ներքո և, ըստ էության, «երկրորդ տեսակի» քաղաքացիներ էին սեփական երկրում: Հալածանքներ վերապրելով՝ նրանք, հավանաբար, համարում էին, որ արդարացի են վարվում՝ ատելով իրենց թշնամիներին, ովքեր դաժանորեն ճնշում են իրենց: Հիսուսը նրանց ցույց տվեց կյանքի ուղին անգամ ամենևին էլ ոչ իդեալական պարագաներում:

Կարդացե՛ք Մատթեոս 5.44,45-ը: Ի՞նչ է ասում այստեղ Հիսուսը: Ինչպե՞ս կարող ենք այս ուսմունքը կիրառել մեր կյանքում՝ նրանց հանդեպ, ովքեր մեզ նեղացնում են:

Ուրբաթ ապրիլի 25

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Լեռան քարոզը» գլուխը (298-314):

«Հիսուսը յուրաքանչյուր պատվիրան դիտարկում է առանձին՝ բացատրելով դրանց իմաստի ողջ լայնությունն ու խորությունը: Չփոխելով օրենքի ոչ մի մասնիկ՝ Հիսուսը ցույց է տալիս, թե ինչ կարևոր սկզբունքներ են դրված այդ պատվիրաններում, և բացահայտում է հրեաների ճակատագրական սխալը, ովքեր Աստծուն հնազանդվում էին միայն արտաքուստ: Նա ասում է, որ չար մտադրությունը կամ վավաշոտ հայացքը Աստծո օրենքի խախտում են: Ամեն մեկը, ով փոքրագույն անարդարություն է թույլ տալիս, խախտում է օրենքը և բարոյապես հետընթաց է ապրում: Սպանությունը նախ ծնվում է մտքում: Նա, ով իր սրտում ատելություն է կրում, ոտք է դնում մարդասպանի ուղին, և նրա ընծաները նողկալի են Աստծո համար (Է. Ուայթ, Դարերի փափագը, 310):

Սերը Աստծո օրենքի կապակցող սկզբունքն է: Յուրաքանչյուր հակադրույթում Հիսուսը բարձրացնում է սիրո սկզբունքը. սերը մարդուն հետ է պահում մերձավորի հանդեպ ատելությունից, սերը պահպանում է ամուսնու և կնոջ հավատարմությունը միմյանց հանդեպ, սերը քրիստոնյային դրդում է միշտ ազնիվ լինել մարդկանց և Աստծո հետ փոխհարաբերություններում, սերը մարդուն թույլ է տալիս արձագանքել բարյացակամորեն, երբ իր հետ սխալ են վարվել, և սերը մարդուն ուժ է տալիս՝ թշնամուն վերաբերվել այնպես, ինչպես ինքը կցանկանար, որ իրեն վերաբերվեն:

Հարցեր քննարկման համար

1. Այս շաբաթ մենք քննարկում էինք Հիսուսի հակաթեզիսները. «Լսել եք, որ առաջիններին ասվեց… իսկ Ես ասում եմ ձեզ»: Ուշադրություն դարձրե՛ք, որ «առաջիններին» ուղղված որոշ հրահանգներ ուղղակի մեջբերումներ էին Աստվածաշնչից: Եվ խնդիրը ոչ թե աստվածա-

շնչյան տեքստերում էր, այլ այն բանում, թե ինչպես էին նրանք հասկանում: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել սրանից ՝ եթե ոչ մեր դավանաբանության, ապա այն ըմբռնելու առումով: Մենք ինչպե՞ս կարող ենք հայտնվել աստվածաշնչյան ճշմարտություններին չափազանց մակերեսորեն մոտենալու և դրանց խոր իմաստը աչքաթող անելու վտանգի մեջ:

2. Շատերը սխալ են գործում՝ մեկնաբանելով աստվածաշնչյան համարները՝ դրանց համատեքստից անկախ: Այդպիսի համարներից մեկը Մատթեոս 5.48-ն է, որտեղ ասված է, որ մենք կատարյալ լինենք, ինչպես կատարյալ է մեր երկնային Հայրը: Այս համարի մեկնաբանությունը իր անմիջական համատեքստում (Մատթեոս 5.13-18) ինչպե՞ս է վկայում Աստվածաշնչի ուշադիր հետազոտության կարևորության մասին: Դուք ինչպե՞ս կպատասխանեիք այն մարդուն, ով համարում է, որ այս համարը անմեղություն է սովորեցնում: Իրականում ի՞նչ է սովորեցնում այս համարը, և ինչո՞ւ է այդ ուսմունքը բացահայտում Քրիստոսին հետևելու իսկական նշանակությունը:
3. Մեր ուսումնասիրած համարները, մասնավորապես սպանության և շնության մասին, օգնում են տեսնել նրանց մոլորությունը, ովքեր համարում են, որ Քրիստոսի մահից հետո օրենքը վերացվել է:

ՔՐԻՍՏՈՍՆ ՈՒ ՇԱԲԱԹԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 2.1-3, Եբրայեցիս 1.1-3, Գործք առաքելոց 13.14, Մարկոս 2.23-28, Հովհաննես 5.1-9, Եսայիա 65.17:

Հիշելու համարը.

«Եվ նրանց ասաց. Շաբաթը մարդու համար եղավ, և ոչ թե մարդը շաբաթի համար: Ուրեմն Մարդի Որդին շաբաթի էլ Տերն է» (Մարկոս 2.27,28):

Քրիստոնեական հարանվանությունների ճնշող մեծամասնությունը կիրակին համարում է հանգստի ու երկրպագության օր (թեև հիմնականում կիրակին պահողներն իրականում չեն երկրպագում այդ օրը): Կիրակին «պահելը» այնքան է գերիշխում ժամանակակից քրիստոնյաների մեջ, որ շատերն այդ օրը ընկալում են որպես «քրիստոնեական շաբաթ»:

Բայց միշտ չէ, որ այդպես է եղել: Փաստորեն հանդիսանալով իսրայելյան հավատի շարունակությունը՝ քրիստոնեությունը չի կորցրել իր «ծնողական» կրոնի բոլոր խորհրդանիշները, այն սկզբում չի վերացրել նաև յոթերորդ օրը՝ շաբաթը: Որոշ ժամանակ միակ Աստվածաշունչը, որով ղեկավարվում էին առաջին քրիստոնյաները, եղել է Հին Կտակարանը: Զարմանալի չէ, որ երկրպագության այլընտրանքային օրվա հարցը քրիստոնեության մեջ չի ծագել Քրիստոսի երկինք համբարձվելուց ի վեր ավելի քան մեկ դար: Միայն չորրորդ դարում, համաձայն հռոմեական Կոնստանտին կայսեր հրամանագրի, կիրակին պահելը դարձավ գերիշխող եկեղեցու հրահանգ: Ցավոք, անգամ բողոքական բարենորոգումից հետո, գրեթե բոլոր քրիստոնյաները շարունակում են պահել կիրակի օրը՝ չնայելով աստվածաշնչյան ուսմունքին այն մասին, որ ճշմարիտ շաբաթ մնում է յոթերորդ օրը:

Այս շաբաթվա դասը նվիրված է Քրիստոսի և շաբաթ օրվա մասին թեմային:

Հրեական շաբա՞թ (Ելից 20.8-11)

Թեև շատերը յոթերորդ օրը համարում են «հրեական շաբաթ», Աստվածաշունչը բացահայտում է, որ շաբաթ օրը գոյություն ունի հրեաներից շատ հարյուրամյակներ առաջ: Այն իր սկզբնավորումն է ստացել հենց Արարումից:

Ծննդոց 2.1-3-ում ասված է. այն բանից հետո, երբ Աստված վեց օրում կատարեց արարման գործընթացը, Նա հանգստացավ յոթերորդ օրը, հետո Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբեց այն: Սա հստակ կերպով վկայում է շաբաթ օրվա բարձր կարգավիճակի մասին՝ Աստծո արարչագործության մեջ: Բացի այն բանից, որ Աստված օրհնեց շաբաթը, Նա նաև սրբեց այն: Այլ խոսքերով՝ ժամանակի մեջ Աստված այդ հուշարձանը օժտեց Իր որոշ հատկանիշներով:

Համեմատե՛ք շաբաթօրյա պատվիրանի երկու շարադրանքները Ելից 20.8-11-ում և Երկրորդ Օրինաց 5.12-15-ում: Այս համարներին համապատասխանո՞ւմ է տեսությունն այն մասին, որ շաբաթը տրված է միայն հրեաներին: _____

_____

_____

Այս երկու շարադրանքների միջև ամենաակնառու տարբերությունը շաբաթը պահելու հիմնավորման մեջ է: Ելից գրքում ուղղակի հղում է արվում Ծննդոց 2.3-ին, և ընդգծվում է այն փաստը, որ Աստված «օրհնեց» և «սրբեց» շաբաթ օրը: Մյուս կողմից, Երկրորդ Օրինաց 5.15 համարը ցույց է տալիս Իսրայել ժողովրդի աստվածային ազատագրումը եգիպտական ստրկությունից՝ որպես շաբաթ օրը պահելու հիմնավորում: Հիմնվելով Երկրորդ Օրինաց գրքի այս համարի վրա՝ շատերը համարում են, թե շաբաթը տրված է միայն հրեաներին: Սակայն այդպիսի փաստարկումն անտեսում է այն փաստը, որ Ելից գրքի տեքստը մատնացույց է անում արարումը, երբ Աստված շաբաթը սահմանեց ողջ մարդկության համար:

Ավելին, Երկրորդ Օրինաց 5.15-ում ստրկությունից ազատագրման մասին հիշատակումը ծառայում է որպես այն փրկության խորհրդանիշ, որ մենք ունենք Քրիստոսում: Այդ պատճառով շաբաթը ոչ միայն արարման, այլ նաև փրկագնման խորհրդանիշ է. Աստվածաշնչում այս երկու թեմաները կապակցված են (Եբրայեցիս 1.1-3, Կողոսացիս 1.13-20, Հովհաննես 1.1-14): Միայն այն բանի շնորհիվ, որ Հիսուսը մեր

Արարիչն է, Նա նաև կարող է լինել մեր Փրկիչը, և յոթերորդ օրը՝ շաբաթը, ծառայում է որպես Նրա այս երկու գործողությունների խորհրդանիշ:

Յուրաքանչյուրը կարող է հանգիստ գտնել Քրիստոսում: Ինչպե՞ս է օգնում ձեզ յոթերորդ օրը՝ շաբաթը պահելը՝ այդ հանգիստը ձեռք բերելու հարցում:

Երկուշաբթի **ապրիլի 28**

Հանգստի ու երկրպագության ժամանակը (Ղուկաս 4.16)

Համաձայն Կողոսացիս 1.16 և Եբրայեցիս 1.2 համարների՝ նախքան Իր մարմնացումը՝ Քրիստոսը՝ որպես Արարիչ, անմիջականորեն մասնակցել է Տիեզերքի արարման գործընթացին: Այդ համարները վկայում են, որ ամեն արարվածը սկսեց գոյություն ունենալ «Նրանով»: Հետո Պողոսը հայտնում է. Քրիստոսը նաև մասնակցել է «անտեսանելիի» արարմանը (Կողոսացիս 1.16,17), ինչը, իհարկե, ներառում է նաև շաբաթը: Թեև Քրիստոսը գլխավոր տեղ էր զբաղեցնում արարման գործընթացում, սակայն, մարմնավորվելով մարդկային էությամբ, Նա Իրեն հնազանդեցրեց Իր Հոր պատվիրաններին (Հովհաննես 15.10): Ինչպես տեսանք նախորդ դասերում, Հիսուսը դիմակայում էր առանձին ավանդույթների և օգտագործում էր ամեն հնարավորություն, որպեսզի ուղղի Աստծո կամքի վրա չհիմնված կրոնական վարքը: Եթե Հիսուսը մտադիր լիներ վերացնել շաբաթ օրվա պատվիրանը, Նա այդ անելու բազում հնարավորություններ ուներ:

Հինկտակարանյան գրքերի մեծ մասը շաբաթվա մասին խոսում են որպես հանգստի օրվա: «Հանգստի» ըմբռնումը ժամանակակից շատ լեզուներում գուցե մարդկանց մեջ ստեղծի այն կարծիքը, որ շաբաթը հարկավոր է անցկացնել քնած ու թուլացած վիճակում: Սակայն հանգստի իսկական նշանակությունն է՝ «կանգառ», «աշխատանքի դադար», «ընդմիջում»: Շաբաթը ժամանակ է, երբ մենք կարող ենք դադարեցնել առաջին վեց օրերի առօրյա աշխատանքը և առանձնահատուկ ժամանակ անցկացնել Արարչի հետ:

Քրիստոսի ժամանակներում հրեաները յուրաքանչյուր շաբաթ օր առանձնահատուկ երկրպագություն էին կատարում (տե՛ս Ղուկաս 4.16): Երուսաղեմի բնակիչները աղոթքի ժողովներն անց էին կացնում տաճարում, որտեղ շաբաթ օրերի ծառայության ընթացքը տարբերվում

էր շաբաթվա մյուս օրերի ծառայության ընթացքից: Աշխարհի մյուս մասերում բնակվող հրեաների համար հասարակական ժողովի ու երկրպագության վայրը ժողովարանն էր: Շաբաթ օրերին, եթե ժողովարանում ներկա էին լինում առնվազն տասը չափահաս տղամարդ (*մինյան*), կարող էր երկրպագություն անցկացվել:

Ի՞նչ են ասում մեզ հետևյալ համարներն առաջին քրիստոնյաների կողմից շաբաթը պահելու մասին: Սա ի՞նչ է ասում մեզ այն պնդման մասին, որ շաբաթը փոխվել է կիրակիի՝ ի պատիվ Քրիստոսի հարության: Գործք առաքելոց 13.14,42,44, 16.13, 17.2, 18.4, Եբրայեցիս 4.9: _____

_____

_____

_____

Հրեական արմատներ ունեցող առաջին քրիստոնյաների համար կատարելապես բնական էր Հին Կտակարանում կարգադրված օրը երկրպագելը: Անգամ Քրիստոսի համբարձումից քսան տարի հետո Պողոսը շարունակում էր «իր սովորության պես» շաբաթ օրերին գնալ ժողովարան (Գործք առաքելոց 17.2): Այդպիսով, մենք ոչ մի աստվածաշնչյան վկայություն չունենք այն բանի օգտին, որ առաջին քրիստոնյաները շաբաթ օրվա փոխարեն պահում էին կիրակին:

Երեքշաբթի **ապրիլի 29**

Ուրախության ժամանակը (Մարկոս 2.27,28)

Իրենց կողմից շաբաթ օրը պահելու մասին հայտարարող շատ մարդիկ միշտ չէ, որ հասկանում են, թե ինչ է նշանակում շաբաթ օրը պահելը: Հիսուսի ժամանակվա որոշ փարիսեցիների նման՝ մարդիկ այսօր էլ շաբաթը շրջափակում են կանոնների ու արգելքների պատնեշներով (այն ժամանակ, երբ ուրիշների համար այդ օրը դադարել էր որևէ բանով տարբերվել մյուսներից): Շաբաթը պետք է ուրախություն լինի, ոչ թե բեռ, և միևնույն ժամանակ՝ օր, որն անհրաժեշտ է սրբորեն պահել:

Հիսուսի երկրային կյանքի ժամանակ որոշ կրոնական առաջնորդներ շաբաթը շրջապատել էին 39 լրացուցիչ պատվիրաններով: Նրանք համարում էին, որ եթե մարդիկ կարողանան պահել այս 39 պատվիրանները, այդ ժամանակ նրանք կատարելապես կպահեն շաբաթը: Ունենալով բարի մտադրություններ և ստեղծելով բազում լրացուցիչ

օրենքներ՝ մարդիկ շաբաթը վերածել էին ուժից վեր բեռի, այնինչ այն պետք է ուրախություն բերեր իրենց:

Ուշադիր կարդացեք Մարկոս 2.23-28-ը: Աշակերտներն ինչո՞ւ էին պոկում հասկերը: Տեքստը խոսո՞ւմ է այն մասին, որ Հիսուսը մասնակցում էր դրան՝ նրանց հետ միասին: Խախտվե՞լ է որևէ աստվածաշնչյան օրենք: _____

_____

_____

Երբ մի շաբաթ օր Հիսուսն ու Իր քաղցած աշակերտներն անցնում էին դաշտով, աշակերտները որոշեցին իրենց քաղցը հագեցնել ցորենով: Թեև դա իրենց դաշտը չէր, նման արարքները Մովսիսական օրենքով միանգամայն թույլատրելի էին (տե՛ս Երկրորդ Օրինաց 23.25): Իսկ փարիսեցիները նրանց արարքի մեջ Մովսիսական մեկ այլ օրենքի խախտում տեսան, որն արգելում էր շաբաթ օրերին ցանք ու հունձ անելը (տե՛ս Ելից 34.21): Ակնհայտորեն, Հիսուսը հասկեր չէր պոկում, սակայն հանդես եկավ հօգուտ Իր աշակերտների: Հիսուսը փարիսեցիներին հիշեցնում էր այն մասին, որ անգամ Դավիթն ու իր մարդիկ, քաղցած լինելով, կերան սրբարանի «արգելված» հացերը:

Մարկոսի ավետարանում՝ 2.27,28-ում, Հիսուսն ասաց, որ շաբաթը ստեղծված է մարդու բարօրության համար, ոչ թե մարդը՝ շաբաթի համար: Այլ խոսքերով, շաբաթն արարված է ոչ թե այն բանի համար, որ նրան երկրպագեն, այլ նրա համար, որ Աստծուն երկրպագելու հնարավորություն տրվի մարդկանց: Որպես Աստծո պարգև՝ *ողջ* մարդկության համար, շաբաթը նախատեսված է ոչ թե հալածանքի, այլ ազատագրման ու ազատության համար: Սա իսկապես Քրիստոսում խաղաղություն և ազատություն զգալու հնարավորություն է:

Դուք ի՞նչ կարող եք անել շաբաթ օրը, ինչ սովորաբար չի ստացվում անել շաբաթվա մյուս օրերին: Խորհեցե՛ք այս հարցի մասին և պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրը՝ դասի ժամանակ:

Չորեքշաբթի **ապրիլի 30**

Ապաքինման ժամանակը (Ղուկաս 13. 16)

Երբ Աստված արարեց մեր աշխարհը, Նա ազդարարեց, որ ամեն բան «շատ բարի էր» (Ծննդոց 1.31), ամեն բան կատարյալ էր բոլոր

առումներով: Սակայն մեղքը փչացրեց արարչագործությունը, և չարի ազդեցությունը մենք տեսնում ենք ամենուրեք: Թեև մարդիկ արարված էին Աստծո պատկերով, նրանք սկսեցին հիվանդանալ, ծերանալ և մահանալ: Մենք հաճախ ասում ենք, որ մահը կյանքի մի մասն է, բայց մահը կյանքի բացակայությունն է, ոչ թե նրա մասը: Մահը երբեք չպետք է մեր փորձառությունը դառնար:

Հիշելով մարդկության վերաբերյալ Աստծո նախասկզբնական ծրագրի մասին՝ կարելի է չզարմանալ, թե ինչու որոշ, ամենադրամատիկ բժշկությունները Հիսուսը կատարում էր հատկապես շաբաթ օրը:

Վերլուծե՛ք, թե Հիսուսը ում բժշկեց շաբաթ օրը. Մարկոս 3.1-6, Ղուկաս 13.10-17, Հովհաննես 5.1-9, 9.1-14: Այս հրաշքներն ի՞նչ դասեր են տալիս մեզ շաբաթ օրվա ճշմարիտ նպատակի մասին: _____

_____

_____

_____

Շաբաթ օրը կատարված ամեն մի ապաքինման հրաշք չափազանց տպավորիչ է և բացահայտում է շաբաթ օրվա ճշմարիտ նշանակությունը: Նախքան չորացած ձեռքով մարդուն բժշկելը՝ (Մարկոս 3.1-6) Նա հռետորական հարց տվեց. «Արժա՞ն է շաբաթ օրը բարի գործել, թե՞ չար գործել. մի հոգի ապրեցնե՞լ, թե՞ սպանել» (Մարկոս 3.4): Եթե մարդը հնարավորություն ունի տառապանքները թեթևացնել ազատագրման օրը, ինչո՞ւ չանել դա: Փաստորեն կծկված կնոջ հետ տեղի ունեցած հրաշքը, կին, ով չէր կարողանում ուղղել մեջքը, մեծազոր կերպով ցուցադրում է շաբաթ օրվա ազատագրող զորությունը (Ղուկաս 13.10-17): Երբ Հիսուսին քննադատում էին այդ ապաքինման համար, Նա հարցրեց. «Բայց սա, Աբրահամի աղջիկ լինելով, որին սատանան ահա արդեն տասնութ տարի է, որ կապել էր, արժանի չէ՞ր, որ շաբաթ օրն այն կապանքից արձակվեր» (Ղուկաս 13.16):

Ազատագրման թեման երևում է նաև Բեհեզդայի ավազանի մոտ պառկած մարդու ապաքինման մեջ, ով հիվանդ էր 38 տարի (Հովհաննես 5.1-9), ինչպես նաև՝ ի ծնե կույրի ապաքինման մեջ (Հովհաննես 9.1-14): Ի պատասխան փարիսեցիների մեղադրանքների այն մասին, որ Հիսուսն իր հրաշալի բժշկություններով խախտում էր շաբաթը՝ Նա հիշեցնում էր նրանց. «Իմ Հայրը մինչև հիմա գործում է, և Ես էլ գործում եմ» (Հովհաննես 5.17): Եթե Աստված թույլ չտար, որ ապաքինումը տեղի ունենար, այն չէր կատարվի: Երբ խոսքը վերաբերում է մարդկային տառապանքներին, Աստված հանգստի մեջ չէ:

Խորհեցե՛ք Հիսուսի օրերի կրոնական առաջնորդների նախապաշարմունքների մասին: Նախապաշարմունքներն ինչպե՞ս կարող են խանգարել մեզ՝ տեսնելու ամենաակնհայտ ճշմարտությունները:

Հինգշաբթի մայիսի 1

Նոր արարչագործություն

Շաբաթ օրը ոչ միայն հիշեցնում է մեզ Աստծո արարչագործ զորության մասին, այլ նաև մատնանշում է վերականգնման մասին Նրա խոստումը: Իսկապես, շաբաթ օրն իրագործված յուրաքանչյուր ապաքինման հետ հզորապես հաստատվում էր հավիտենական վերականգնման մասին խոստումը: Շաբաթ օրը անկրկնելիորեն պատկերում է այն համայնապատկերը, որը հասնում է երկրի վաղ պատմությանը և տարածվում է առաջ՝ դեպի մարդկության հավիտենական ճակատագիրը: Մենք կրկին տեսնում ենք, որ շաբաթը մատնացույց է անում ինչպես արարումը, այնպես էլ՝ փրկագնումը:

Աստված մի անգամ արդեն ստեղծել է այս աշխարհը: Սակայն մեղքը փչացրել է Նրա արարչագործությունը, սակայն այդ վիճակը հավիտյան չի տևելու: Փրկության ծրագրի հիմնարար բաղադրիչը ոչ միայն բուն երկրի, այլև, որ ավելի կարևոր է, մարդկանց՝ Նրա կերպարով ստեղծված արարածների վերականգնումն է: Նրանք կվերականգնվեն ըստ այդ նույն կերպարի և կբնակվեն Նոր Երկրում: Այն նույն Աստված, Ով ի սկզբանե արարել էր երկիրը և Ում գործերը մենք փառաբանում ենք ամեն օր և հատկապես շաբաթ օրը, կվերաարարի այն: (Խորհեցե՛ք, թե որքան կարևոր է հիշել մեր արարման մասին, եթե մեզ հրամայված է ամեն շաբաթ առանձնահատուկ կերպով հիշել այդ մասին):

Կարդացե՛ք հետևյալ համարները: Ի՞նչ լուր է բովանդակում յուրաքանչյուր համարը, և ինչպե՞ս է այն իր նշանակությամբ կապված շաբաթ օրվա հետ:

Եսայիա 65.17 _____

Եսայիա 66.22,23 _____

Բ Պետրոս 3.9-13 _____

Հայտնություն 21.1 _____

Բ Կորնթացիս 5.17 _____

Գաղատացիս 6.15 _____

Հայտնություն 21.5

Շաբաթը «վկայում է. Նա, Ով արարել է ամեն բան երկնքում և երկրի վրա, Ով ամեն բան պահում է, եկեղեցու գլուխն է, և Նրա զորության շնորհիվ ենք մենք հաշտված Աստծո հետ… Այդ պատճառով շաբաթ օրը մեզ սրբագործող Քրիստոսի զորության խորհրդանիշն է: Շաբաթը տրվում է ամենքին, ում սրբագործում է Քրիստոսը: Որպես Նրա սրբագործող զորության նշան՝ շաբաթը տրված է բոլորին, ովքեր Քրիստոսի միջոցով դառնում են Աստծո Իսրայելի մի մասը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 288,289):

Դուք կոնկրետ ի՞նչ կարող եք ձեռնարկել՝ թույլ տալու Աստծո զորությանը՝ սրբագործել ձեզ: Դուք ի՞նչ որոշումներ եք ընդունում ամեն օր, որոնք կա՛մ նպաստում, կա՛մ էլ խոչընդոտում են ձեր ներսում կատարվող ստեղծագործական գործընթացին:

Ուրբաթ մայիսի 2

Հեպագա ուսումնասիրության համար

«Երկնքում մեծ պայքարի հենց սկզբից սատանայի մտադրությունն էր՝ տապալել Աստծո Օրենքը: Հենց այդ նպատակով էլ Նա ապստամբեց Արարչի դեմ և, վտարված լինելով երկնքից, այդ նույն պայքարը շարունակում է երկրի վրա: Մարդկանց գայթակղել և նրանց ստիպել, որ խախտեն Աստծո օրենքը՝ ահա այն նպատակը, որին նա համառորեն ձգտում է: Դա ձեռք է բերվում ողջ օրենքի ոտնահարմա՞մբ, թե՞ խախտվում է պատվիրաններից միայն մեկը՝ վերջին հաշվով արդյունքը միևնույնն է: «Մի բանում մեղանչողը» արհամարհական վերաբերմունք է դրսևորում ողջ օրենքի հանդեպ. իր ազդեցությամբ և օրինակով նա խրախուսում է անօրենությունը և «ողջ օրենքին է դառնում պարտական» (Հակոբոս 2.10)» (Է. Ուայթ, Մեծ Պայքար, 582):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք ուրբաթ օրվա դասում բերված էլեն Ուայթի պնդման մասին, որը այս եռամսյակի թեմայի ներածության մեջ օգտագործված հղման առավել լիարժեք մեջբերումն է: Քրիստոնյաների մեծամասնության վերաբերմունքը շաբաթ օրվա հանդեպ ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու Աստծո օրենքի վրա սատանայի հարձակումները:

2. Ստորև բերված համարներում հայտնվում է, որ հրեաները պատրվակ են որոնում կամ էլ բացահատորեն մեղադրում են Հիսուսին շաբաթի խախտման մեջ. Մարկոս 3.2, Ղուկաս 13.14, Հովհաննես 5.18, 9.16: Կարդացե՛ք Ելից 20.8-11-ը և գնահատե՛ք՝ ինչքանով են հիմնավորված այդ մեղադրանքները: Դուք ի՞նչ կարող եք ասել մարդկանց, ովքեր պդնում են, թե այս համարները վկայում են Հիսուսի կողմից շաբաթը խախտելու մասին:
3. Դասարանի հետ միասին վերադարձե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցին ձեր տված պատասխաններին: Շաբաթը հնարավորություն տալի՞ս է անելու այն, ինչը դուք չեք կարող անել շաբաթվա մյուս օրերին՝ առանց առօրյա պարտականությունների:
4. Վերլուծե՛ք շաբաթը պահելու ձեր սեփական փորձը: Ձեզ համար շաբաթը ազատագրման, հանգստի ու փրկությա՞ն, թե՞ մռայլ տրամադրության, ստրկության և սթրեսի օր է: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել վայելել շաբաթը, այն դարձնել ցնծություն, ինչպես այդ մասին ասված է Աստվածաշնչում. «Եթե հետ դարձնես շաբաթից քո ոտքը, որ բաղձանքդ չկատարես Իմ սուրբ օրը, և շաբաթը կոչես զվարճություն, և Տիրոջը նվիրվածը՝ պատվական, և նրան պատվես՝ քո ճանապարհները չկատարելով, և քո բաղձանքը չլրացնելով և դատարկաբանություն չանելով» (Եսայիա 58.13):

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 7.1-6, 8.5-8, Հռոմեացիս 7.7-13, Հռոմեացիս 4.15, Գործք առաքելոց 13.38,39, Գաղատացիս 3.10:

Հիշելու համարը.

«Այսպես, եղբայրնե՛ր, դուք էլ Քրիստոսի մարմնով մեռաք օրենքին՝ որ ուրիշինը լինեք՝ Նրան, Որ մեռելների միջից հարություն է առել, որ պտուղ բերենք Աստծուն» (Հռոմեացիս 7.4):

Կինը վարում է մեքենան՝ նշանակալիորեն գերազանցելով արագությունը: Հանկարծ նա հետադարձ տեսանելիության հայելու մեջ նկատում է ոստիկանական մեքենայի առկայծող կարմիր և կապույտ լույսերը և լսում է ձայնային ազդանշանը: Նա մեքենան կանգնեցնում է ճանապարհի եզրին, վերցնում է պայուսակը և այնտեղից հանում է վարորդական իրավունքը: Մոտենում է ոստիկանը, վերցնում է նրա վկայականը և գնում է դեպի իր մեքենան:

Կինը մտածում է, թե ինչ տուգանք է սպասվում իրեն (նա *իսկապես* գերազանցել էր թույլատրելի արագությունը) և կկարողանա՞ վճարել այն: Մի քանի րոպե անց ոստիկանը վերադառնում է և ասում. «Դե ինչ, տիկի՛ն, որպեսզի դուք կրկին օրինական պատժի չենթարկվեք, մենք կվերացնենք օրենքը: Դուք այլևս կարիք չունեք մտածելու արագության սահմանափակման մասին»:

Այս պատմությունը նույնքան անմիտ է, որքան և ուսմունքն այն մասին, որ Հիսուսի մահից հետո օրենքը՝ Տասը պատվիրանները, վերացվեց:

Այս շաբաթ մենք խոսելու ենք Հիսուսի մահվան և օրենքի հետ այդ իրադարձության կապի մասին:

«Մեռաք օրենքի համար» (Հռոմեացիս 7.1-6)

Ուշադի՛ր կարդացեք Հռոմեացիս 7.1-6-ը: Հակիրճ ու փաստարկված շարադրե՛ք հատվածի հիմնական միտքը: Մանրակրկիտ հետազոտե՛ք այս համարները՝ հիշելով նաև օրենքի մասին այլ աստվածաշնչյան համարներ: _____

_____

_____

_____

Թեև Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ տարբեր կերպ են թարգմանում առաջին համարը, տառացիորեն այն նշանակում է հետևյալը. «Յուրաքանչյուր կենդանի մարդ օրենքի իշխանության տակ է կենում»: Շեշտը դրվում է ոչ թե մեռյալների, այլ կենդանիների վրա:

Ամուսնության օրինակը ցույց է տալիս այն ճշմարտությունը, որ ցանկացած ամուսնացած մարդ, ով ինտիմ հարաբերություններ ունի որևէ այլ մարդու հետ, բացի իր ամուսնուց կամ կնոջից, դրանով իսկ խախտում է օրենքը և մեղավոր է շնության մեջ: Միայն ամուսնու կամ կնոջ մահվան դեպքում նա կարող է ինտիմ հարաբերությունների մեջ մտնել մեկ այլ մարդու հետ՝ առանց օրենքը խախտելու:

Ոմանք համարում են, թե տվյալ հատվածը խոսում է օրենքի մահվան մասին. սակայն այստեղ խոսքը վերաբերում է օրենքի համար մարդու մահվանը «Քրիստոսի մարմնով» (Հռոմեացիս 7.4): Համաձայն Հռոմեացիս 6.6-ի՝ մեռնում է «մեր հին մարդը»: Միավորված լինելով իր հին «ես»-ի հետ՝ մարդը դատապարտված է օրենքով և ապրում է խղճուկ կախվածության մեջ (Հռոմեացիս 7.9-11,24): Բայց այն բանից հետո, երբ հին «ես»-ը մահանում է, մարդը ազատություն է ստանում՝ փոխհարաբերություններ կառուցելու հարություն առած Քրիստոսի հետ (Հռոմեացիս 7.4):

Պողոսն ընդգծում է. քանի որ օրենքը կապում է ամեն կենդանի մարդու, այդ օրենքը նաև պետք է կարգավորի նոր կապը: Սակայն այն փաստը, որ այժմ հավատավոր մարդն ամուսնացած է Քրիստոսի հետ, նշանակում է, որ օրենքն արդեն դատապարտության գործիք չէ: Հիսուսին հավատացողն ազատվում է օրենքի դատապարտումից, քանի որ Քրիստոսի արդարությունն է հագած:

Պողոսը չի պնդում, որ Տասը պատվիրանները, որոնցով ճանաչվում է մեղքը, այժմ վերացված են. դա կհակասեր շատ աստվածա-

շնչյան համարների, ներառյալ նրա սեփական ուղերձները: Հակառակը, նա խոսում է Հիսուսի հանդեպ հավատի միջոցով օրենքի հետ նոր փոխհարաբերությունների մասին: Օրենքն առաջվա նման պարտադիր է. պարզապես Հիսուսին հավատացողի համար, մարդու համար, ով մահացել է իր «ես»-ի ու մեղքի համար, օրենքը դադարում է դատապարտման սպառնալիք լինելուց, քանի որ այժմ նա «պատկանում է ուրիշի»՝ Հիսուսին:

Երկուշաբթի **մայիսի 5**

Մեղքի և մահվան օրենքը (Հռոմեացիս 8.1-8)

Պողոսը հավաստիացնում է քրիստոնյաներին. «Ուրեմն, հիմա դատապարտություն չկա Քրիստոս Հիսուսում լինողների համար… Որովհետև կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահի օրենքից» (Հռոմեացիս 8.1,2): Եթե մենք այս համարները կարդում ենք նրանց անմիջական համատեքստից դուրս, կարող է թվալ, թե Պողոսը խոսում է երկու հակասական օրենքների՝ կյանքի օրենքի և մեղքի ու մահվան օրենքի մասին: Սակայն տարբերությունը ոչ թե օրենքն է, այլ մարդը՝ Քրիստոսին ընդունելուց հետո և առաջ:

Հռոմեացիս 7.7-13-ում Պողոսի դատողություններն ի՞նչ կերպ են լուսաբանում օրենքի դերը: _____

_____

_____

_____

Օրենքի գործառույթը կախված է այն մարդուց, ում հանդեպ այն կիրառվում է: Օրինակ, դանակը կարող է վիրաբույժի կողմից օգտագործվել կյանքի փրկության, իսկ ավազակի կողմից՝ սպանության համար: Նույն կերպ, գողը, ով օրենքը խախտում է, երբ գողանում է ինչ-որ մեկի դրամապանակը, օրենքի հանդեպ այլ վերաբերմունք կունենա, քան նա, ում պաշտպանում է օրենքը (դրամապանակի տերը): Օրենքը մի դեպքում կարող է նկարագրվել հետևյալ խոսքերով՝ «Օրենքը սուրբ է, և պատվիրաններն էլ սուրբ են և արդար և բարի» (Հռոմեացիս 7.12), իսկ մյուս դեպքում՝ ներկայացված է որպես «մեղքի և մահի օրենք» (Հռոմեացիս 8.2): Ինչպես Աստծո վրեժխնդրությունն ու հատուցումն ամբարիշտների հանդեպ՝ չեն խանգարում Նրան մնալու սիրո Աստված, այնպես էլ օրենքի գործառույթը՝ որպես մեղքի ու մահվան գործիքի, նրան մեղավոր չի դարձնում:

Համաձայն Հռոմեացիս 8.5-8-ի՝ օրենքը «մեղքի և մահվան» գործիք է նրանց համար, ովքեր «մարմնի բաներն են մտածում» (Հռոմեացիս 8.5): Սա այն մարդու նկարագրությունն է, ով առաջվա նման «ամուսնացած է» իր հին «ես»-ի հետ՝ ակներև ցանկություն չդրսևորելով «թաղել» նրան և միանալ հարություն առած Քրիստոսին: Այդպիսի մեղսավոր միության արդյունքում մարդը «թշնամության» մեջ է կենում Աստծո և Նրա օրենքի հետ, քանի որ Նրանք գտնվում են հակառակ կողմում (Հռոմեացիս 8.7):

Հետո Պողոսն ընդգծում է. «մարմնի խորհրդի» համար *անհնար է* հնազանդվել Աստծո օրենքին, այդ պատճառով «մարմնով ապրողները չեն կարող Աստծուն հաճո լինել» (Հռոմեացիս 8.7,8): Ակնհայտ է, որ այստեղ չի խոսվում Հռոմեացիս 7.13-25-ի պայքարող «խեղճ մարդու» մասին, քանի որ նա Աստծո օրենքին ծառայում է «իր մտքով» (Հռոմեացիս 7.25): Հավանաբար, Պողոսը խոսում է, «ճշմարտությունը անիրավությունով բռնող» մարդկանց մասին (Հռոմեացիս 1.18): Աստծո իշխանության դեմ ապստամբած խռովարարների համար օրենքը դառնում է մեղքի և մահվան գործիք (Հռոմեացիս 2.12):

Խախտելով օրենքը՝ ի՞նչ վիճակում եք դուք հայտնվում նրա առջև: Ելք կա՞ այդ վիճակից:

Երեքշաբթի **մայիսի 6**

Օրենքի ուժը

Համաձայն Հռոմեացիս 4.15, 5.13, 7.7 համարների՝ ո՞րն է օրենքի գործառույթը: Ի՞նչ է ասված Հռոմեացիս 7.8-11-ում օրենքի գործողության մասին՝ այն խախտող մարդու վրա: _____

Յուրաքանչյուր գործիք որոշակի նպատակ ունի: Այնպես, ինչպես բանալին օգտագործվում է, որպեսզի բացի կողպեքը, իսկ դանակը՝ որպեսզի ինչ-որ բան կտրի, օրենքն օգտագործվում է մեղքը որոշելու համար: Եթե չլիներ Աստծո օրենքը, գոյություն չէր ունենա այն բանի բացարձակ իմացություն, թե որ գործողություններն են Աստծո համար ընդունելի, և որոնք՝ ոչ: Եվ թեև մեղքը չի կարող գոյություն ունենալ առանց օրենքի, Պողոսը հստակ կերպով բացատրում է, որ օրենքը մեղքի «դաշնակիցը» չէ. «Ապա բարի՞ն ինձ մահ եղավ. քավ լիցի. այլ մեղքը, որ մեղքն երևա, որ բարիով ինձ մահ գործեց, որ մեղքն ավելի ևս մեղավոր լինի պատվիրանի միջոցով» (Հռոմեացիս 7.13):

Վերը բերված համարներն ինչպե՞ս են օգնում լույս սփռելու Ա Կորնթացիս 15.54-58 հատվածի վրա: _____

_____

Եթե Ա Կորնթացիս 15.54-58 հատվածը կարդանք համատեքստից կտրված, ապա կարող է թվալ, թե այս հատվածում Աստծո օրենքը ներկայացված է բացասական լույսի ներքո: Սակայն Պողոսը ցանկանում է ընդգծել. օրենքը մեղքի «զորությունն է»՝ միայն այն պատճառով, որ սահմանում է, թե ինչ է մեղքը: Եվ, իհարկե, «մեղքի վարձքը մահն է» (Հռոմեացիս 6.23): Եթե գոյություն չունենար օրենքը, կբացակայեր նաև մահը. չէ՞ որ անհնար կլիներ սահմանել մեղքը: Ա Կորընթացիս 15-ում Պողոսի նպատակը ոչ թե օրենքը սևացնելն է, այլ ցույց տալը, թե ինչպես Հիսուսի մահվան ու հարության միջոցով ամեն մի հավատավոր կարող է հաղթանակ տանել մեղքի դեմ, որը օրենքի խախտման հետևանքն է:

Ե՞րբ է վերջին անգամ ինչ-որ մեկը մեղանչել ձեր դեմ, այսինքն՝ ե՞րբ է վերջին անգամ որևէ մեկը խախտել Աստծո օրենքն այնպես, որ դա ցավ է պատճառել ձեզ: Նման փորձառությունն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալու, թե ինչու այն պնդումը, թե Աստծո օրենքը վերացվել է Գողգոթայի խաչից հետո, կեղծ է:

Չորեքշաբթի մայիսի 7

Անզոր օրենքը

Թեև մի իմաստով, ինչպես մենք ասել ենք, օրենքը ասես մեղքը օժտում է զորությամբ, մյուս իմաստով կարող ենք ասել, օրենքը կատարելապես անզոր է: Ինչպե՞ս միևնույն բանը կարող է միաժամանակ լինել և՛ զորեղ, և՛ անզոր:

Եվ կրկին տարբերությունը մարդու մեջ է թաքնված, և ոչ թե օրենքի: Մարդուն, ով հայտնաբերել է, որ ինքը մեղավոր է, օրենքն ստիպում է ընդունել, որ նա քայլում է Աստծո կամքին հակառակ, և, հետևաբար, կանգնած է մահվան ճանապարհին: Հայտնաբերելով իր մեղսավորությունը՝ մեղավորը կարող է որոշում ընունել՝ ճշգրտորեն հետևել օրենքին: Սակայն այն փաստը, որ ինքն արդեն մեղք է գործել, նրան մահապարտի թեկնածու է դարձրել:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 13.38,39, Հռոմեացիս 8.3, Գաղատացիս 3.21-ը: Այս համարները ի՞նչ են ասում մեզ օրենքի և փրկության մասին: _____

Որոշ մարդիկ համարում են, թե օրենքը խստիվ կերպով պահելը իրենց համար փրկություն է երաշխավորում, բայց դա աստվածաշնչյան ուսմունք չէ: Օրենքը *սահմանում է* մեղքը (Հռոմեացիս 7.7), բայց *չի ներում* այն (Գաղատացիս 3.24): Այդ պատճառով Պողոսն ընդգծում է, որ նույն օրենքը, որը զորությամբ է օժտում մեղքը, նաև անզոր է (Հռոմեացիս 8.3): Նա ընդունակ է մեղադրել մեղավորին մեղքի մեջ, բայց չի կարող նրան արդար դարձնել: Հայելին կարող է մեզ ցույց տալ մեր թերությունները, սակայն ի վիճակի չէ ուղղել դրանք: Ինչպես գրում էր Էլեն Ուայթը, օրենքը չի կարող փրկել նրանց, ում դատապարտում է. այն չի կարող փրկել կործանվողներին» (Ժամանակի նշանները, 10 նոյեմբերի 1890):

Խորապես հետազոտելով օրենքի նպատակը՝ մենք սկսում ենք հասկանալ, թե ինչու Հիսուսը քավչարան Ջոհ դարձավ մարդկային ցեղի համար: Հիսուսի մահը նախկին մեղավոր մարդկանց վերադարձրեց Աստծո հետ ճիշտ փոխհարաբերություններին և Նրա «սուրբ, արդար և բարի» օրենքներին (Հռոմեացիս 7.12): Միևնույն ժամանակ Նրա մահը մեզ ցույց տվեց՝ օրենքը պահելու միջոցով փրկություն ձեռք բերելու փորձերի ունայնությունը: Ի վերջո, եթե հնազանդությունը օրենքին կարողանար փրկել մեզ, այդ դեպքում Հիսուսն ստիպված չէր լինի մահանալ մեր փոխարեն: Բայց այն փաստը, որ Նա մահացավ հանուն մեզ, վկայում է, որ հնազանդությունը օրենքին չի կարող փրկել մեզ: Մեզ ինչ-որ առավել արմատական բան էր հարկավոր:

Թեև մեզ բազմիցս զորություն է խոստացված Աստծո օրենքին հնազանդվելու համար, ինչո՞ւ է այդ հնազանդությունն անբավարար՝ մեր փրկությունը ապահովելու համար: Որոշակի իմաստով պատասխանը այդքան էլ դժվար չէ գտնել: Նայե՛ք ինքներդ ձեզ և վերլուծե՛ք, թե ինչպես եք կատարում օրենքը: Դուք ավելի՞ մեծ հույս կունենայիք, եթե ձեր փրկությունը կախված լիներ ձեր հնազանդությունից:

Հինգշաբթի մայիսի 8

Օրենքի երդումը (Գաղատացիս 3. 10-14)

Բերված համարներն ի՞նչ են մեզ ասում մարդու էության մասին: Մենք նկատե՞լ ենք այդ ճշմարտությունը ամեն օր: Սաղմոս 51.5, Եսայիա 64.6, Հռոմեացիս 3.23: _____

_____

Բացի Քրիստոսից, բոլոր մարդիկ անցնում են մեղքի ընդհանուր փորձառության միջով, քանի որ Ադամից այն անցնում է նրա բոլոր սերունդներին: Հետևաբար, ոչ մի մարդ երբեք չի կարող պնդել, որ միանգամայն անմեղ է: Այնպիսի անհատներ, ինչպես Եղիան ու Ենովքն են, ապրում էին Աստծո հետ բացառիկ մտերմությամբ, բայց ոչ ոքի չի հաջողվել կատարելապես անարատ կյանք ապրել: Գիտակցելով այդ իրողությունը՝ Պողոսը հայտարարում է. «Որովհետև ովքեր որ օրենքի գործերից են, անեծքի տակ են, քանզի գրված է, թե՝ անիծյալ լինի ամեն մարդ, որ չի կենում օրենքի գրքի մեջ բոլոր գրվածներում, որ ամենը անի» (Գաղատացիս 3.10): Ճշմարտությունն այն է, որ օրենքը պահանջում է լիարժեք ու կատարյալ հնազանդություն, իսկ ո՞վ է, բացի Հիսուսից, երբևէ հասել նման բանի:

Հռոմեացիս 6.23 համարն ինչպե՞ս է օգնում որոշել, թե ինչ է նշանակում «օրենքի անեծք»: Տե՛ս նաև Ծննդոց 2.17, Եզեկիել 18.4-ը: _____

_____

_____

Մեզանից յուրաքանչյուրը բնականաբար գտնվում է օրենքի անեծքի տակ: Քանի որ օրենքը սխալի տեղ չի թողնում, մարդը չի կարող ուղղել անցյալի մեղքը: Այդ պատճառով յուրաքանչյուրի ճակատագիրը մահն է: Հակոբոսն է՛լ ավելի անուրախ պատկեր է նկարագրում՝ հիշեցնելով մեզ, որ ինչ-որ տեղ օրենքը խախտելը հավասար է ողջ օրենքը խախտելուն (Հակոբոս 2.10): «Մեղքի վարձքը մահն է», իսկ մահը ոչ մի համամասնություն չի ընդունում:

Երբ մենք գիտակցենք անեծքի տակ գտնվողների անհուսալի վիճակը, մեզ համար ավելի հեշտ կլինի գնահատել Աստծո սիրո մեծությունը. «Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ՝ երբ որ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմեացիս 5.8): Իր մահվամբ «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք դառնալով» (Գաղատացիս 3.13):

Խորհե՛ք Պողոսի «Որոնք որ օրենքի գործերից են, անեծքի տակ են» խոսքերի մասին: Քանի որ օրենքը չի կարող փրկել մեզ, նշանակում է՝ առանց Քրիստոսի մենք կենում ենք հավիտենական մահվան անեծքի տակ: Այս ճշմարտության ըմբռնումն ինչպե՞ս է օգնում մեզ՝ ավելի շատ գնահատելու Հիսուսի միջոցով մեզ պարգևված փրկությունը: Իսկ մենք գնահատո՞ւմ ենք այդ պարգևը: Եթե այո, ապա ինչպե՞ս է դա դրսևորվում մեր կյանքում: Տե՛ս Ա Հովհաննես 5.3-ը:

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Կատարվա՛ծ է» գլուխը (758-764):

«Օրենքը պահանջում է արդարություն՝ արդար կյանք, կատարյալ բնավորություն. իսկ դա մարդը չունի: Նա չի կարող կատարել Աստծո սուրբ օրենքի պահանջները: Բայց Քրիստոսը, երկիր գալով որպես մարդ, ապրեց սուրբ կյանքով և կատարյալ բնավորություն դրսևորեց: Եվ Նա դա առաջարկում է այն ընդունել ցանկացողներին՝ որպես անհատույց պարգև: Նրա կյանքը մեղավորին համարվում է որպես արժանիք, Նրա միջոցով մարդիկ Աստծո մեծահոգությամբ ստանում են անցյալ մեղքերի ներում: Եվ ավելին, Քրիստոսը մարդկանց օժտում է Աստծո հատկանիշներով, Նա մարդուն դաստիարակում է Աստծո նմանությամբ, այնպես որ՝ նրանում ներդաշնակորեն համադրվում են հոգևոր ուժն ու գեղեցկությունը: Այդպես Քրիստոսին հավատացողի մեջ կատարվում է օրենքի արդարությունը, այդպես Աստված կարող է «*լինել* արդար և արդարացնող նրան, որ Հիսուսի հավատքից է» (Հռոմեացիս 3.26)» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 762):

Հանրագումարի բերելով՝ կարելի է ասել, որ Հիսուսի մահը մեծազոր կերպով վկայեց Աստծո օրենքի անփոփոխությունը: Երբ մեր նախածնողները մեղանչեցին, Աստված կարող էր վերացնել Իր օրենքը և դրա խախտման պատիժը: Սակայն երկրի բնակիչների համար դա կնշանակեր խղճուկ գոյատևում անօրեն հասարակության մեջ: Այդ պատճառով Աստված որոշեց Իր Որդուն ուղարկել՝ որպես փոխարինող զոհ, որպեսզի բոլոր մարդկանց փոխարեն Նա մեղքի համար հենց այնպիսի պատիժ ստանա, որ պահանջում էր օրենքը: Հիսուսի մահվան միջոցով ողջ մարդկությունը Աստծո հետ նոր փոխհարաբերություններ ձեռք բերեց: Դա նշանակում է, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է Հիսուսի հավատի միջոցով ստանալ մեղքերի թողություն և կատարյալ ներկայանալ Աստծուն:

Հարցեր քննարկման համար

1. Շատ կրոններ սովորեցնում են, որ մարդու կյանքի վերջում Աստված կշռում է նրա լավ և վատ գործերը՝ որոշելու համար, թե այդ մարդը

հասե՞լ է պարգևի՝ անդրշիրիմյան կյանքում: Այս ուսմունքի մեջ ի՞նչն է ճակատագրական սխալ:

2. Հիսուսը, Ով հավասար էր Աստծուն, մահացավ մեր մեղքերի համար: Եթե մենք կարծում ենք, որ հնազանդությունը օրենքին կարող է որևէ բան ավելացնել դրան և օգնել մեզ՝ փրկություն ստանալու, ապա դա ի՞նչ է ասում Քրիստոսի զոհի արդյունավետության մասին:
3. Այլ ապացույցներ գտեք՝ այն գաղափարի սնանկ լինելու մասին, թե Աստծո օրենքը վերացվել է Գողգոթայի խաչից հետո: Երբ մարդիկ նման բան են ասում, ո՞ր պատվիրանի վերացվելն են ենթադրում:

«ՕՐԵՆՔԻ ՎԱԽՃԱՆԸ ՔՐԻՍՏՈՍՆ Է»

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 5.12-21, 6.15-23, 7.13-25, 9.30-10.4, Գաղատացիս 3.19-24:

Հիշելու համարը.

«Որովհետև օրենքի վախճանը Քրիստոսն է ամեն հավատացողի համար դեպի արդարություն» (Հռոմեացիս 10.4):

Հանրահայտ լրագրի ներսի երեսին մի գովազդ էր տպագրված՝ հետևյալ վերնագրով. «Ձե՛ռք բերեք անմահություն (Մենք չենք կատակում)»:

Սակայն որոշակի իմաստով նրանք, այնուամենայնիվ, կատակում էին, որովհետև հետո գովազդում ասվում էր. «Իմանալու համար, թե ինչպես կարող եք փոխանցել ձեր ժառանգությունը բարեգործական հիմնադրամին, որը ձեր անունից միշտ կօգնի մարդկանց, կապ հաստատե՛ք մեզ հետ, որպեսզի ստանաք մեր անվճար գրքույկը»:

Գրողները, գիտնականները, փիլիսոփաները և աստվածաբանները հազարամյակներ շարունակ խորհել են մահվան և մեր կյանքի իմաստի վրա նրա ազդեցության հարցի մասին: Հետևաբար, գովազդը խելամիտ կլիներ, եթե այդքան անհաջող միջոց չլիներ՝ օգնելու մարդկանց՝ ինչ-որ կերպ հաղթահարել մահվան անխուսափելիությունը:

Ի տարբերություն դրա՝ Նոր Կտակարանում մեզ ցույց է տրված անմահության տանող միակ ճանապարհը: Այն անցնում է Հիսուսի հանդեպ հավատի, և ոչ թե օրենքը պահելու միջով, թեև, անկասկած, մենք պետք է պահենք այն: Իրականում հնազանդությունը օրենքին չի հակասում շնորհին, ընդհակառակը, պատվիրանները պահելը հենց այն է, ինչ ակնկալվում է մեզանից՝ շնորհն ընդունելու արդյունքում:

Այս շաբաթ մենք շարունակում ենք հետազոտել օրենքի և շնորհի թեման:

«Երբ մեղքը շատացավ» (Հռոմեացիս 5.12-21)

Թեև օրենքը ցույց է տալիս մեղքը, սակայն այն ի վիճակի չէ փրկելու մեզ մեղքից: Բայց հենց այդ անզորությունն էլ մեզ բացահայտում է մեր կարիքը Հիսուսի նկատմամբ, Ով մեղքի խնդրի միակ լուծումն է:

Հռոմեացիս 5.12-21-ը: Այս համարներում ինչպե՞ս է բացահայտվում Աստծո շնորհի մասին լուրը: _____

_____

_____

Ուշադրությո՛ւն դարձրեք. այս հատվածում ցույց է տրված մեղքի ու մահվան մշտական կապը: Կրկին ու կրկին նրանք ներկայանում են սերտ կապի մեջ, քանի որ մեղքը (Աստծո օրենքի խախտումը) տանում է դեպի մահ:

Այժմ կարդացե՛ք Հռոմեացիս 5.20-ը: Երբ «եկավ» օրենքը, մեղքը բազմապատկվեց՝ այն իմաստով, որ օրենքը հստակ կերպով սահմանեց, թե ինչ է մեղքը: Սակայն, այն բանի փոխարեն, որ մեղքը պետք է բերեր իր բնական պտուղը, այսինքն՝ մահը, կատարվեց հետևյալը. «…բայց ուր որ ավելի եղավ մեղքը, այնտեղ ավելի ևս շատացավ շնորհը»: Այլ խոսքերով, անկախ նրանից, թե որքան է ահավոր մեղքը, Աստծո շնորհը բավարար է, որպեսզի ծածկի մեղքը այն մարդկանց կյանքում, ովքեր հավատով կառչում են Նրա խոստումներին: Ա Հովհաննես 3.4-ի թարգմանությունից մեկը հռչակում է. «Մեղքը օրենքի խախտում է», ուստի շատերը մեղքը համարում են բացառապես իբրև Տասը պատվիրանների խախտում: Սակայն «մեղքը անօրենություն է» (անոմիա) արտահայտության բառացի թարգմանությունը խոսում է այն մասին, որ ամեն բան, որ հակասում է Աստծո սկզբունքներին, մեղք է: Հետևաբար, թեև Տասը պատվիրանները դեռևս փաստացի տրված չէին, երբ Ադամը ճաշակեց արգելված պտուղը, նա խախտեց Աստծո հրահանգը (Ծննդոց 2.17) և դրանով իսկ մեղք գործեց: Իսկապես, Ադամի մեղքի միջոցով մահվան անեծքը տարածվեց մարդկանց բոլոր սերունդների վրա (Հռոմեացիս 5.12,17,21):

Հակառակ Ադամի անհավատարմության՝ Հիսուսի հավատարմությունն Աստծո օրենքին իր հետ հավիտենական կյանքի հույս բերեց: Չնայած բոլոր փորձություններին՝ Հիսուսը չենթարկվեց մեղքին (Եբրայեցիս 4.15): Հռոմեացիներին հղված ուղերձում Պողոսը փառաբանում է Հիսուսի արդար հնազանդությունը, որը հավիտենական կյանք է

պարգևում նրանց, ովքեր ընդունում են այդ հնազանդությունը (Հռոմեացիս 5.18-21): Հիսուսը՝ երկրորդ Ադամը, կատարեց օրենքն իր ողջ լիությամբ և ջախջախեց մեղքի անեծքը: Այժմ Նրա արդարությունը կարող է դառնալ հավատավոր մարդու արդարությունը: Առաջին Ադամի մեղքը ժառանգելու արդյունքում մահվան դատապարտված մարդն այժմ կարող է ընդունել կյանքի պարգևը՝ հագնելով երկրորդ Ադամի՝ Հիսուսի արդարությունը:

Երկուշաբթի **մայիսի 12**

Օրենքն ու շնորհը (Հռոմեացիս 6.15-23)

Շնորհով փրկված մարդու կյանքում օրենքի դերը ամենադժվար ըմբռնելի հայեցակարգերից մեկն է: Եթե հավատացյալը ստանում է արդարությունը՝ ընդունելով Հիսուսի կյանքն ու մահը, ինչո՞ւ նա պետք է պահի օրենքը: Այս հարցը թույլ է տալիս կրկնել հիմնական միտքը. օրենքը *երբեք* նախատեսված չի եղել փրկություն ապահովելու համար, նրա գործառույթը մեղքի սահմանումն է: Սակայն Գողգոթայի խաչը չի ժխտում՝ մարդու համար Աստծո օրենքին հետևելու անհրաժեշտությունը, ճիշտ այնպես, ինչպես ներումը այնպիսի խախտման համար, ինչպիսին վարորդի կողմից արագության գերազանցումն է, չի ենթադրում, որ նա կարող է շարունակել խախտել ճանապարհային երթևեկության սահմանված կանոնները:

Ըստ Հռոմեացիս 6.12,15-23-ի՝ ի՞նչ է նշանակում ապրել շնորհով: ***Առանձնահատուկ ուշադրությո՛ւն դարձրեք Հռոմեացիս 6.12,15,17 համարներին:*** _____

_____

Շնորհն ու օրենքը չեն հակասում միմյանց և չեն հերքում իրար: Ավելին, նրանք անխզելիորեն շաղկապված են իրար: Մարդուն փրկելու իր անընդունակությամբ օրենքը ցույց է տալիս *շնորհի* կարիքը: Իսկ շնորհը հակադրվում է ոչ թե օրենքին, այլ մահվանը: Մեր խնդիրը ոչ թե բուն օրենքն էր, այլ նրա խախտման արդյունքը հանդիսացող հավիտենական մահը:

Պողոսը նախազգուշացնում է քրիստոնյաներին, որ նրանք շնորհի պարգևը չօգտագործեն իրենց մեղքրի ներման համար (Հռոմեացիս 6.12,15): Մեղքն ի հայտ է գալիս օրենքի միջոցով, այդ պատճառով, երբ Պողոսը քրիստոնյաներին չմեղանչելու կոչ է անում, Նա դրանով իսկ ասում է. *պահե՛ք օրենքը, հնազանդվեցե՛ք պատվիրաններին*:

Պողոսը միշտ մեծարում էր Աստծո օրենքը: Նա ապացուցում էր, որ օրենքն ինքնին չի կարող մարդկանց փրկել անհնազանդության պատժից: Մեղավորները պետք է ապաշխարեն իրենց մեղքերի համար և խոնարհվեն Աստծո առջև, Ում արդարացի ցասումը նրանք հրավիրել են իրենց վրա՝ խախտելով Աստծո օրենքը: Նրանք պետք է նաև հավատ դրսևորեն Քրիստոսի արյան հանդեպ՝ որպես ներում ստանալու միակ միջոց» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 393):

Ինչո՞ւ է հեշտ այսպիսի մոլորության մեջ ընկնելը. եթե օրենքը մեզ չի փրկում, նշանակում է՝ մենք չպետք է նաև հնազանդվենք նրան:

Երեքշաբթի **մայիսի 13**

«Ի՞նչ խեղճ մարդ եմ ես» (Հռոմեացիս 7.21-25)

Կարդացե՛ք Հռոմեացիս 7.13-25-ը: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այս համարները: Այստեղ Պողոսը խոսում է դարձի չեկա՞ծ մարդու մասին, թե՞ սա դարձի եկածի փորձառություն է: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը: _____

Եթե դուք չկարողանաք վստահաբար ասել, թե ում են վերաբերում այս համարները, դուք միակը չեք լինի: Աստվածաբանները նույնպես դարերով փորձել են գտնել այս հարցի պատասխանը: Այստեղ նկարագրված մարդը «բավականություն է գտնում» Աստծո օրենքի մեջ (հազիվ թե դա լինի անհավատ մարդը), բայց, ըստ ամենայնի, նա ստրկացված է մեղքով (ինչը վերաբերում է քրիստոնյաներին. չէ՞ որ նրանց մեղքը հաղթելու ուժ է խոստացված): Հետաազոտելով երկու կողմերի փաստարկները՝ ՅՕԱ աստվածաշնչյան մեկնությունները հայտնում են. «Ըստ ամենայնի, տվյալ հատվածում Պողոսի գլխավոր նպատակն է՝ ցույց տալ օրենքի, ավետարանի և այն մարդու միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը, ով շահագրգռված է մեղքի հետ լուրջ պայքարում՝ ի նախապատրաստումն փրկության: Պողոսի լուրը հետևյալն է. թեև օրենքը կարող է սրել և ուժեղացնել պայքարը, միայն Հիսուս Քրիստոսի Ավետարանը կարող է հաղթանակ և մխիթարություն բերել» (հատոր 6, 554):

Անկախ այն բանից, թե ինչպես ենք հասկանում այս համարները, մենք միշտ պետք է հիշենք, որ մեղքի հետ պայքարող մարդն ընդունակ է ճիշտ ընտրություն կատարել: Եթե դա այդպես չլիներ, մեղքը հաղթահարելու մասին աստվածաշնչյան բոլոր խոստումները իմաստ չէին

ունենա: Մատթեոս 5-ում ցույց է տրված, որ մեղքը հաճախ ծնվում է արարքի կատարումից առաջ: Հետևաբար, մարդը խախտում է օրենքը, երբ ինչ-որ մեղսավոր բանի մասին մտքեր է փայփայում: Իհարկե, դա հիասթափեցնում և տրտմեցնում է, սակայն Հռոմեացիս 7-ը ցույց է տալիս. մարդը կարող է լինել անօգնական, բայց ոչ անհույս: Սուրբ Հոգով ապրող մարդուն ամենագո օրենքը մշտապես հիշեցնում է, որ դատապարտումից ազատագրումը գալիս է Հիսուսի միջոցով (Հռոմեացիս 7.24-8.2):

Եվս մեկ անգամ կարդացե՛ք այսօրվա համար առաջարկված համարները: Ինչպե՞ս են դրանք համադրվում Տիրոջ հետ փոխհարաբերությունների ձեր անձնական փորձառության հետ: Չնայած ձեր պայքարին՝ դուք ինչպե՞ս կարող եք զգալ այն հույսը, որ այստեղ արտահայտում է Պողոսը:

Չորեքշաբթի մայիսի 14

Օրենքի նպատակը (Հռոմեացիս 9.30-10.4)

Այս դասի վերնագիրը վերցված է Հռոմեացիս 10.4-ից՝ «Օրենքի վախճանը Քրիստոսն է»: Օրենքը բացասաբար ընկալելու հակված շատ մարդիկ այս համարն ավտոմատ կարպով մեկնաբանում են հետևյալ կերպ. «Քրիստոսը վերացրել է օրենքը»: Սակայն այսպիսի ըմբռնումը հակասում է Հռոմեացիս թղթի և Նոր Կտակարանի այլ գրքերի շատ համարների, որոնք խոսում են օրենքի այժմեականության մասին:

Կարդացե՛ք Հռոմեացիս 9.30-10.4-ը: Պողոսն ինչպե՞ս է բացատրում հավատքով, և ոչ թե օրենքով փրկությունը: _____

_____

Ինչպես և ողջ Հռոմեացիս թղթում, տվյալ համարներում Պողոսի նպատակն է՝ ցույց տալ արդարության ճշմարիտ աղբյուրը: Օրենքը արդարության հայտածիչն է, բայց այն չի կարող մարդկանց արդար դարձնել: Պողոսը հակասություն է պատկերում. հեթանոսները, ովքեր անգամ չեն ձգտել արդարության, ձեռք են բերել այն, այն դեպքում, երբ Իսրայելը, որ ջանում էր պահել արդարության օրենքը, չստացավ այդ արդարությունը: Պողոսը չի ասում, թե հրեաները չեն կարող արդարություն ձեռք բերել. նա նաև չի պնդում, որ յուրաքանչյուր հրեա արդար է: Նա պարզապես խոսում է այն մասին, որ օրենքը մեղավորին (ո՛չ հրեային, ո՛չ էլ հեթանոսին) արդարություն չի բերում:

Շատ հրեաներ անկեղծ էին արդարության իրենց ձգտման մեջ, սակայն նրանց որոնումը զուր եղավ (Հռոմեացիս 10.2): Նրանք նախանձախմնդիր էին Աստծուն ծառայելու մեջ, բայց ցանկանում էին Նրան ծառայել իրենց սեփական ըմբռնման հիման վրա: Նրանք վերջին Աստծո հայտնության առարկան (օրենքը) և թյուրիմացաբար որոշեցին, որ հենց դա է իրենց փրկության աղբյուրը: Որքան էլ բարի լինի օրենքը, այն ի վիճակի չէ փրկելու որևէ մեկին: Օրենքը մարդուն արդար չի դարձնում, այն միայն ի հայտ է բերում նրա մեղսավորությունը՝ մեծացնելով արդարության կարիքը: Այդ պատճառով Պողոսը Քրիստոսին նկարագրում է որպես օրենքի «վախճանը»*: Ոչ թե «վախճան»՝ օրենքի վերացման իմաստով, այլ այն իմաստով, որ Քրիստոսը հանդիսանում է օրենքի «նպատակը», Նա, Ում մատնանշում է օրենքը: Օրենքը մարդուն տանում է դեպի Քրիստոսը, որպեսզի մեղավորը, ապաշխարելով, Իրեն նայի փրկություն ձեռք բերելու հույսով: Օրենքը բոլոր քրիստոնյաներին հիշեցնում է, որ Քրիստոսն է մեր արդարությունը (Հռոմեացիս 10.4):

Օրենքին լրջորեն վերաբերվող մարդիկ կարող են դառնալ օրինամոլ, եթե ձգտեն «դնել սեփական արդարությունը»: Ցանկանալով հնազանդվել Աստծո օրենքին՝ մենք ինչպե՞ս կարող ենք չընկնել այդ՝ հազիվ նկատելի ծուղակը:

Հինգշաբթի **մայիսի 15**

Դաստիարակը (Գաղատացիս 3.19-24)

Ինչպես և հռոմեացիներին հղված ուղերձում, Գաղատացիս թղթում էլ Պողոսը առանձնահատուկ կերպով ընդգծում է. օրենքի նպատակը մեղքը որոշելն է, և ոչ թե մարդկանց արդարացնելը (Գաղատացիս 3.19, 21):

Կարդացե՛ք Գաղատացիս 3.23,24-ը: Օրենքի նպատակը նկարագրելու համար ի՞նչ կերպարներ է օգտագործում Պողոսը: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ են նշանակում այդ կերպարները: _____

_____

_____

* Հունարեն «թելոս» բառը, որ այստեղ օգտագործում է Պողոս առաքյալը, հաճախ նշանակում է «վերջնական նպատակ»: Հետազոտե՛ք, օրինակ, այդ բառի նշանակությունը Ա Պետրոս 1.9, Հռոմեացիս 6.22, Ա Տիմոթեոս 1.5-ում (ծանոթություն փորձագետի):

Կախված թարգմանությունից՝ 24-րդ համարում օրենքը նույնացվում է «դաստիարակի», «ուսուցչի», «վերակացուի», «ղեկավարի» հետ և այլն: Հունարեն «պայդագոգոս» եզրույթը վերաբերում էր հարուստ տիրոջ կողմից օգտագործվող ստրուկին, որը պետք է կարգապահություն սովորեցներ նրա որդուն: Դաստիարակի վրա պատասխանատվություն էր դրված՝ ինքնակարգապահություն սովորեցնել որդուն: Չնայած ստրուկի կարգավիճակին՝ դաստիարակին իշխանություն էր տրվում՝ անել ամեն անհրաժեշտը, որպեսզի որդին համապատասխանի որոշակի նորմերի, անգամ եթե դրա համար ֆիզիկական պատիժ պահանջվեր: Իսկ երբ որդին հասնում էր չափահաս տարիքի, ուսուցիչն արդեն իշխանություն չէր ունենում նրա վրա:

Դաստիարակի դերի բացատրության լույսի ներքո ո՞րն է օրենքի դերը Քրիստոսի միջոցով փրկություն ստացած մարդու կյանքում: _____

_____

Թեև դաստիարակն արդեն իշխանություն չուներ չափահաս որդու վրա, ակնկալվում էր, որ երիտասարդի ստացած գիտելիքները կօգնեն նրան՝ ընդունելու հասուն որոշումներ: Նմանապես և հասունության հասած և այլևս օրենքի դատապարտող իշխանության տակ չգտնվող քրիստոնյայից ակնկալվում է, որ նա կկառավարի իր գործողությունները օրենքի սկզբունքներին համապատասխան:

Բացի դաստիարակի դերից, օրենքը գործում էր նաև որպես պահակ, ով հավատավորին պաշտպանում էր «այն հավատի համար, որ պետք է հայտնվեր» (Գաղատացիս 3.23): Եվ կրկին մենք տեսնում ենք, որ Քրիստոսը օրենքի «վախճանը», նպատակն է: Պողոսն արտահայտիչ կերպով ընդգծում է այս միտքը, երբ ասում է, որ օրենքը մեզ բերեց Քրիստոսի մոտ, «որ հավատքից արդարանանք» (համար 24):

Ուշադի՛ր կարդացեք Գաղատացիս 3.21-ը: Այս համարում ի՞նչը պետք է ստիպի մեզ՝ ընդմիշտ մոռանալ, թե մենք կարող ենք փրկվել օրենքը պահելու միջոցով: Ինչո՞ւ է դա բարի լուր: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրվա դասին:

Ուրբաթ **մայիսի 16**

Հետագա ուսումնասիրության համար

«Օրենքը բացահայտում է մեզ, թե ինչ է մեղքը, և դրանով իսկ դրդում է գիտակցել Քրիստոսի հանդեպ մեր ունեցած կարիքը և Նրա

մոտ ներում և Աստծո առջև ապաշխարությամբ խաղաղություն ու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ որոնել…

Տասնաբանյա օրենքը պետք է դիտարկել ոչ այնքան արգելելու, որքան՝ ողորմության տեսանկյունից: Նրա արգելքները երջանկության հաստատ երաշխիք են ծառայում, որ ձեռք է բերվել հնազանդության միջոցով: Ընդունված լինելով Քրիստոսում՝ այն մեր մեջ բնավորության մաքրություն է առաջ բերում, որը կուրախացնի մեզ ողջ հավիտենության մեջ: Օրենքին հնազանդվողի համար այն իբրև պաշտպանիչ պատ է ծառայում: Մենք նրա մեջ տեսնում ենք Աստծո բարությունը, Ով, մարդկանց համար բացահայտելով արդարության անփոփոխ սկզբունքները, ձգտում է նրանց պատնեշել այն արատներից, որոնք օրենքի խախտման արդյունքն են» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հատոր 1, 234,235):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում խոսե՛ք այն հիասքանչ հույսի մասին, որի մասին գրում է Պողոսը Գաղատացիս 3.21-ում: Այս համարում ինչպե՞ս է ներկայացված շնորհի Ավետարանը: Այս համարն ինչո՞ւ կարող է օրինամոլության լավ «հակաթույն» լինել:
2. Արդար կյանքը պարտադիր է իրենց Աստծո զավակներ համարող բոլորի համար: Շատ բարեկամներ ընդգծում են, որ անհրաժեշտ է հասնել «կատարելության», եթե ցանկանում ենք մտնել Աստծո արքայությունը: Ցավոք, այդ ուսմունքի կողմնակիցները ոչ միայն զարգացնում են փրկության հարցում ինքնաբավության գաղափարը, այլ նաև անտեսում են մեղավոր մարդկային էության իրողությունը: Մարդիկ ստիպված են ապրել մեղքի հանդեպ ժառանգություն ստացած հակումներով, նրանց վրա մշտապես գրոհում են փորձությունները: Է՛լ ավելի ահավոր է հիասթափությունը, որ կարող է փլվել այն մարդկանց վրա, ովքեր մշտապես իրենց և իրենց հաջողություններին վերաբերվում են որպես իրենց փրկության ծանրաչափի: Աստծո սրբության և Նրա օրենքի համեմատությամբ մեզանից ո՞վ կարող է գոնե երբևէ հասնել հարկավոր մակարդակի: Մենք ինչպե՞ս կարող ենք զգուշություն դրսևորել, որպեսզի արդար, հավատարիմ կյանքով ապրելու ձգտելով՝ չընկնենք աստվածաբանության ազդեցության տակ, որը մեր փրկության հույսը դնում է ինչ-որ այլ բանի վրա, որը տարբեր է մեզ ծածկող Քրիստոսի արդարությունից:
3. Ո՞րն է օրենքի հիմնական նպատակը:

ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 19.16-22, Հովհաննես 13.34,35, Գաղատացիս 6.1-5, Գործք առաքելոց 17.31, Հովհաննես 5.30:

Հիշելու համարը.

«Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք. ինչպես Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի և կենում եմ Նրա սիրո մեջ» (Հովհաննես 15.10):

Գրեթե բոլոր ժողովուրդներն ունեն օրենքների աստիճանակարգում: Գլխավերևում պետական օրենքներն են, որոնք պարտադիր կարգով պետք է կատարեն երկրի բոլոր բնակիչները: Հետո գալիս են տարածքային օրենքները, որոնք վերաբերում են որոշակի տարածքների բնակիչների: Եվ, վերջապես, ոչ մեծ շրջանների տեղական օրենքներն են: Յուրաքանչյուր տարածք երկրի սահմաններում իրավունք ունի ընդունելու տեղական ինքնակառավարման օրենքներ, սակայն այն պայմանով, որ դրանք չպետք է հակասեն համապետական օրենքներին: Թեև հանգամանքները կարող են պահանջել, որ մի որոշակի օրենք այլ կերպ կիրառվի, սակայն օրենքի կիրառումը չի կարող հակասել օրենքի ոգուն:

Արարիչ Աստված՝ տիեզերքի գերագույն Տիրակալը, օրենքներ է սահմանել Իր ողջ արարչագործության համար: Երբ Հիսուս Քրիստոսը կամավոր կերպով մարդկային մարմին առավ, Նա Իր կյանքը նվիրեց Հորը հնազանդվելուն (Փիլիպպեցիս 2.5-11) և Նրա պատվիրաններին: Այդ պատճառով այն ամենը, ինչ սովորեցնում էր Հիսուսը, օրենքի հանդեպ Նրա վերաբերմունքը, անգամ մոռացված «նոր» պատվիրանը, որ Նա հիշեցրեց քրիստոնյաներին, միշտ ներդաշնակության մեջ էին Աստծո օրենքի հետ:

Օրենքն ու մարգարեները

Ոմանք համարում են, որ Տասը պատվիրանները, որ Մովսեսի միջոցով տրվել էին Սինայում, վերաբերում էին միայն իսրայելացիներին՝ մինչև Քրիստոսի խաչելությունը, և այդ պատճառով կորցրել են իրենց նշանակությունը շնորհի ներկտակարանյան ժամանակաշրջանում: Ուրիշները սովորեցնում են, որ քրիստոնյաները ազատ են հինկտակարանյան օրենքից, և միայն իսկական՝ ոչ քրիստոնյա հրեաները այսօր էլ պետք է պահեն այն: Թեև Աստվածաշունչը վկայում է, որ օրենքի գործերը չեն կարող փրկել ոչ ոքի, սակայն ոչ մի աստվածաշնչյան հատված թույլ չի տալիս մարդուն՝ խախտել Աստծո օրենքը: Եթե այդպիսի թույլտվություն լիներ, դա կլիներ մեղք գործելու թույլտվություն, և Աստվածաշունչը տվյալ կարևորագույն հարցում բացահայտորեն կհակասեր ինքն իրեն:

Աստված Իսրայելի հետ Իր ուխտի պայմանները շարադրել է օրենքը բովանդակող քարե տախտակների վրա: Սակայն Աստվածաշնչում կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ Աստծո շատ այլ հրահանգներ են գրի առնված, և այդ պատվերները մենք չենք գտնում Տասնաբանյայի մեջ: Աստծո կամքի լիակատար ըմբռնումը գտնելու ձգտման մեջ ռաբբիները Սուրբ գրքում հաշվել էին 613 օրենք, որոնց հիմքը նրանք տեսնում էին Տասը պատվիրանների մեջ: Հիսուսը ռաբբիներից ավելի հեռու է գնում՝ հայտարարելով, որ Ինքը եկել է ոչ թե «օրենքը կամ մարգարեները քանդելու» (Մատթեոս 5.17): Յուրաքանչյուր աստվածային պատվեր՝ տրված անմիջապես Աստծո կամ Նրա մարգարեների կողմից, սկիզբ է առնում Աստծո Տասնաբանյա օրենքից:

Համեմատե՛ք Մատթեոս 19.16-22-ը և 22.34-40-ը: Այս համարները ի՞նչ են ասում մեզ Հիսուսի և Տասը պատվիրանների մասին: _____

_____

_____

Թեև հարյուրավոր պատվերներ գոյություն ունեն, որոնք Աստված բացահայտել է Իր Խոսքում, Տասը պատվիրաններն արտացոլում են մյուս բոլոր օրենքների հիմքում ընկած խորը սկզբունքները: Այդ պատճառով Հիսուսը հիշատակում է Տասը պատվիրաններից հինգը, երբ զրուցում էր հարուստ երիտասարդի հետ: Երկրորդ Օրինաց 6.5-ում և Ղևտացոց 19.18-ում գրի առնված պատվիրաններում, որտեղ

հրամայվում է սիրել Աստծուն և մերձավորին, ներկայացված է Աստծո օրենքի է՛լ ավելի խտացված հանրագումարը: Հիսուսը հռչակում է. «Այս երկու պատվիրաններից կախված են բոլոր օրենքները և մարգարեները» (Մատթեոս 22.40): Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Հիսուսը և Նրա Հայրը միավորված են մեկ նպատակով՝ դրդելով Աստծո ստեղծած մարդկանց՝ սիրել այնպես, ինչպես Իրենք սիրեցին նրանց: Իսկ օրենքը բացահայտում է, թե ինչպես պետք է արտահայտվի այդ սերը:

Ձեր կյանքում ի՞նչն է վկայում Աստծո և մերձավորի հանդեպ ձեր սիրո մասին:

Երկուշաբթի **մայիսի 19**

Սիրո պատվիրանները (Հովհաննես 15.10)

Սուրբ գրքում մի շարք օրինակներ կան, որոնք վկայում են Աստծո օրենքին՝ Հիսուսի հավատարմության մասին: Օրինակ, թեև Ղուկաս 2.49-ում Նրա խոսքերը ենթադրում են, որ պատանի հասակում Նա հասկանում էր, թե Ով է, սակայն երբ Նրա երկրային մայրն իր տրտմությունն արտահայտեց Զատկի տոնից հետո նրա եռօրյա բացակայության առթիվ, Նա հնազանդորեն տուն գնաց Իր ծնողների հետ «և նրանց հանզանդ էր» (Ղուկաս 2.51): Մեկ այլ անգամ Հիսուսը հրաժարվեց երկրպագել սատանային, երբ վերջինս Նրան փորձում էր անապատում. այդ ժամանակ Փրկիչը հայտարարեց, որ երկրպագությունը նախատեսված է միայն Աստծո համար (Ղուկաս 4.8): Նաև մի քանի հայտարարություններ կան այն մասին, թե ինչպես էր Նա պահում շաբաթը (օրինակ՝ Ղուկաս 4.16,31): Պողոսը գրում էր, որ Հիսուսի ողջ կյանքը Աստծո կամքին հնազանդության կյանք էր (Փիլիպեցիս 2.5-11): Իսկ եբրայեցիներին հղված ուղերձում ասված է, որ Նա, փորձվելով, երբեք մեղք չգործեց (Եբրայեցիս 4.15): Այդ պատճառով, երբ մոտեցան Նրա երկրային կյանքի վերջին ժամերը, Քրիստոսը կարող էր ասել. «Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք. ինչպես Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի և կենում եմ Նրա սիրո մեջ» (Հովհաննես 15.10):

Կարդացե՛ք Հովհաննես 13.34,35-ը: Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը՝ ասելով, որ դա «նոր» պատվիրան է: _____

_____

_____

Հիսուսը հասկանում էր, որ պատվիրանները պահելու և սիրո միջև սերտ կապ գոյություն ունի: Թեև մենք սովոր չենք խոսել սիրո «կանոնների» մասին, սակայն կարելի է ասել, որ Տասը պատվիրաններն, իրականում, այդպիսի կանոններ են: Դրանք ցույց են տալիս Աստծո կամքը, թե ինչպես պետք է արտահայտենք մեր սերը Նրա և շրջապատող մարդկանց հանդեպ:

Աստված սեր է (Ա Հովհաննես 4.16), այդ պատճառով, աշակերտներին տալով Իր պատվիրանը (Հովհաննես 13.34,35), Հիսուսը պարզապես ընդլայնում է Աստծուց բխող սիրո օրենքը (Հովհաննես 3.16): Այժմ մենք պետք է ոչ թե ուղղակի սիրենք միմյանց, ինչպես ինքներս մեզ, այլ սիրենք այնպես, ինչպես Հիսուսը սիրեց մեզ:

«Այդ պահին աշակերտներին հասկանալի չէին այդ խոսքերը, բայց, դառնալով Քրիստոսի տառապանքների, Նրա խաչելության, հարության և երկինք համբարձվելու վկաները, Պենտեկոստեի օրը իրենց վրա Սուրբ Հոգին իջնելուց հետո նրանք առավել հստակ պատկերացում ստացան Աստծո սիրո և միմյանց հանդեպ սիրո մասին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 547):

Կարդացե՛ք Ա Հովհաննես 3.16-ը՝ այսօրվա դասի թեմայի համատեքստում: Մենք ինչպե՞ս կարող ենք այդպիսի սեր ունենալ մեր սրտում: Ինչպե՞ս կարող ենք մահանալ մեզ համար, որպեսզի ընդունակ դառնանք այդպիսի սեր դրսևորելու:

Երեքշաբթի **մայիսի 20**

«Ամենքի համար ամեն բան եղա»

Ուշադի՛ր ուսումնասիրեք օրենքի հղումները Ա Կորնթացիս 9.19-23-ում: Այստեղ ինչի՞ մասին է խոսում Պողոսը: Ինչո՞ւ է նա այդպիսի ուժեղ շեշտ դնում օրենքի վրա: _____

_____

Աստված փափագում է, որ բոլոր մարդիկ ընդունեն հավիտենական կյանքի պարգևը և դառնան Նրա արքայության քաղաքացիներ: Ա Կորնթացիս 9-ում Պողոսը կիսվում է՝ մարդկանց Աստծո մոտ բերելու իր մեթոդով: Նա հասկանում է, որ գոյություն ունեն մշակութային արգելապատնեշներ, որոնք խանգարում են մարդկանց՝ որոշում ընդունելու Ավետարանի օգտին: Պողոսը պատրաստ է հարմարվել մարդկանց ցանկացած խմբի մշակույթին, ում վկայում է՝ ունենալով միակ նպատակ՝ նրանց փրկված տեսնել:

Վերջին հաշվով, Աստծո արքայության մաս դարձած բոլոր մարդիկ լինելու են Նրա օրենքի հպատակները: Հետևաբար, Աստծո ծառայողները նույնպես պետք է կենան Նրա կամքի հետ ներդաշնակության մեջ: Պողոսը շտապում է հայտարարել. թեև ինքը Ավետարանի լուրով մարդկանց հասնելու համար դիմում է նորարարական մեթոդների, սակայն միշտ ուշադիր է Աստծո օրենքի պահանջների հանդեպ: Մարդկանց փրկված տեսնելու ցանկությունը նրան թույլ չի տալիս խախտել Աստծո օրենքը, որին ծառայելու կոչ է անում նրանց: Առաքյալը կարող է հարմարվել մշակութային սովորույթներին, բայց միայն այն դեպքում, եթե դրանք չեն հակասում գլխավոր օրենքին: Նրա մեթոդը ղեկավարում է «Քրիստոսի օրենքի տակ լինելու» ցանկությունը (Ա Կորնթացիս 9.21):

Պողոսի՝ «Քրիստոսի օրենքի տակ» արտահայտությունն ասես հղում է բովանդակում «Քրիստոսի օրենքին»: Բայց Պողոսը չէր ցանկանում, որ Քրիստոսի օրենքը դիտարկվի որպես Աստծո օրենքի այլընտրանք: Երկու օրենքները գործում են ներդաշնակ: Քրիստոսի՝ սիրով լեցուն օրենքը գործում է, որպեսզի շնորհով փրկված մարդկանց ներկայացնի սիրող Աստծուն:

Բացի դրանից, Պողոսի՝ «Քրիստոսի օրենքի տակ» արտահայտությունը մենք կարող ենք նաև հասկանալ որպես հղում մեթոդին, որ օգտագործում էր Ինքը՝ Հիսուսը: Դա մի մեթոդ էր, որ հիմնված էր բոլոր մարդկանց, և ոչ թե միայն ընտրյալ փոքրամասնության հանդեպ սիրո վրա: Փաստորեն այն ողջ բաժինը, որտեղ Պողոսն այդքան բացահայտորեն բացատրում է ամեն բան, ինչ ցանկանում է անել հանուն կործանվողների փրկության, անշահախնդրության, ինքնազոհ սիրո օրինակ է՝ բացահայտված է Քրիստոսի օրենքի մեջ:

Դուք որքանո՞վ եք պատրաստ հրաժարվելու ձեր «ես»-ից, որպեսզի ուրիշներին ձեռք բերեք Քրիստոսի համար: Ձեզ արդեն հաջողվե՞լ է ինչ-որ բան զոհաբերել՝ հանուն նրանց փրկության: Որքանո՞վ է հաջողվում Ձեզ՝ լինել «Քրիստոսի օրենքի տակ»:

Չորեքշաբթի **մայիսի 21**

Կատարելով Քրիստոսի օրենքը (Գաղատացիս 6.2)

Աստծո օրենքը՝ հայտնված գրավոր փաստաթղթերում կամ էլ բնության մեջ, Նրա կամքը բացահայտում է հասկանալու ընդունակ յուրաքանչյուր մարդու (Հռոմեացիս 1.20, 2.12-16) Հետևաբար, ոչ

ոք չի կարող հայտարարել, թե իրեն անհայտ են Աստծո հիմնական պահանջները: «Ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասած են» (Հռոմեացիս 3.23), այդ պատճառով դատապարտված են կործանման (Հռոմեացիս 6.23, Եզեկիել 18.4): Սակայն ամեն ինչ չէ, որ կորած է. անեծքի հետ միասին մենք ստանում ենք հավիտենական կյանքի պարգևը, որը հնարավոր ու մատչելի դարձավ Հիսուս Քրիստոսի կյանքի, մահվան ու հարության շնորհիվ (Եփեսացիս 2.8):

Պողոսի խոսքերով՝ շնորհը պետք է հավատավորին դրդի հնազանդության (Հռոմեացիս 6.15, Եփեսացիս 2.10, Տիտոս 2.11-14), թեև բոլորիս քաջ հայտնի է՝ միշտ չէ, որ մենք մեր կյանքում հարկավոր հնազանդություն ու հավատարմություն ենք դրսևորում:

Համաձայն Գաղատացիս 6.1-5-ի՝ ինչպե՞ս կարելի է օգտագործել «Քրիստոսի օրենքը»: _____

_____

_____

_____

Կարևոր է հասկանալ, որ յուրաքանչյուրը ենթակա է փորձությունների և թուլության պահին կարող է զիջել մեղքին: Եթե մենք հասկանում ենք դա, մեր կողմից անսիրտ բան կլինի՝ իսկույնևեթ դատափետել սայթաքած եղբորը կամ քրոջը: Անգամ Հիսուսը, Ով երբեք չէր մեղանչում, պատրաստակամությամբ օգնում էր կեղտի մեջ թաղված մարդկանց: Էլեն Ուայթը Հիսուսի մասին գրում էր. «Նա երբեք չի հանդիմանել մարդկային թուլությունը» (Դարերի փափագը, 353): Պողոսը կոչ էր անում քրիստոնյաներին՝ օգնել մարդկանց՝ նրանց վերականգնման նպատակով (Գաղատացիս 6.1): Այլ խոսքերով, մեղանչած մարդուն հարկավոր է դրդել՝ կրկին վերադառնալու Աստծո օրենքի սկզբունքներին:

Եթե չլիներ Քրիստոսի քավչարար մահը, իմաստ չէր ունենա Աստծո օրենքը պահելը. չէ՞ որ թեկուզ մեկ մեղքի հատուցումը մահ է: Սակայն քանի որ Քրիստոսը հնարավոր դարձրեց հավիտենական կյանքը, հավատարիմները շարժառիթ ունեն՝ պահելու Աստծո օրենքը, անգամ թուլության դրսևորման պահերից հետո: Հավատավոր մարդիկ պետք է Քրիստոսի օրենքն օգտագործեն որպես միջոց, որն ապաշխարող մեղավորին փոխադրում է հետ՝ Աստծո սիրո տարածք:

Խորհեցե՛ք այն պահերի մասին, երբ դուք «չափն անցել եք», բայց ձեր հանդեպ ողորմություն է դրսևորվել, թեև դուք արժանի չեք եղել դրան: (Ի դեպ, որևէ բան, որին մենք արժանի ենք, ողորմություն չէ): Դուք ինչպե՞ս կարող եք հավաստիանալ, որ չեք

մոռանա ձեր ստացած ողորմությունը, երբ հաջորդ անգամ որևէ մեկը աղաչի ձեզ ողորմածություն դրսևորել իր հանդեպ:

Հինգշաբթի **մայիսի 22**

Օրենքն ու դատաստանը (Հովհաննես 5.30)

Թեև Աստծո օրենքը սիրո օրենք է, վերջին հաշվով Աստված օգտագործում է այն՝ որպես դատի չափանիշ: Աստված շարունակում է հնարավորություններ տալ մեղավորներին՝ ապաշխարության և հավատարմության դրսևորման, բայց գալիս է ժամանակը, երբ կհնչեն հետևյալ խոսքերը. «Անիրավություն գործողը թող է՛լ ավելի անիրավանա, և կեղտոտը թող է՛լ ավելի կեղտոտվի. և արդարը թող է՛լ արդարանա, և սուրբը թող է՛լ սրբվի» (Հայտնություն 22.11): Այս հայտարարությունը վերջին դատաստանի նախերգանքն է:

Հայտնություն 14.7 համարում առաջին հրեշտակը հռչակում է Աստծո դատաստանը. բազում այլ համարներ խոսում են Քրիստոսի դատաստանի մասին (օրինակ՝ Գործք առաքելոց 17.31, Բ Տիմոթեոս 4.1,2, Բ Կորնթացիս 5.10): Հովհաննես 5.30 համարն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու Հիսուսի դերը դատաստանի մեջ: _____

_____

_____

_____

Դառնալով Մարդ, հագնելով մարդկային էություն՝ (Փիլիպեցիս 2.5-11) Քրիստոսն առաջվա նման առանձնահատուկ հարաբերություններ ուներ Իր Հոր հետ: Երբ կրոնական առաջնորդները Նրան մեղադրեցին աստվածահայհոյության մեջ, Նա հայտնեց, որ Աստված իշխանություն է տվել Իրեն ՝ կատարելու Աստծո յուրահատուկ հանձնարարությունները (Հովհաննես 5.19-30), որոնցից մեկը դատն էր: Այն փաստը, որ Քրիստոսի վրա դրված է դատաստանն իրականացնելու պատասխանատվությունը, վկայում է Աստծո ողորմության մասին: Քանի որ Քրիստոսը դարձել է մեզանից մեկը, Նա կարող է անաչառ դատել: Ծանոթ լինելով մարդկային փորձին՝ Քրիստոսը անարդարացի կերպով չի դատապարտի մարդուն: Փաստորեն Քրիստոսը ցույց է տալիս, որ դատապարտությունը ելնում է ոչ թե Իրենից, այլ չապաշխարած մեղավորն ինքն է դատապարտում իրեն՝ հրաժարվելով ականջ դնել Աստծո հրամանին (Հովհաննես 12.48):

Շատերն են ծանոթ Աստծո օրենքին, սակայն չգիտեն՝ ինչպես պահել այն. օրենքը հսկիչ ցուցակ չէ, որ մենք օգտագործում ենք՝ տեսնելու համար, թե որքանով ենք մոտ արքայությանը. դա չափանիշ է, որն արտահայտվում է սիրո տարատեսակ սկզբունքները: Օրենքը կիրառելը չի նշանակում հնազանդություն՝ փրկություն ձեռք բերելու նպատակով: Այն ենթադրում է փրկված մարդու սիրո արձագանք՝ Աստծո փրկարար սիրուն: Եվ, դրա հետ մեկտեղ, այն դրդում է յուրաքանչյուր քրիստոնյայի՝ Աստծո սիրով կիսվելու նրանց հետ, ովքեր դրա կարիքն ունեն: Որպես դատի չափորոշիչ՝ օրենքը ծառայում է իբրև սիրո այն մակարդակի որոշում, որ մարդը դրսևորում է Աստծո և մարդկանց հանդեպ: Նախագահելով վերջին դատաստանի ժամանակ՝ Քրիստոսն օգտագործելու է Աստծո անփոփոխ սիրո օրենքը՝ որպես դատի չափանիշ (Հակոբոս 2.12):

Ուրբաթ **մայիսի 23**

Հեպագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վկայություններ եկեղեցու համար» գրքի 7-րդ հատորից կարդացե՛ք «Եկեղեցական կարգապահություն» (260-264), «Հարգեցե՛ք միմյանց» (265,266) գլուխները:

«Կրեցե՛ք միմյանց բեռը, և այդպիսով կատարե՛ք Քրիստոսի օրենքը»: Այստեղ նորից պարզ ու հստակ կերպով շարադրված է մեր պարտքը: Ինչպե՞ս կարող են իրենց Քրիստոսի հետևորդներ անվանողները այդքան թեթևամտորեն վերաբերվել այդ ներշնչված հրահանգներին…

Մենք սոսկ մի փոքր գիտենք մեր սրտերը և մինչև վերջ չենք հասկանում Աստծո ողորմության կարիքը: Այդ պատճառով այդքան քիչ ենք գնահատում այն թանկարժեք կարեկցանքը, որ մեր հանդեպ դրսևորում է Հիսուսը, և որը մենք պետք է դրսևորենք միմյանց հանդեպ: Մենք պետք է հիշենք, որ մեր եղբայրները թույլ, սխալական մահկանացու մարդիկ են՝ մեզ նման: Ենթադրենք, որ եղբայրը զգոնության բացակայության պատճառով չի կարողացել դիմադրել գայթակղությանը և իր սովորական վարքին հակառակ՝ սխալ է գործել: Մենք ինչպե՞ս պետք է արձագանքենք դրան: Աստվածաշնչից գիտենք, որ ամուսինները, ում Աստված օգտագործում էր մեծ ու բարի աշխատանքի մեջ, երբեմն լուրջ մեղքեր են գործել: Տերը նրանց առանց հանդիմանության չի թողել, սակայն նաև չի հրաժարվել Իր

ծառաներից: Երբ նրանք ապաշխարում էին, Նա ողորմածաբար ներում էր նրանց, նրանց հայտնում էր Իր ներկայությունը և աշխատում էր նրանց միջոցով: Թո՛ղ աշխարհի խեղճ, թույլ մահկանացուները խորհեն այն մասին, թե որքան մեծ է Աստծո կարեկցանքի ու համբերության, ինչպես նաև՝ իրենց եղբայրակիցների կարեկցանքի ու համբերության կարիքը: Թո՛ղ նրանք զգուշությամբ վերաբերվեն շրջապատողների դատապարտմանն ու հանդիմանությանը» (Է. Ուայթ, Ժամանակի նշանները, հունվարի 25 1883թ.):

Հարցեր քննարկման համար

1. Մտորե՛ք «Ժամանակի նշանները» հանդեսից վերը բերված մեջբերման մասին: Ինչո՞ւ է այդքան կարևոր, որպեսզի մենք ողորմություն դրսևորենք նահանջած մարդկանց հանդեպ:
2. Խորհե՛ք մի քանի հանրահայտ աստվածաշնչյան անձնավորությունների մասին, ովքեր ընկել էին մեղքի մեջ, սակայն ում Աստված կարողացավ ներել և շարունակում էր օգտագործել: Այդ օրինակներում ի՞նչ կարևոր դաս է բովանդակվում մեզ համար:
3. Մենք ինչպե՞ս կարող ենք կարգ պահպանել եկեղեցում և միևնույն ժամանակ ողորմություն ու կարեկցանք դրսևորել մեղքի մեջ ընկած մարդկանց հանդեպ: Ինչո՞ւ պետք է մենք այս երկու հայեցակարգերը՝ կարգուկանոնն ու ողորմությունը, դիտարկենք որպես միմյանց չհակասող երևույթներ:

ՔՐԻՍՏՈՍԸ, ՕՐԵՆՔՆ ՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 7.7-12, Երկրորդ Օրինաց 30.15-20, Մատթեոս 7.24-27, Գործք առաքելոց 10.34,35, Հովհաննես 15.10, Եփեսացիս 2.1:

Հիշելու համարը.

«Որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղավ» (Հովհաննես 1.17):

ՔԱ առաջին դարում հռոմեացի բանաստեղծ Լուկրեցիոսը գրել է մի նշանավոր պոեմ, որը կորել է պատմության ընթացքում և անհայտ է եղել ընդհուպ մինչև միջին դարերը: Այն կոչվում էր «Իրերի բնույթի մասին»: Թեև Լուկրեցիոսին հաճախ անվանում են աթեիստ, նա իր պոեմում չի հերքում աստվածությունների գոյությունը, այլ միայն պնդում է, որ նրանք ոչ մի հետաքրքրություն չեն դրսևորում մարդկային ոչ մի բանի հանդեպ:

Իսկ Աստվածաշունչը պնդում է, որ կա միայն մեկ Աստված, և Նա խորապես հետաքրքրված է երկրի վրա տեղի ունեցող ամեն բանով: Մարդկության հանդեպ այդպիսի կրքոտ հետաքրքրության դրսևորումները կարելի է տեսնել Նրա օրենքի (որը կոչված է ղեկավարելու մեր կյանքը) և Նրա շնորհի (մեր փրկության աստվածային միջոցի, որը գործում է՝ չնայած խախտում ենք Նրա օրենքը) մեջ: Թեև որոշ աստվածաբաններ օրենքն ու շնորհը դիտարկում են որպես հակադրություն, դրանք անխզելիորեն կապված են միմյանց: Օրենքի ու շնորհի մեթոդներն ու գործողությունները կարող են տարբեր լինել, սակայն միասին դրանք բացահայտում են ճշմարտությունն այն մասին, որ արդարությունը պետք է հաղթանակ տանի մեղքի դեմ: Աստծո և Նրա շնորհի դրսևորումներն իրենցից ներկայացնում են մարդկության հանդեպ Նրա սիրո և Իր հավիտենական արքայության համար մեզ փրկելու՝ Նրա ցանկության վկայությունը:

Մեղքը և օրենքը

Կարդացե՛ք Հռոմեացիս 7.7-12-ը: Ի՞նչ է ասում Պողոսը մեղքի ու օրենքի փոխադարձ կապի մասին: Ինչո՞ւ է նա առհասարակ այդպիսի հարց տալիս՝ «Մի՞թե օրենքը մեղք է» (Համար 7): ____

_____

_____

_____

Պողոսն այնքան սերտորեն է կապակցում օրենքն ու մեղքը, որ հռետորական հարց է տալիս. «Մի՞թե օրենքը մեղք է»: Պատասխանն, անշուշտ, բացասական է, ավելին, այդ բաժնի վերջում նա ասում է. «Ուրեմն օրենքը սուրբ է, և պատվիրաններն էլ սուրբ են, և արդար, և բարի»: «Ուրեմն» բառը ցույց է տալիս տվյալ դատողության ավարտը. օրենքը հեռու է մեղավոր լինելուց, այն իսկապես սուրբ և բարի է:

Պողոսի շարադրած գաղափարը կարող է լուսաբանվել քրեական իրավունքի և հանցանքի փոխադարձ կապով: Հանցագործություն հանդիսանում է միայն այն, ինչը որպես այդպիսին նշված է օրենքում: Մի երկրում դուք կարող եք բանտ նստել մի բանի համար, ինչը միանգամայն օրինական է մեկ այլ երկրում: Պատճառն այն է, որ մի երկրում կա օրենք, որը դատապարտում է այդպիսի արարքը, իսկ մյուս երկրում այդպիսի օրենք չկա: Միևնույն արարքը հանգեցնում է երկու տարբեր արդյունքների: Ո՞րն է տարբերությունը՝ օրենքը:

Նաև շատ կարևոր է հիշել այն մասին, որ ամեն օրենք չէ, որ լավն է ու արդար: Ամերիկայի վաղ պատմության մեջ օրենքը պահանջում էր իրենց տերերին վերադարձնել փախստական ստրուկներին: Դա օրենք էր, սակայն այն հազիվ թե կարելի է անվանել արդարացի: Սակայն Աստծո օրենքի դեպքում մեզ հայտնի է, որ այն արտացոլում է Նրա սիրող էությունը: Այդ պատճառով Պողոսը պնդում է, որ այդ օրենքը սուրբ է ու բարի, և կարո՞ղ է այլ կերպ լինել:

Ինչո՞ւ Պողոսը, լուսաբանելով օրենքի այս կողմը, բերում է «Մի՛ ցանկացիր» (Հռոմեացիս 7.7) պատվիրանը: Ինչո՞ւ նա չի օգտագործում մեկ այլ պատվիրան, օրինակ՝ «Մի՛ գողացիր»: Ո՞րն է դրա իմաստը: _____

_____

_____

_____

Հնարավոր է, Պողոսն օգտագործում է հենց այս պատվիրանը, քանի որ այն արգելում է ոչ ակներևը: Շատ մարդիկ չեն համարում, որ ուրիշի ունեցվածքը ցանկանալը չարիք է: Սպանությունը, գողությունը՝ այո՛, պարտադիր չէ, որ մարդ իմանա Տասը պատվիրանները, որպեսզի հասկանա դա: Բայց նախա՞նձը, ցանկությո՞ւնը: Պողոսը իդեալական օրինակ է բերում, որպեսզի ցույց տա. հենց օրենքն է որոշում, թե ինչ է մեղքը: Այլապես մարդը կարող էր նաև չիմանալ, որ ուրիշի ունեցածը ցանկանալը մեղք է:

Երկուշաբթի **մայիսի 26**

Օրենքն ու Իսրայելը (Երկրորդ Օրինաց 30.15-18)

Օրենքը Իսրայելին փոխանցելը յուրահատուկ գործողություն էր: Նախքան օրենքը Մովսեսին տալը՝ Աստված հիշեցրեց Իր ժողովրդին, որ նրանք «քահանաների թագավորություն և սուրբ ազգ» են (Ելից 19.6): Երկրի բոլոր ժողովուրդների մեջ Աստված հենց Իսրայելին առանձնահատուկ կերպով բացեց Իր օրենքը (Հռոմեացիս 9.4): Օրենքը պետք է մարդկանց համար դառնար ոչ թե բեռ, այլ գործիք, որի շնորհիվ ընտրյալ ժողովուրդը շրջակա ազգերին կհայտներ բարոյական նորմերը, որոնք ընկած էին Աստծո կառավարման հիմքում: Իսրայելը պետք է համաշխարհային ավետարանչության առաքելության մեջ համագործակցեր Աստծո հետ, և Աստծո օրենքը պետք է ծառայեր որպես Աստծո ներկայացուցիչների տարբերիչ նշանը:

Համաձայն Երկրորդ Օրինաց 30.15-20-ի՝ ո՞րն է օրենքի ու Աբրահամին, Իսահակին ու Հակոբին տրված խոստումների միջև փոխադարձ կապը: Այդ սկզբունքներն այսօր ինչպե՞ս են կիրառելի մեզ համար, որ Նոր Ուխտ ենք կնքել Տիրոջ հետ (տե՛ս Մատթեոս 7.24-27): _____

_____

_____

_____

Աստված ընտրել էր հրեաներին, որպեսզի նրանք Իր ներկայացուցիչները լինեն երկրի վրա: Իսրայելը պետք է դառնար այն ժողովուրդը, որի միջոցով աշխարհի մյուս ժողովուրդները կստանային Աբրահամին, Իսահակին ու Հակոբին խոստացված օրհնությունները: Սակայն օրհնությունները երբեք ավտոմատ կերպով չեն ուղարկվել: Որպես ընտրյալ ժողովուրդ՝ Իսրայելը պետք է ապրեր Աստծո կամքի հա-

մաձայն: Մովսեսը հստակ կերպով հասկացրեց, որ կյանքն ու բարգավաճումը մարդկանց կպարգևվեն՝ միայն Աստծո պատվիրանները, ցուցումներն ու օրենքները կատարելու պայմանով (տե՛ս Երկրորդ Օրինաց 30.15,16):

Իսրայելի պատմությունն աղտոտած բազմակի ապստամբությունները ցույց տվեցին, որ այդ ժողովուրդը չկատարեց ուխտի պայմանները: Բայց մենք նաև չպետք է մոռանանք այն մասին, որ «Ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասած են» (Հռոմեացիս 3.23): Երկրի ոչ մի ժողովուրդ չի կատարել Աստծո կամքը: Անգամ վերջերս իրենց քրիստոնյա համարող ազգերը Աստծո գործը ներկայացնում են կեղծ լույսի ներքո՝ հրահրելով պատերազմներ, կանխակալ կարծիքներ և հալածանք:

Ինչպե՞ս են կապակցված հավատն ու հնազանդությունը ձեր անձնական փորձառության մեջ: Այսինքն՝ ի՞նչ է տեղի ունենում ձեր հավատի հետ, երբ դուք հնազանդ եք կամ երբ անհնազանդ եք: Հնազանդությունն ինչպե՞ս է ամրապնդում հավատը:

Երեքշաբթի **մայիսի 27**

Օրենքն ու ժողովուրդները (Գործք առաքելոց 10.34,35)

Կարդացե՛ք Գործք առաքելոց 10.34,35, 17.26,27, Հռոմեացիս 1.20, 2.14-ը: Ո՞րն է համարների գլխավոր իմաստը: _____

_____

_____

Չնայած Իսրայելի սխալներին՝ Աստված այլ ազգերի մարդկանց չի թողել առանց վկայության: Մարդիկ, ովքեր չունեին Աստծո գրված օրենքը, աստվածային լուրերն ստանում էին բնության բաց էջերից (Հռոմեացիս 1.20): Բնության աստվածային գիրքը բավականաչափ տեղեկատվություն է բովանդակում, որ մարդուն ուղղորդի դեպի Արարիչը:

Աստված նաև յուրաքանչյուր մարդու օժտել է հոգևոր ձգտումներով: Ըստ Պողոս առաքյալի՝ Աստծո Հոգու ներկայությունն զգացող մարդը կձգտի գտնել Նրան (Գործք առաքելոց 17.27): Շատ մարդիկ իրենց կյանքում դատարկություն են զգում, որը չեն կարող լրացնել փառքը, իշխանությունը, փողը, սեքսը՝ այս աշխարհի կողմից առաջարկվող

ոչ մի բան: Այս լուրը հստակ կերպով շարադրված է Ժողովող գրքում: Դատարկության զգացումն ու անբավարարությունը հաճախ մարդկանց տանում են անիմաստ գոյատևմանը գերազանցող մեկ այլ բանի որոնման: Դատարկությունը լրացնելու և հոգու ծարավը հագեցնելու ցանկությունը նրանց տանում է դեպի բացված ճշմարտությունը:

Աստծո կամքը բացահայտված է թե՛ գրավոր աղբյուրների, թե՛ բնության միջոցով. այդ հայտնությունը ստացած մարդը պատասխանատու է դրա կենսագործման համար: Ճշմարտությունը ճշմարտություն է՝ անկախ այն բանից, թե ինչպես է այն բացահայտվում, և եթե մարդը ճնշում է այն, նա իր վրա զգում է Աստծո ցասումը (Հռոմեացիս 1.18): Հետևաբար, թեև շատ մարդիկ, հնարավոր է, չունեն Աստվածաշունչ և չգիտեն Տասը պատվիրանները, Աստված, միևնույնն է, նրանցից կպահանջի իրենց բացված ճշմարտության համաձայն: Վերջին հաշվով, ամենքը կդատվեն, և դատի չափանիշը կլինի օրենքը. կա՛մ Իր՝ Աստծո կողմից քարե տախտակների վրա գրված օրենքը, կա՛մ (գրված օրենքը չիմացողների համար) խղճի օրենքը, որը հոգատար վերաբերմունքի շնորհիվ՝ զգայուն է բնության մեջ Աստծո ձայնի նկատմամբ :

Դուք գիտակցե՞լ եք, թե որքանով կարող են անհուսալի ու չբավարարված լինել այս աշխարհի «բարիքները»: Ինչպե՞ս եք դուք ձեզ համար բացահայտել այն, ինչ իսկապես նշանակություն ունի կյանքում:

Չորեքշաբթի մայիսի 28

Շնորհն ու ճշմարտությունը (Հովհաննես 1.17)

Փրկության պատմությունը Հովհաննեսը հանրագումարում է մեկ համարում. «Որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղավ» (Հովհաննես 1.17): Ադամի մեղքի արդյունքում ողջ մարդկությունը ենթակա դարձավ մահվան անեծքին: Այդ անեծքն էլ ավելի է խորանում այն փաստով, որ մարդկանցից ծնվածներից ոչ ոք, բացի Հիսուսից, ազատ չէ մեղսավոր հակումներից: Այդ պատճառով Աստված ընտրեց ժողովուրդ, որին բացեց Իր օրենքը, որ այդ ընտրյալ մարդիկ Իր լույսը լինեն շրջակա ժողովուրդների համար: Աստված Իսրայելին տվեց օրենքը՝ ոչ թե որպես փրկության միջոց, այլ որպես մշտական հիշեցում այն մասին, որ մարդիկ արդարության կարիք ունեն:

Հետևյալ համարներից ի՞նչ ենք իմանում մենք Հիսուսի կյանքի մասին. Փիլիպեցիս 2.8, Հովհաննես 15.10, Մատթեոս 26.39: ____

_____

_____

Չհնազանդվելով Աստծո հրամանին՝ առաջին Ադամը ողջ աշխարհը նետեց խռովության և ստրկության գիրկը: Մյուս կողմից՝ երկրորդ Ադամը՝ Հիսուսը, Իր հնազանդ կյանքի շնորհիվ աշխարհն ազատեց առաջին Ադամի բերած ստրկությունից: Ապրելով մեր աշխարհում՝ Հիսուսը կամավոր կերպով Իր կամքը ենթարկեց Հոր կամքին և մեղք չգործելու որոշում կայացրեց: Ի տարբերություն առաջին Ադամի, որ դատապարտություն և կեղծիք բերեց աշխարհ, Հիսուսն աշխարհ բերեց շնորհն ու ճշմարտությունը: Շնորհն ու ճշմարտությունը չփոխարինեցին օրենքին: Ավելին, Հիսուսը ցույց տվեց, թե ինչու օրենքը բավարար չէ փրկության համար: Ճշմարտությունը, որ Նա բերեց, շնորհի առավել խորը ըմբռնման մեջ է:

Համաձայն Հռոմեացիս 6.23-ի և Եփեսացիս 2.8-ի՝ ո՞րն է Հիսուսի շնորհի էությունը: Հիսուսն ի՞նչ կերպ ապահովեց շնորհը մարդկանց համար: _____

_____

_____

Հունարեն «շնորհ» (խարիս) թարգմանված բառը կարող է նաև նշանակել «պարգև» (խարիսմա) և կապված է «ուրախություն» նշանակող բառի (խարա) հետ: Պարգևը, որ Հիսուսը տալիս է մարդկությանը, հավիտենական կյանքն է: Շնորհը դրսևորվում է Քրիստոսի ներկայությամբ, ինչը մարդուն հնարավորություն է տալիս հաղորդակից դառնալու արդարությանը, որին նպաստում է օրենքը: Պողոսը պնդում է, որ մեղքը դատապարտելով մարմնում՝ Հիսուսը հնարավոր դարձրեց, որ «օրենքի արդարությունը կատարվի մեզանում» (Հռոմեացիս 8.4): Շնորհը ոչ միայն ազատում է մեզ օրենքի դատապարտումից, այլև մեզ ընդունակություն է տալիս՝ պահպանելու օրենքը, ինչին էլ մենք կոչված ենք:

Հինգշաբթի **մայիսի 29**

Օրենքն ու Ավետարանը (Հռոմեացիս 1.16, 17)

Անկախ այն բանից, թե որքանով է «ճիշտ» մեր կյանքը, ոչ ոք չի կարող խուսափել մեղքի մասին մշտական հիշեցումներից: Երջանկու-

թյունն անխուսափելիորեն ընդհատվում է հիվանդությամբ, մահվամբ, աղետով: Անձնական մակարդակում հոգևոր անվտանգության զգացողությանը հաճախ սպառնում են անցյալ մեղքի մասին հիշողությունները կամ, որ էլ ավելի վատ է, կրկին մեղանչելու դրդումները:

Հետևյալ համարներն ինչպե՞ս են նկարագրում մեղքի ազդեցությունը. Հռոմեացիս 6.23, 7.24, Եփեսացիս 2.1: _____

_____

_____

Մեղքի ու կեղծիքի մեջ ապրող մարդը պարզապես քայլող դիակ է, որ սպասում է այն օրվան, երբ վերջին շունչը կլքի իր մարմինը: Գնահատելով մարդու վիճակը՝ Պողոսը հուսահատորեն բացականչում է. «Ո՞վ կապրեցնի ինձ այս մահի մարմնից» (Հռոմեացիս 7.14): Սա աղաղակ է՝ անարդարությունից ազատվելու մասին: Առաքյալը գիտակցում է, որ ազատագրումը հնարավոր է միայն Հիսուսի միջոցով (Հռոմեացիս 7.25):

Սա բարի լուր է: Այն ամփոփվում է նրանում, որ մենք, որ ապրում ենք անարդարության մարմիններով, կարող ենք ծածկվել Քրիստոսի արդարությամբ: Ավետարանն այն բանի երաշխիքն է, որ մենք կարող ենք խուսափել օրենքի դատապարտումից, քանի որ այժմ ունենք օրենքի պահանջած արդարությունը (Հռոմեացիս 8.1):

Երբ Պողոսը գրում էր Հռոմի քրիստոնյաներին, Հիսուսի մահվան մասին պատմությունը դեռ շարունակում էր քննարկվել կայսրության տարածքում: Այդ մասին լսողները կատարելապես համոզված էին, որ Նրա մահը խայտառակություն էր: Այն մարդիկ, ում հարազատներն ու մտերիմները մահապատժի էին ենթարկվել խաչի վրա, ստիպված էին ամոթ ու խառտառակություն կրել մնացած ողջ կյանքում: Սակայն Պողոսն ու քրիստոնյաների անհամար բազմությունը հասկանում էին, որ Քրիստոսի «խայտառակ» մահը ամենամեծազոր իրադարձությունն էր երկրային պատմության մեջ: Այդ պատճառով Պողոսը հայտարարում է. «Որովհետև ես Քրիստոսի Ավետարանը ամոթ չեմ համարում, որովհետև Աստծո զորություն է փրկելու համար ամեն հավատացողին» (Հռոմեացիս 1.16): Իսկ այդ բարի լուրի միջուկը խոստումն է այն մասին, որ վերջին խոսքը պատկանելու է ո՛չ մահվանը, և որ Հիսուսի փրկածները հավիտյան ապրելու են Նոր երկրում:

Շատ մարդիկ կյանքն անիմաստ են համարում, քանի որ այն միշտ ավարտվում է մահվամբ: Չէ՞ որ, փաստորեն, ոչ մի բան, որ մենք անում ենք, ժամանակի ընթացքում նշանակություն չի ունենալու: Եթե ամեն բան, ինչ մենք երբևէ կատարել ենք, և յուրաքան-

չյուր մարդ, ում վրա մենք երբևէ ազդեցություն ենք գործել, կորչեն և մոռացվեն մեկընդմիշտ, ո՞րը կլինի կյանքի իմաստը: Դուք ի՞նչ կարող եք պատասխանել այդ դատողություններին: Ո՞րն է մեր կեցության ճշմարիտ իմաստը:

Ուրբաթ **մայիսի 30**

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Ավետարանչություն» գրքից կարդացե՛ք «Տարբերիչ ճշմարտությունների քարոզը» (231,232), «Հավատը, որով ես ապրում եմ» գրքից՝ «Գործուն հավատ» և «Ինչպես է կատարելագործվում հավատը» (88,89) գլուխները:

«Թո՛ղ պարզ և հստակ կերպով բացահայտվի ճշմարտությունն այն մասին, որ մարդկային արժանիքները ոչ մի կերպ չեն կարող ազդել ո՛չ Աստծո առջև մեր դիրքի, ո՛չ էլ մեզ տրված Աստծո պարգևի վրա: Եթե որևէ մեկը հավատով և գործերով կարողանար գնել փրկության պարգևը, այդ ժամանակ Արարիչը պարտք կլիներ արարչագործությանը: Վտանգ է ծագում՝ կեղծիքն ընդունել որպես ճշմարտություն: Եթե մարդը կարողանար իր գործերով արժանանալ փրկության, կլիներ այն նույն վիճակում, ինչ և եպիտիմիա (մեղքերի համար պատիժ) կատարող կաթոլիկը: Այդ դեպքում փրկությունը հաշվարկվում է որպես պարտք և կարող է մշակվել որպես հատուցում: Իսկ եթե մարդը չի կարող որևէ բարի գործով արժանանալ փրկության, ապա այն պետք է պարգևվի բացառապես շնորհով, որն ընդունվում է իրեն մեղավոր համարող մարդու կողմից, քանի որ նա ընդունում է Հիսուսին և հավատում է Նրան: Շնորհը բացառապես անհատույց պարգև է, իսկ հավատքով արդարացումը՝ անվիճելի: Ամեն տեսակ կասկած գոլորշիանում է, հենց որ պարզ է դառնում, որ ընկած մարդու արժանիքներով՝ իր բարի գործերի միջոցով, նա երբեք ձեռք չի բերի հավիտենական կյանքը» (Է. Ուայթ, Հավատը և գործերը, 19,20):

Հարցեր քննարկման համար

1. Խորհե՛ք էլեն Ուայթի՝ ուրբաթ օրվա դասում բերված բառերի մասին: Մտորե՛ք այդ խոսքերում բովանդակվող զարմանահրաշ հուսադրող ճշմարտությունների մասին, որոնք այժմեական են անգամ ամենավերջին մեղավորի համար: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել

ապավինել այդ խոստումներին և ապրել՝ իսկապես հավատալով դրանց:

2. Թեև Աստված Իր օրենքները Իսրայելին պարգևեց անձամբ և Մովսեսի միջոցով, Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Նա կարող է Իր կամքը բացահայտել նաև այն մարդկանց, ովքեր չունեն Նրա գրավոր հայտնությունը (օրինակ՝ Հռոմեացիս 1.20, 2.14, Գործք առաքելոց 17.26,27): Եթե Աստված իսկապես դիմում է մարդկանց, ինչի՞ համար են ավետարանիչները:
3. Հովհաննես 1.17-ում հաստատվում է, որ շնորհն ու ճշմարտությունը «Հիսուս Քրիստոսի միջոցով եղավ»: Հիմնվելով այս համարի վրա՝ շատ մարդիկ հակադրում են օրենքն ու շնորհը: Ինչո՞ւ է դա սխալ հակադրություն: Որպես կանոն, շնորհն ու ճշմարտությունը փրկության ծրագրում գործում են միասին, որպեսզի մեզ համար բացահայտեն Աստծո բնավորությունը:
4. Ռուս գրող Ֆեոդոր Դոստոևսկին ստեղծել է գրական հերոս, աթեիստ, ով պատասխան էր փնտրում այն հարցին, թե ինչու է՛լ ավելի շատ մարդիկ չեն իրենց կյանքն ավարտում ինքնասպանությամբ: Որպես աթեիստ՝ նրա համար անհասկանալի էր, թե ինչու են մարդիկ ցանկանում ապրել, եթե կյանքն անիմաստ է, և դրանում այնքա՜ն ցավ կա: Քննարկե՛ք այդ մտածողության տրամաբանությունը:

ՔՐԻՍՏՈՍԸ, ՕՐԵՆՔՆ ՈՒ ՈՒԽՏԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 9.12-17, 17.2-12, Գաղատացիս 3.15-28, Երկրորդ Օրինաց 9.9, Եբրայեցիս 10.11-18, Եբրայեցիս 9.15-28:

Հիշելու համար.

«Եվ սրա համար Նա նոր ուխտի միջնորդ է, որ երբ որ մահն եղավ այն առաջին ուխտի ժամանակ՝ գործված հանցանքների քավության համար, խոստմունքն առնեն հավիտենական ժառանգության կանչվածները» (Եբրայեցիս 9.15):

Մարդկությանը փրկելու Աստծո սկզբնական որոշումը բացահայտվում էր դարերի ընթացքում՝ ուխտերի մեջ: Թեև Աստվածաշունչը ուխտերի մասին խոսում է հոգնակի թվով (Հռմեացիս 9.4, Գաղատացիս 4.24, Եփեսացիս 2.12), իրականում միայն շնորհի ուխտն է, որի շրջանակներում մեղավորներին փրկություն է պարգևվում՝ ոչ ըստ իրենց արժանիքների, այլ ըստ Հիսուսի արժանիքների, որն առաջարկվում է բոլորին, ովքեր ցանկանում են ընդունել դա հավատով: Ուխտերի հոգնակի թիվը միայն նշանակում է, որ Աստված իրականացնում է Իր փրկարար նպատակները՝ կրկին հաստատելով ուխտը տարբեր ուղիներով, որպեսզի տարբեր ժամանակներում և տարբեր հանգամանքներում պատասխանի Իր ժողովրդի կարիքներին: Այսպիսով, գոյություն ունի միայն մեկ ուխտ՝ Աստծո փրկարար շնորհի հավիտենական ուխտը:

Այս ուխտի միջուկը մեր Տիրոջ անփոփոխ, հավատարիմ սերն է, սեր, որ Աստվածաշունչն անգամ հավասարեցնում է բուն ուխտերին (տե՛ս Երկրորդ Օրինաց 7.9, Գ Թագավորաց 8.23, Դանիել 9.4): Այս ուխտի շրջանակներում Աստված կոչ է անում Իր ժողովրդին՝ հնազանդվել Իր օրենքին՝ այն համարելով ոչ թե փրկության միջոց, այլ փրկության պտուղ: Օրենքն ու շնորհը միշտ գտնվել են Աստծո հավիտենական ուխտի կենտրոնում:

Ուխտի խորհրդանիշները (Ծննդոց 9.12-17)

Ուխտը համաձայնություն է երկու կողմերի միջև՝ հիմնված կա՛մ մեկ, կա՛մ երկու կողմերի խոստումների վրա: Ուխտի մեջ մտնելու երկու հիմնական ձև կա: Առաջին դեպքում երկու կողմերն էլ համաձայնում են ուխտի պայմաններին և փոխադարձ խոստումներ են տալիս: Այդպիսի բան տեղի է ունենում ամուսնության, համատեղ բիզնեսի և անգամ գույք գնելու դեպքում: Երկրորդ դեպքում մի կողմը հանդես է գալիս որպես ուխտի նախաձեռնող՝ համաձայնեցնելով ինչպես խոստումները, այնպես էլ անառարկելի պայմանները, իսկ երկրորդ կողմը հրավիրվում է միանալ այդ ուխտին: Որպես օրինակ կարելի է բերել հարկերի վճարումը կամ էլ կրթական հաստատություն ընդունվելը: Երկու դեպքում էլ ցանկացած կողմ կարող է հրաժարվել ուխտից, բայց դա սովորաբար որոշակի հետևանքների է հանգեցնում: (Օրինակ, հիփոթեքային վարկը չվճարած մարդը կզրկվի տնից, իսկ հարկեր վճարելուց հրաժարվող քաղաքացին դատական կարգով կենթարկվի պատասխանատվության):

Ուխտը սովորաբար ամրապնդվում է առնվազն մեկ խորհրդանիշով: Օրինակ՝ տուն գնող մարդը մի քանի ստորագրություն է տալիս հիփոթեքային հաստատությունում, որը պահում է սեփականության փաստաթղթերը և հետևում է, որպեսզի ողջ գումարը վճարվի: Կամ՝ պետությունը ամուսնացած մարդկանց ամուսնության վկայական է տալիս: Խորհրդանիշն ինքը ուխտ չէ, սակայն վկայում է, որ մարդը կապված է պայմանագրով:

Կարդացե՛ք Ծննդոց 9.12-17-ը և 17.2-12-ը: Ո՞րն է տարբերությունը ուխտի խորհրդանիշի և ուխտի միջև այս դեպքերում: Ո՞րն է այս երկու ուխտերի տարբերությունը: _____

_____

_____

Ծննդոց 9.9-11-ում ասվում է, որ Աստված արարչագործության հետ ուխտ կնքեց այն մասին, որ այլևս համաշխարհային ջրհեղեղ չի լինի: Ամեն անգամ, երբ երկնքում հայտնվում է ծիածանը, բոլորը պետք է հիշեն այդ խոստման մասին: Ինչ վերաբերում է թլփատության նշանին, ապա այն յուրաքանչյուր հրեայի պետք է հիշեցներ իր ժողովրդի դերը՝ այլ ժողովուրդներին ավետելու գործում: Մի ուխտը կնքվել է ողջ մարդկության հետ, մյուսը՝ միայն հրեա ժողովրդի հետ: Ջրհեղեղից հե-

տո կնքված ուխտի մեջ մարդկանցից չէր պահանջվում որևէ պայման կատարել, ուխտը տրված էր՝ անկախ նրանց գործերից: Բանն այլ էր Աբրահամի և նրա սերունդների հետ կնքված ուխտի հարցում. մարդիկ պետք է կատարեին պայմանագրի իրենց մասը:

Երկուշաբթի **հունիսի 2**

Ուխտի խոստումները

Ուխտերը հիմնվում են խոստումների վրա: Փաստացի այս երկու եզրույթները որոշակի իմաստով փոխկապակցված են: Իհա՛րկե, երբ ուխտ են կնքում, սպասվում է, որ խոստում տվող անձնավորությունը (ուխտ կնքողը) ի վիճակի է կատարելու խոստացածը (որը ամրագրված է պայմանագրով):

Հինկտակարանյան ժամանակներում որոշ ուխտեր վերաբերում էին տեղական, ոչ մեծ գործերի (տե՛ս, օրինակ, Ծննդոց 31.43-54):

Հակոբի ու Լաբանի դեպքը վկայում է, որ ուխտերը կարող են դաշինքներ կամ համաձայնություններ լինել, որոնք կնքվում են հանրույթների միջև: Մասփայի հուշարձանը պետք է ծառայեր միայն իբրև երկու կլանների միջև կնքված ուխտի խորհրդանիշ: Երբ այդ ուխտով կապված մարդիկ մահացան, դրա պայմանները կորցրին իրենց նշանակությունը: Բայց, ի տարբերություն մարդկանց միջև կնքված այդ ուխտի, այն ուխտերը, որ կնքվել էին Յահվեի և Նոյի ու Աբրահամի միջև, անանց նշանակություն ունեին:

Գաղատացիս 3.15-28 հատվածն ինչպե՞ս է օգնում բացատրելու Աբրահամի հետ կնքված ուխտի առավել մեծամասշտաբ բնույթը: _____

_____

_____

Աստվածաշնչում նկարագրված են Աստծո կողմից կնքված մի քանի ուխտեր, որոնցում Նա տալիս է ողջ մարդկությանը վերաբերող խոստումներ: Խոստովանելով, որ ողջ երկիրը տուժել է ջրհեղեղից, Յահվեն խոստանում է. Նա թույլ չի տա, որ Իր արարչագործությունը կրկին ոչնչացվի: Աբրահամի դեպքում Աստված տեսնում էր մարդկանց՝ արդարության կարիքը, այդ պատճառով խոստացավ երկրի բոլոր ազգերին օրհնել Աբրահամի սերնդի միջոցով (Ծննդոց 22.18):

Թեև Սինայում Աստված ուխտ կնքեց որոշակի ժողովրդի հետ, այդ ուխտը նաև համընդհանուր նշանակություն ունի: Աստված շատ

պարզորոշ գիտակցում էր, որ ցանկացած այլազգի կարող է դառնալ Իսրայել ժողովրդի մասը (Ելից 12.48,49), իսկ Իսրայելի առաքելությունը աշխարհի համար Ավետարանի լույսը լինելու մեջ էր (Ելից 19.5,6):

Անձամբ դուք ինչպե՞ս եք հասկանում ուխտի հիման վրա կառուցված ձեր և Աստծո փոխհարաբերությունները: Այսինքն՝ ի՞նչ է ձեզ խոստացել Աստված, և ի՞նչ արձագանք է Նա սպասում ձեր կողմից:

Երեքշաբթի **հունիսի 3**

Ուխտի տախտակները

Բացի խոստումներից, որոնց վրա հիմնված է ուխտը, սովորաբար գոյություն ունեն նաև պայմաններ, որոնք հարկավոր է ընդունել՝ նախքան խոստումների կատարումը: Աբրահամի հետ Աստծո ուխտի պայմանի մասին խոսում է Ծննդոց 17.1-ում. «Իմ առջև վարվիր և կատարյալ եղիր»: Բացի դրանից, այդ ուխտը ներառում էր Ահարոնի և նրա սերունդների տան արական սեռի բոլոր ներկայացուցիչների թլփատության ծեսը: Երբ Յահվեն ուխտ էր կնքում Իսրայելի հետ, Նա անձամբ քարե տախտակների վրա գրեց փոխհարաբերությունների կառուցման պայմանները (Երկրորդ Օրինաց 9.8-11): Տասը պատվիրաններում արտահայտված այդ պահանջները պետք է ձևավորեին Աստծո հավիտենական ուխտի հիմքը՝ բոլոր մարդկանց հետ:

Քանի որ Տասը պատվիրանները մանրամասնում են ուխտի որոշակի պայմանները, այդ պատվիրաններով քարե տախտակները հաճախ անվանում են «ուխտի տախտակներ» (Երկրորդ Օրինաց 9.9): Տասը պատվիրանները խոչընդոտների գոտի չէ, որ ստեղծված է դժվարացնելու Աստծո հետ ուխտի մեջ մտնողների կյանքը. ընդհակառակը, որպես Աստծո սիրո արտահայտություն՝ դրանք տրվել են հանուն նրանց բարօրության, ովքեր իրենց Տիրոջ հետ ուխտի փոխհարաբերությունների մեջ են մտել:

Երեմիա 31.31-34 և Եբրայեցիս 10.11-18 համարներն ինչպե՞ս են հաստատում Նոր Կտակարանում Աստծո Օրենքի անանց էությունը: _____

_____

_____

Համաձայն Սինա լեռան մոտ կնքված Հին Ուխտի պայմանների՝ իսրայելացիներն ու նրանց միացած այլազգիները պետք է

հավատարմություն դրսևորեին ուխտին՝ Տասը պատվիրանները պահելու միջոցով: Պատվիրանի խախտման դեպքում նրանցից ակնկալվում էր զոհաբերություն, եթե նրանք ցանկանում էին մեղքերի ներում ստանալ:

Գողգոթա սարի վրա կնքված Նոր ուխտի մեջ Աստծո ժողովրդից առաջվա նման ակնկալվում էր հնազանդություն Տասը պատվիրաններին: Սակայն եթե հավատավորը մեղանչի, նրան արդեն հարկավոր չէ զոհաբերություն կատարել, քանի որ Հիսուսը նրա բավարար և կատարյալ զոհն է (Եբրայեցիս 9.11-14): Նոր ուխտը շատ ավելի լավն է հնից, քանի որ այժմ մենք հավատով ընդունում ենք ներման խոստումը, որ պարգևված է մեզ Հիսուսի զոհի միջոցով: «Մեր հույսը միայն Աբրահամի ուխտի՝ Հիսուս Քրիստոսում հավատով շնորհի ուխտի մեջ լինելն է» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 6, 1077):

Ինչպե՞ս կարող է Աստծո օրենքը գրված լինել սրտի մեջ: Այդպիսի ըմբռնումն ինչպե՞ս է տարբերվում Աստծո օրենքի՝ որպես պարտադիր կանոնների հավաքածուի ընկալումից:

Չորեքշաբթի **հունիսի 4**

Ուխտը և Ավետարանը (Եբրայեցիս 9.15-22)

Որոշակի աստվածաշնչյան ուխտերի խախտումն իր հետևից լուրջ հետևանքներ է բերել: Յահվեն նախազգուշացրել է Աբրահամին, որ ցանկացած անթլփատ տղամարդ կբնաջնջվի ընտրյալ ժողովրդի կազմից (Ծննդոց 17.14), իսկ Սինայի ուխտի պայմանները կատարելուց հրաժարվողին կուղղվի անեծքների հոսքը (Երկրորդ Օրինաց 27.11-26): Վերջին հաշվով ուխտի պայմանները խախտողները կպատժվեն մահով (Եզեկիել 18.4): Այդ նույնը վերաբերում է և Նոր ուխտին. Աստծո օրենքը կատարելուց հրաժարվողները զրկվում են հավիտենական կյանքից (Հռոմեացիս 6.23):

Կարդացե՛ք Եբրայեցիս 9.15-28-ը: Այս համարներում ինչպե՞ս է բացահայտվում Ավետարանը: _____

_____

_____

_____

Եբրայեցիս 9.15-28-ում կրկնվում է ավետարանյան պատումը, քանի որ հռչակվում է Քրիստոսի դերը հավատացյալների համար՝ խոստումների իրականացման մասին: 15-րդ համարը ցույց է տալիս, որ

Հիսուսը Նոր ուխտի Բարեխոսն է. Իր մահվան շնորհիվ Նա հավիտենական կյանք է առաջարկում նրանց, ովքեր այլապես կժառանգեին հավիտենական կործանումը:

16 և 17-րդ համարներում Աստվածաշնչի որոշ թարգմանություններ (այդ թվում՝ հայերեն թարգմանություններ) «ուխտ» բառի փոխարեն օգտագործում են «կտակ» բառը, թեև այստեղ նույն հունարեն բառն է: Սա ընդգծում է մահվան գաղափարը՝ Հիսուսի մահը հանուն մեզ: Տվյալ հատվածն ուսումնասիրելով այս համատեքստում՝ մենք հասկանում ենք, որ այն հիշեցնում է հավատացյալին՝ առանց Քրիստոսի ուխտը պահանջում է յուրաքանչյուր մեղավորի մահը: Սակայն մեղավորը կարող է ծածկվել և այնուհետև մաքրվել Քրիստոսի թափած արյամբ և դրա շնորհիվ գտնվել Նրա վերադարձին «սպասողների» մեջ (Եբրայեցիս 9.28):

«Այդ ժամանակ մենք կիմանանք, որ մեր արդարությունն իսկապես նման է աղտոտված հագուստի, և որ միայն Քրիստոսի արյունը կարող է մեզ մաքրել մեղքի պղծությունից և մեր սրտերը մաքրել Նրա նմանությամբ» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 29):

Աստված Ինքը՝ ի դեմս Հիսուսի, Իր վրա կրեց մեր մեղքերի պատիժը, որպեսզի մեզ պահպանի մեզ արժանի պատժից: Ի՞նչ է ասում սա մեզ Աստծո բնավորության մասին, և ինչո՞ւ կարող ենք մենք վստահել Նրան՝ անկախ հանգամանքներից:

Հինգշաբթի **հունիսի 5**

Ուխտի առավելությունները (Եփեսացիս 2.6)

Շատ դեպքերում մարդիկ կարող են օգտվել ուխտի խոստումներից՝ նախքան բոլոր պայմանները կատարելն անգամ: Օրինակ՝ տուն գնող մարդը հնարավորություն ունի այդ տանն ապրել՝ նախքան դրա համար մինչև վերջ վճարելը: Ճիշտ այդպես քաղաքացին օգտվում է պետության մատուցած ծառայություններից՝ նախքան կսկսի հարկեր վճարել: Աստծո հետ ուխտի մեջ մտնողները նույնպես կարող են օգտվել առավելություններից՝ նախքան ապագայում խոստման կատարումը:

Խորհե՛ք, օրինակ, Տասը պատվիրանների և այն մասին, թե որքա՜ն տառապանքներից ու ցավից կարող էին խուսափել մարդիկ, եթե պարզապես հետևեին դրանց: Ո՞վ չի անձնական փորձով վերապրել հոգևոր տառապանքներ, որոնք դարձել են այդ պատվիրանների խախտման հետևանք: Բացի դրանից, միշտ չէ, որ տառապում են միայն

օրենքը խախտողները. հաճախ ուրիշներն էլ, հատկապես մեղավորին ամենամտերիմ մարդիկ, նույնպես տանջվում են:

Համաձայն բերված համարների՝ է՞լ ինչ առավելություններ կարելի է ձեռք բերել արդեն այսօր՝ ուխտի փոխհարաբերությունների մեջ լինելով Հիսուսի հետ:

Բ Կորնթացիս 4.16-18 _____

_____

Ա Հովհաննես 5.11-13 _____

_____

Փիլիպեցիս 1.6 _____

_____

Հովհաննես 5.24 _____

_____

Հովհաննեսի Ավետարանում բերված են Հիսուսի հզոր խոսքերն այն մասին, որ Իրեն ընդունողները «մահից փոխվեցին դեպի կյանք» (Հովհաննես 5.24): Հավատավորն այնքան վստահ է իր փրկությանը, որ, դեռևս գտնվելով երկրի վրա, կարող է հավատով նստել «երկնավորումներում Քրիստոս Հիսուսում» (Եփեսացիս 2.6):

Եթե որևէ մեկը հարցներ ձեզ. «Ի՞նչ է նշանակում արդեն հիմա Հիսուսի հետ նստել երկնքում», դուք ի՞նչ կպատասխանեիք և ինչո՞ւ:

Ուրբաթ **հունիսի 6**

Հետագա ուսումնասիրության համար

Այս դասի թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար Է. Ուայթի «Աստծո զարմանահրաշ շնորհը» գրքից կարդացե՛ք «Շնորհի ուխտը» գլուխը (131-137):

«Այդ նույն ուխտը նորոգվել էր Աբրահամի հետ՝ «և երկրի բոլոր ազգերը քո սերնդով կօրհնվեն» խոստման մեջ (Ծննդոց 22.18): Այս խոստումը մատնանշում էր Քրիստոսին: Աբրահամը հասկանում էր դա և հավատում էր մեղքերի ներմանը՝ Քրիստոսի միջոցով: Այդ հավատը նրան արդարություն համարվեց: Աբրահամի հետ ուխտը նաև հաստատում էր Աստծո օրենքի հեղինակությունը: Աբրահամի հետ ուխտը հաստատվեց Քրիստոսի արյամբ և անվանված է «երկրորդ» կամ «նոր» ուխտ, որովհետև արյունը, որով այն հաստատվեց, թափվել էր առաջին ուխտի արյունից հետո: Շնորհի ուխտը նոր ճշմարտություն չէ,

քանի որ այն Աստծո ծրագրում գոյություն ուներ հավիտենից ի վեր: Այդ պատճառով այն անվանված է հավիտենական ուխտ: Մենք կարող են հույս ունենալ՝ միայն մտնելով Աբրահամի ուխտի մեջ, որը Քրիստոս Հիսուսի հավատով շնորհի ուխտն է» (Է. Ուայթ, Հավատը, որով ես ապրում եմ, 75):

Հարցեր քննարկման համար

1. Ելից 31.16 և Եսայիա 56.4-6 համարներում ի՞նչ է ասվում ուխտի համատեքստում շաբաթի կարևորության մասին: Տե՛ս նաև Եզեկիել 20-ը:
2. Հաճախ կարելի է լսել, որ հին ուխտը, որը կնքված էր Աբրահամի հետ, գործերի ուխտ էր՝ ի տարբերություն նոր ուխտի՝ շնորհի ուխտի: Ինչո՞ւ է սխալ այս գաղափարը: Դուք ի՞նչ աստվածաշնչյան համարներ կարող եք մեջբերել, որ դա միշտ եղել է շնորհի, ոչ թե գործերի ուխտ: Թեև Եփեսացիս 1.4-ում չկա «հավիտենական ուխտ» դարձվածքը, այն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալու, թե ինչու է այն այդպես անվանվում:
3. Աստված խոստացավ, որ այլևս աշխարհը չի կործանի ջրհեղեղով: Եթե, ինչպես ենթադրում են որոշ մարդիկ, ջրհեղեղը տեղային բնույթ էր կրում, ապա ինչո՞ւ է այն անվանարկում Աստծո ուխտը: Ինչո՞ւ այն միտքը, որ ջրհեղեղը համաշխարհային չէր, լուրջ հարձակում է աստվածաշնչյան ճշմարտության վրա: Ի վերջո, նայե՛ք բոլոր տեղային հեղեղներին, որոնք տեղի են ունեցել ջրհեղեղից հետո: Եթե Նոյի ջրհեղեղը լոկ տեղային էր, Աստծո ուխտի խոստման համատեքստում ինչպե՞ս ընկալել մյուս տեղային հեղեղումները:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 3.31, 6.15, Գործք առաքելոց 10.9-14, Հովհաննես 15.1-11, Հակոբոս 2.1-26, Եբրայեցիս 3.7-19, Հուդա 5-7:

Հիշելու համարը.

«Ուրեմն օրենքը սուրբ է, և պատվիրաններն էլ սուրբ են և արդար և բարի» (Հռոմեացիս 7.12):

Այսքան վկայություններ ունենալով այն մասին, որ Աստծո օրենքը չի կորցրել իր նշանակությունն ու այժմեականությունը, ինչո՞ւ շատ քրիստոնյաներ չեն ցանկանում համաձայնել դրա հետ:

Առաջին հերթին, ոմանք (ինչպես մենք արդեն տեսել ենք), դիտարկելով որոշ նորկտակարանյան համարներ, որտեղ խոսվում է օրենքի գործառնության սխալ ընկալման մասին, գալիս են եզրակացության, որ խնդիրը բուն օրենքի մեջ է: Արդյունքում նրանք սկսում են պնդել, որ Տասը պատվիրանները պարտադիր չեն նրանց համար, ովքեր ապրում են Նոր ուխտի մեջ:

Երկրորդ, ուրիշներն էլ այնքան վստահ են, որ շաբաթը ոչ մի առնչություն չունի քրիստոնեության հետ, որ այդպիսի դիրքորոշման համար սկսում են պնդել. բոլոր պատվիրանները խաչին են գամվել Հիսուսի հետ միասին:

Երրորդ, կան նաև այնպիսիք, ովքեր համարում են, որ ինը պատվիրանները շարունակում են գործել, իսկ ահա չորրորդը, որտեղ խոսվում է յոթերորդ օրվա՝ շաբաթի մասին, փոխվել է և շաբաթի փոխարեն տոնական օր է համարվում կիրակին, և այդ օրը հարկավոր է պահել՝ ի հիշատակ Հիսուսի հարության:

Նշված դիրքորոշումներից յուրաքանչյուրն իր հետևից բերում է մի շարք խնդիրներ: Այս շաբաթ մենք կտեսնենք, թե ինչպես էին վերաբերվում օրենքին Քրիստոսի աշակերտները. չէ՞ որ եթե այն վերացվել կամ փոփոխվել է Քրիստոսի մահից հետո, առաքյալներն, անկասկած, որևէ բան կիմանային այդ մասին:

Պողոսը և օրենքը

Ասում են, թե Պողոսը քրիստոնեության ճշմարիտ հիմնադիրն է: Իհարկե՛, դա այդպես չէ: Թեև Պողոսն ահռելի ավանդ ունի քրիստոնեական դավանաբանության մեր աստվածաբանական ըմբռնման մեջ, և նրա գրչին են պատկանում Նոր Կտակարանի 27 գրքերից 14-ը, սակայն նրա ուղերձների բոլոր գաղափարներին փաստացի կարելի է հանդիպել Սուրբ գրքի այլ տեղերում ևս: Հիմնական պատճառը, թե ինչու են ոմանք պնդում՝ իբր Պողոսը հիմնադրել է «նոր» կրոն, թաքնված է օրենքի ու շնորհի մասին նրա ուսմունքի սխալ ըմբռնման մեջ:

Կարդացե՛ք հետևյալ համարները. *Հռոմեացիս 3.28, 6.14, 7.4, Գաղատացիս 3.24,25*: Ինչո՞ւ կարող է առաջին հայացքից թվալ, թե այդ համարներն իսկապես վերացնում են օրենքը: _____

_____

_____

_____

Առանձին-առանձին կարդալով՝ այս համարները որոշակիորեն այնպիսի տպավորություն են թողնում, թե քրիստոնյաների համար օրենքը կորցրել է իր այժմեականությունը: Սակայն այս բոլոր համարները առավել լայն համատեքստի մասն են, որը մենք պետք է հաշվի առնենք՝ հասկանալու համար, թե իրականում ինչի մասին է խոսում Պողոսը:

Ուսումնասիրե՛ք համատեքստերը, որոնցում հանդիպում են վերը թվարկված բոլոր համարները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Հռոմեացիս 3.31, 6.15, 7.7-12 և Գաղատացիս 3.21-ի վրա: Ինչպե՞ս են այդ համարները, ինչպես նաև ողջ համատեքստը օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու Պողոսի վերաբերմունքն օրենքին: _____

_____

_____

_____

Նրանք, ովքեր գլուխ չեն հանել հավատքով արդարացման հայեցակարգից, կարող են մտածել, որ Պողոսը հակասում է ինքն իրեն: Մի դեպքում նա պնդում է, թե քրիստոնյան օրենքի տակ չէ, և միևնույն ժամանակ այդ նույն քրիստոնյան պարտավոր է պահել օրենքը: Այս խնդիրը լուծվում է, եթե մենք մտաբերում ենք, որ Աստված արդա-

րություն է պահանջում Իր հետ իրենց փոխհարաբերությունների մասին հայտարարող մարդկանցից: Արդարության չափանիշը Նրա օրենքն է: Սակայն երբ մարդկանց չափում են Աստծո օրենքով, նրանք չեն համապատասխանում այդ չափանիշին և այդ պատճառով դատապարտված են օրենքով: Եթե օրենքը փրկության միջոց լիներ, ապա ոչ մի մարդ հավիտենական կյանքի հույս չէր ունենա: Քրիստոնյաների հույսը սքողված է ոչ թե օրենքի, այլ Հիսուս Քրիստոսի մեջ, Ով ոչ միայն կատարելապես իրագործեց օրենքը, այլև Աստծո հրաշագործ զորության միջոցով հավատավորներին թույլ է տալիս դառնալու Իր արդարության հաղորդակիցներ (Հռոմեացիս 8.3,4): Այժմ քրիստոնյաները կարող են հանգիստ խղճով հետևել Աստծո օրենքին, որովհետև Քրիստոսն Իր վրա է վերցրել օրենքի դատապարտումը (Հռոմեացիս 7.25-8.2): Քրիստոսից բխող շնորհը մեզ չի ազատում օրենքից, այլ դրդում է հնազանդվել դրան:

Երկուշաբթի **հունիսի 9**

Պետրոսը և օրենքը (Ա Պետրոս 2.9)

Պետրոսը Հիսուսին ամենամոտ աշակերտներից մեկն էր: Որպես ամենաառաջին ընտրված աշակերտներից մեկը՝ Պետրոսը մասնակցում էր Հիսուսի ծառայության շատ նշանակալից իրադարձություններին: Փիլիպոսյան Կեսարիայում նա հայտարարեց, որ Հիսուսը Օծյալն է: Պետրոսը Փրկչին հետևում էր մինչև Կայիափայի տունը այն գիշեր, երբ Հիսուսին ձերբակալեցին և տանջեցին: Այն առավոտ, երբ հարություն առած Հիսուսը ծովի մոտ հայտնվեց աշակերտներին, հենց Պետրոսը յուրահատուկ ցուցումներ ստացավ Քրիստոսին ծառայելու վերաբերյալ: Երբ հավատացյալների առաջին խումբը հավաքվեց Պենտեկոստեի օրը, Պետրոսը գլխավոր քարոզողն էր այդ խմբի անունից: Անկասկած, եթե օրենքը որևէ կերպ փոփոխված լիներ, Պետրոսը կիմանար այդ մասին:

Գործք առաքելոց 10.9-14-ում ի՞նչ է ասվում հրեական օրենքին՝ Պետրոսի հավատարմության մասին, Հիսուսի համբարձումից հետո: Եթե Պետրոսը նման կերպ էր խորհում՝ սննդի վերաբերյալ օրենքների առումով, ինչպիսի՞ն էին Տասը պատվիրանների անփոփոխության վերաբերյալ նրա տեսակետները: _____

_____

_____

Այդ տեսլիքը Պետրոսն ստացել էր Հիսուսի համբարձումից մի քանի տարի անց: Աշակերտների քարոզելու արդյունքում հազարավոր հրեաներ արդեն ընդունել էին Հիսուսին՝ որպես Մեսիայի: Աստվածաշնչյան պատումի հիման վրա չի կարելի եզրակացնել, որ քրիստոնեական լուրը ներառում էր օրենքի վերացման մասին ցուցումներ: Գործք առաքելոց 10-ում նկարագրված դեպքը հստակ կերպով վկայում է այն մասին, որ քրիստոնյաները իրենց լիովին նույնականացնում էին իրենց հրեական արմատների հետ:

Ա Պետրոս 2.9-ը համեմատե՛ք Ելից 19.6-ի հետ: Ո՞րն է Ելից 19.6-ի համատեքստը: _____

_____

_____

Երբ Պետրոսն իր ունկնդիրներին դիմեց որպես «ընտիր ազգի, քահանաների թագավորության», նրանք իսկույնևեթ պետք է հիշեին Սինայի վրա օրենքը ստանալու մասին: Որպես տոհմական իսրայելացիներ՝ նրանք պետք է պահեին ուխտի պայմանները, որոնք հստակ կերպով արտահայտված են Աստծո օրենքում: Այդ պատճառով անմիջապես մարդկանց կողմից իրենց կարգավիճակի հիշեցումից հետո Պետրոսը նրանց կարգադրում է ապրել արդար կյանքով (Ա Պետրոս 2.11,12): Նա նաև նախազգուշացնում է իր ունկնդիրներին, որպեսզի զգուշանան՝ օրենքից ազատ «ավետարան» քարոզող կեղծ ուսուցիչներից (Բ Պետրոս 2.21, 3.2):

Հիշե՛ք, թե որքան վատ վարվեց Պետրոսը՝ ուրանալով Քրիստոսին, բայց ի՞նչ շնորհ դրսևորվեց նրա հանդեպ: Մենք ինչպե՞ս կարող ենք (1) սովորել նման շնորհ դրսևորել շրջապատողների հանդեպ և (2) ընդունել այն, երբ ինքներս ենք սխալներ գործում:

Երեքշաբթի **հունիսի 10**

Հովհաննեսն ու օրենքը

Հովհաննեսը Նոր Կտակարանում գրված գրքերի քանակով երկրորդն է Պողոսից հետո: Նա գրել է Ավետարանը, երեք ուղերձ և Հայտնություն գիրքը: Պետրոսի նման, նա եղել է Հիսուսի ընտրած առաջին աշակերտներից մեկը, նա նույնպես առանձնահատուկ փոխհարաբերություններ ուներ Հիսուսի հետ: Հիսուսի հետ նրա մտերմության պատճառով նրան նաև անվանում են Քրիստոսի սիրելի աշակերտը: Դատելով նրա Ավետարանի վերջին համարից՝ (Հովհաննես 21.25)

Հովհաննեսին շատ բան էր հայտնի Հիսուսի գործունեության մասին: Անկասկած, Հիսուսին այդքան մտերիմ մարդը, ինչպես Հովհաննեսն էր, կիմանար, որ Հիսուսը վերացրել է Աստծո օրենքը, եթե դա այդպես լիներ:

Կարդացե՛ք Հովհաննես 15.1-11-ը և Ա Հովհաննես 2.3-6-ը: Այս համարներն ի՞նչ են ասում մեզ այն մասին, թե մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք Աստծո պատվիրաններին: _____

_____

_____

Իր երկրային կյանքի ավարտին Հիսուսը աշակերտներին վկայեց, որ Ինքը հավատարիմ է եղել Հոր պատվիրաններին և այդ պատճառով կենում է Նրա սիրո մեջ (Հովհաննես 15.10): Հիսուսը պատվիրանները չէր համարում խոչընդոտ, որից պետք է ազատվել. հակառակը, Նա դրանք համարում էր իրենց հրահանգավորումը՝ Աստծո և շրջապատող մարդկանց հետ սիրո փոխհարաբերություններ կառուցելու համար: Երբ Հովհաննեսը՝ սիրելի աշակերտը, քրիստոնյաներին հիշեցնում է նրանց պարտավորությունների մասին, որ ունեն Աստծո առջև, նա Ավետարանում օգտագործում է սիրո և միասնության այն նույն լեզուն, ինչ և Հիսուսը: Փաստորեն Հովհաննեսը հասկանում էր, որ սերը միշտ եղել է օրենքի էությունը (տե՛ս Ա Հովհաննես 5.3, Բ Հովհաննես 6-ը): Մարդը չի կարող պնդել, թե պահում է օրենքը, եթե սիրով չի վերաբերվում Աստծուն և շրջապատող մարդկանց:

«Աստծո օրենքը պահանջում է, որ մենք սիրենք մեր մերձավորներին, ինչպես ինքներս մեզ: Այդ պատճառով մտքի ողջ ուժն ու գործունեությունը պետք է ուղղված լինեն մի նպատակի՝ հնարավորինս շատ բարիք գործել: Որքա՜ն հաճելի է Տվողին, երբ մարդը պահում է հոգու արքայական պարգևները, որպեսզի դրանք մեծազոր վկայություն լինեն շրջապատողների համար: Նրանք կապող օղակ են Աստծո և մարդու միջև՝ բացահայտելով Քրիստոսի Հոգին և երկնքի բնութագիրը: Սրբության զորությունը տեսանելի է, սակայն ցուցադրելի չէ, խոսում է առավել պերճախոս, քան ամենատաղանդավոր քարոզները: Նա խոսում է Աստծո մասին և մարդկանց բացահայտում է նրանց պարտքն առավել հզորապես, քան դա կարող են անել բառերը» (Է. Ուայթ, Հրատարակված ձեռագրեր, հատոր 20, 138):

Ինչպիսի՞ն է ձեր անձնական փորձառությունը՝ օրենքի և սիրո միջև կապի առնչությամբ: Այսինքն՝ անձնական գործնական օրինակով սերն ինչպե՞ս է արտահայտվում Աստծո օրենքին հնազանդվելու միջոցով:

Հակոբոսը և օրենքը

«Չէ՞ որ նրանք են հայհոյում այն բարի անունը, որ ձեր վրա կանչված է: Արդ եթե թագավորական օրենքը կատարեք գրվածի համեմատ, թե՝ Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես, լավ եք անում: Բայց եթե աչառություն եք անում, մեղք եք անում՝ հանդիմանված օրենքից՝ որպես օրինազանցներ» (Հակոբոս 2.7-9):

Հակոբոսին է վերագրվում Աստվածաշնչի միայն մեկ գրքի հեղինակությունը: Թեև հեղինակն ինքը չի հստակեցնում, թե որ Հակոբոսն է ինքը, համընդհանուր ճանաչում ստացած կարծիքն այն է, որ այդ ուղերձի հեղինակը Հիսուսի եղբայր Հակոբոսն է (Հովհաննես 7.5), բայց ժամանակի ընթացքում Հակոբոսը ազդեցիկ առաջնորդ դարձավ նորկտակարանյան ժամանակի եկեղեցում (Գործք առաքելոց 15.13, Գաղատացիս 1.19, 2.9): Կրկնենք, որ եթե Հիսուսը մտադիր լիներ վերացնել Աստծո օրենքը, այդ մասին անշուշտ կիմանար Նրա եղբայրը:

Կարդացե՛ք Հակոբոս 2.1-26-ը: Ո՞րն է այդ գլխի հիմնական լուրը: Ինչո՞ւ Հակոբոսը, 8 և 9-րդ համարներում հանրագումարի բերելով օրենքը, անմիջապես սկսում է խոսել բոլոր պատվիրանները պահելու մասին: Այդ համարներում ինչպե՞ս է երևում սիրո և Աստծո օրենքին հնազանդվելու միջև կապը: ___

_____

_____

_____

_____

Սխալ ըմբռնելով Պողոսի ուսմունքը օրենքի մասին՝ ոմանք պնդում են, որ Հակոբոսն ու Պողոսը օրենքի դերի առնչությամբ հակասում են միմյանց: Տարաձայնության գլխավոր պահը գործերի դերն է փրկության հարցում: Պողոսը հայտարարում է, որ մենք փրկվում ենք հավատով արդարացման միջոցով՝ անկախ գործերից (Եփեսացիս 2.8,9), իսկ Հակոբոսն ընդգծում է, որ «հավատքն առանց գործերի մեռած է» (տե՛ս Հակոբոս 2.26): Սակայն այդ պնդումները չեն հակասում միմյանց. Հակոբոսը պարզապես շեշտում է այն, ինչի մասին բազմիցս խոսել է Պողոսը. շնորհը չի վերացնում օրենքը: Ինչպես և Պողոսը (տե՛ս Հռոմեացիս 13.9), Հակոբոսը շատ լավ հասկանում է, որ Աստծո օրենքի էությունը սերն է (տե՛ս Հակոբոս 2.8): Ոչ ոք չի կարող պնդել, որ սիրում է Աստծուն և մերձավորին, եթե չի պահում Աստծո պատվիրանները:

Հուդան և օրենքը

Հուդայի ուղերձը Նոր Կտակարանի գրքերից ամենահամառոտն է: Համարվում է, որ այն գրել է Հիսուսի մյուս եղբայրը: Իրեն անվանելով Հիսուս Քրիստոսի ծառան՝ հեղինակը հայտնում է նաև, որ Հակոբոսի եղբայրն է: Քանի որ Մատթեոսը Հակոբոսին ու Հուդային հիշատակում է որպես Հիսուսի չորս եղբայրներից երկուսի (Մատթեոս 13.55), աստվածաբանները համարում են, որ այդ համառոտ ուղերձը գրած Հուդան Փրկչի եղբայրն էր: Ինչպես և մյուս բոլոր աստվածաշնչյան հեղինակները, ում մասին մենք խոսում ենք այս դասին, Հուդան նույնպես կիմանար, եթե Հիսուսը վերացներ օրենքը:

Թեև Հուդան չի հիմնվում ո՛չ օրենքի, ո՛չ պատվիրանների վրա, նրա ողջ ուղերձը խոսում է Աստծուն հավատարիմ լինելու և Նրա օրենքի խախտման հետևանքների մասին:

Կարդացե՛ք Հուդա 4-ը: Այս բառերն ինչպե՞ս են կապված մեր ողջ թեմայի հետ: _____

_____

_____

Շնորհի հիշատակումն իսկ ենթադրում է օրենքի գոյությունը, որովհետև դրա կարիքը չէր լինի, եթե չլիներ մեղքը (Հռոմեացիս 5.18-6.15): Այդ կեղծ ուսուցիչների ուսմունքն այնքան սոսկալի էր, որ Հուդան այն գնահատում է որպես Իր՝ Տիրոջ մերժում:

Եբրայեցիս 3.7-19 համարներն ինչպե՞ս են օգնում՝ լույս սփռելու Հուդա 5-7 համարների վրա: Ինչպե՞ս են երկու հատվածները միասին վերցրած վկայում հնազանդության և հավատի փոխադարձ կապի մասին: _____

_____

_____

Հուդան դիվանագիտորեն հիշեցնում է՝ եգիպտական ստրկությունից ազատագրված իսրայելացիների փորձառության մասին: Աստված հայտնեց նրանց Իր զորությունը, անգամ տվեց օրենքը, բայց նրանք անհավատարմություն դրսևորեցին և բախվեցին սոսկալի հետևանքների՝ Նրանից բաժանվելու պատճառով: Հուդան հստակ հասկացնում է, որ մարդիկ կարող են ընկնել, և այդպիսիները կներկայանան դատարանին: Նա պարզորոշ արտահայտում է ճշմարտությունը, որը նույնքան հստակ կերպով արտահայտված է ողջ Սուրբ

Գրքում. ամենքը, ովքեր հայտարարում են իրենց հավատի մասին, պետք է պատրաստակամորեն դրսևորեն այդ հավատը՝ հնազանդության կյանքում:

Կարդացե՛ք Հուդայի ուղերձը: Բացի բոլոր լուրջ նախազգուշացումներից, դուք ձեզ համար ի՞նչ խոստումներ կարող եք գտնել այս գրքում:

Ուրբաթ **հունիսի 13**

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք Է. Ուայթի «Օրենքը քրիստոնեական դարաշրջանում» հոդվածը, Ժամանակի նշանները, օգոստոսի 5, 1886թ.:

«Ինչո՞ւ էին առաքյալները Տիրոջ առջև ապաշխարություն սովորեցնում: Որովհետև մեղավորը կործանել է Հոր հետ փոխհարաբերությունները: Մեղավորը խախտել է օրենքը. նա պետք է տեսնի իր մեղքը և ապաշխարի: Հետո՞ ինչ պետք է նա անի: Նայել Հիսուսին, որովհետև միայն Նրա արյունը կարող է մաքրել ցանկացած մեղքից: Քրիստոսի հավատն անհրաժեշտ է, քանի որ օրենքը փրկարար հատկություն չունի: Օրենքը դատապարտում է, բայց չի կարող ներել այն խախտողին: Մեղավորը պետք է հիմնվի Քրիստոսի արյան արժանիքների վրա: «Կամ թե Իմ զորությունից բռնեն, Ինձ հետ խաղաղություն անեն, - ասում է մեր ողորմած Փրկիչը, - խաղաղություն անեն Ինձ հետ» (Եսայիա 27.5): Մեր Տերը հռչակել է, որ ավելի շատ սիրում է նա, ով իրեն տեսնում է այնպիսին, ինչպիսին ինքը կա իրականում՝ մեղքից փչացած, Աստծո սուրբ օրենքի օրինախախտ: Նա, ով լիովին գիտակցում է օրենքի սրբազան պահանջները, առավել հստակ կերպով կտեսնի իր մեղքերի ծանրությունը և կզգա, որ իսկապես շատ բան է ներված իրեն» (Է. Ուայթ, Ժամանակի նշանները, օգոստոսի 5, 1886թ.):

Հարցեր քննարկման համար

1. Ուշադի՛ր կարդացեք էլեն Ուայթից վերը բերված մեջբերումը: Ինչպե՞ս է այն լույս սփռում աստվածաշնչյան ուսմունքի վրա, որը մենք ուսումնասիրում ենք այս եռամսյակում: Ի՞նչ է նշանակում «Մեղավորը պետք է հիմնվի Քրիստոսի արյան արժանիքների վրա»:
2. Խորհեցե՛ք Հուդա 4-ում գրի առնված նախազգուշացման մասին: Եթե մարդիկ հռչակում են Աստծո շնորհը, նրանք, ակներևաբար, հավա-

տավոր մարդիկ են: Սակայն Հուդան ասում է, որ նրանք ուրանում էին Տիրոջը: Ինչպիսի՞ լուրջ նախազգուշացում է սա նրանց համար, ովքեր պնդում են, թե Աստծո շնորհը վերացրել է օրենքը: Իրականում ինչի՞ց են փորձում ազատվել մարդիկ՝ պնդելով, թե օրենքը վերացված է:

3. Օրենքի կամ անգամ պատվիրաններից մեկի մերժումն ինչպե՞ս է ձեռնտու սատանային, ով ձգտում է վերացնել Աստծո օրենքը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծնունդոց 2.16-3.7, Ծնունդոց 6, Ծնունդոց 12, Երկրորդ Օրինաց 7.6-12, Դաղատացիս 3.6-16, Հայտնություն 12.17, 14.6-12:

Հիշելու համարը.

«Այստեղ է սուրբերի համբերությունը, այստեղ են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատը պահողները» (Հայտնություն 14.12):

Փոխանցավազքի ժամանակ թիմը սովորաբար բաղկացած է չորս վազորդներից: Թիմի անդամները, հնարավոր է, երբևէ մրցել են միմյանց հետ, սակայն գտնվում են նույն թիմում, այդ պատճառով նրանց անհրաժեշտ է սովորել մտածել որպես մեկ մարդ: Բուն վազքի մեջ ճանապարհի երկարությունը բոլոր վազորդների միջև բաժանվում է հավասար հատվածների: Միաժամանակ կարող է վազել թիմի միայն մեկ անդամը՝ նա, ում ձեռքին է փոխանցման ձողը: Փոխանցման ձողը ճարպկորեն անցնում է թիմի մեկ անդամից մյուսին, մինչև որ վազքն ավարտվի: Որոշակի իմաստով փոխանցման ձողը թիմի անդամների միասնության խորհրդանիշն է:

Աստծո եկեղեցին ինչ-որ բանով նման է փոխանցավազքի թիմին: Սկսած Ադամից Եդեմի այգում՝ փոխանցման ձողը ժամանակահատվածից ժամանակահատված փոխանցվել է փրկության պատմության մեջ՝ Ադամից Նոյին, Նոյից Աբրահամին, Սինայից նորկտակարանյան եկեղեցուն, բարեհորոգիչներից՝ այսօր երեք հրեշտակների լուրը հռչակողներին:

Աստծո եկեղեցու ամբողջականության խորհրդանիշը Նրա օրենքն է, որը մեղանչումից հետո միշտ պետք է միավորվի Աստծո փրկարար շնորհի հետ: Նրանք միասին կազմում են Ավետարանի էությունը:

Այս շաբաթվա դասը ի հայտ է բերում օրենքի և շնորհի անընդհատությունն Աստծո եկեղեցում՝ բոլոր դարերի ընթացքում:

Ադամից՝ Նոյին

Որոշակի իմաստով մենք կարող ենք խոսել «Քրիստոսի եկեղեցու» մասին՝ միայն սկսած նորկտակարանյան դարաշրջանից, երբ հավատավորներն առաջին անգամ դարձան Հիսուսի կյանքի, մահվան և հարության վկաները: Սակայն մենք կարող ենք Քրիստոսի եկեղեցին տեսնել առավել լայն համատեքստում: Հունարեն *եկեղեցի* նշանակում է *էկկլեսիա*: Փոխառնված լինելով ոչ կրոնական աշխարհից՝ այդ բառը նշանակում է նրանք, ովքեր «կանչված» են: Յուրաքանչյուր սերնդում Աստված «կանչում էր» մարդկանց, ովքեր կատարում էին Նրա կամքը՝ իրենց կյանքում դրսևորելով հավատ, վստահություն, սեր և հնազանդություն:

Կարդացե՛ք Ծննդոց 2.16-3.7-ը: Ի՞նչ փորձություն էր տրված Ադամին ու Եվային: Ինչի՞ համար պետք եղավ այդպիսի ստուգումը կատարյալ էակներին: _____

_____

_____

Ադամն ու Եվան ստեղծված էին որպես բարոյապես ազատ անձնավորություններ, որպեսզի ունենային սիրելու ընդունակություն: Նրանք պետք է հնարավորություն և ազատություն ունենային՝ սխալ վարվելու, չնայած նրան, որ դրա համար պատճառ չունեին: Բարու և չարի գիտության ծառի հետ կապված փորձությունը բարոյական բնույթ էր կրում. ի՞նչ կերպ են օգտագործում նրանք Աստծուց իրենց պարգևված բարոյական ազատությունը: Մենք գիտենք այս հարցի պատասխանը:

Բարոյականության կենտրոնը Աստծո օրենքն է, որը սահմանում է տալիս բարուն և չարին (ուշադրություն դարձրեք, որ ծառն անվանված է «բարու և չարի գիտության ծառ»): Ո՞րն էր օրենքի նպատակը, որն արգելում է ստել, գողանալ և սպանել, եթե մարդիկ սկզբունքորեն անընդունակ լինեին այդ արարքները կատարելուն: Օրենքն անիմաստ կլիներ ավտոմատ էակների աշխարհում, որոնք ընդունակ կլինեին միայն բարիք գործել: Սակայն Աստված որոշեց այլ կերպ ստեղծել մեզ, քանի որ ցանկանում էր, որ մենք կարողանանք իսկապես սիրել:

Թեև մեղանչումից հետո Ադամն ու Եվան պետք է «փոխանցեին փոխանցման ձողը» հաջորդ սերունդներին, մարդկային բարոյականության մակարդակն արագորեն ընկնում էր: Նրանց առաջին եր-

կու որդիներից միայն Աբելը որոշեց միանալ Աստծո եկեղեցուն, այն ժամանակ, երբ Կայենին տիրեց նախանձի, ստի, սպանության և ծնողների հանդեպ անհարգալից վերաբերմունքի ոգին: Ամեն բան ընթանում էր վատից դեպի վատթարագույնը, մինչև որ չարը մթագնեց բարիքը: Ջրհեղեղի ժամանակ միայն Նոյն ու իր ընտանիքը կարող էին իսկապես անվանվել Քրիստոսի եկեղեցու անդամներ:

Վերջին 24 ժամվա ընթացքում դուք քանի՞ անգամ եք բարոյական որոշում ընդունել՝ օգտագործելով Եդեմում մարդկանց պարգևված ազատությունը: Դրանք ի՞նչ որոշումներ էին և որքանո՞վ էին համապատասխանում Աստծո բարոյական օրենքին:

Երկուշաբթի **հունիսի 16**

Նոյից դեպի Աբրահամ (Ծննդոց 6.5-9)

Աշխարհը, որտեղ ծնվել էր Նոյը, չափազանց ապականված էր: Մարդկանց կյանքի տևողությունը հասնում էր գրեթե հազար տարու, և չարն այնքան էր ներթափանցել հասարակության մեջ, որ «Տերը զղջաց, որ երկրի վրա մարդուն ստեղծեց, և Իր սրտի մեջ տրտմեց» (Ծննդոց 6.6):

Կարդացե՛ք Ծննդոց 6-ը և պատասխանե՛ք առաջարկված հարցերին.

1. Աստված «զղջաց», որ ստեղծել է մարդուն: Ինչպե՞ս հասկանալ այս արտահայտությունը: Ինչո՞ւ այն *չի* նշանակում, թե Աստված չգիտեր այն մասին, ինչ տեղի կունենա: (Տե՛ս Երկրորդ Օրինաց 31.15-17) _____

_____

_____

2. Ծննդոց 6.2 համարում ասված է. «*Աստծո որդիները*, տեսնելով *մարդկանց աղջիկներին*, որ գեղեցիկ էին, ամեն իրենց հավանածներից իրենց համար կանայք էին առնում»: Էլեն Ուայթը բացատրում է. սա նշանակում է, որ արդար ամուսինները ամուսնանում էին ոչ արդար կանանց հետ: Ի՞նչ դասեր մենք կարող էինք քաղել Ծննդոց 6-ից՝ եկեղեցու և աշխարհի փոխհարաբերություններից: _____

_____

_____

_____

3. Ո՞ր արարքներով էին մարդիկ զայրացնում Աստծուն, և այդ գործերն ի՞նչ առնչություն ունեն Նրա օրենքի հետ: _____

_____

_____

4. Խորհեցե՛ք Ծննդոց 6-ում Նոյի կյանքի նկարագրության մասին: Ի՞նչ է հայտնում այդ գլուխը նրա մասին և ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե ինչպիսի մարդ էր Նոյը, հատկապես՝ այսքան այլասերված աշխարհի համատեքստում: Միևնույն ժամանակ, ինչո՞ւ Նոյը «Տիրոջ առջև շնորհ գտնելու» կարիք ուներ (համար 8): Սա ի՞նչ է ասում մեզ Աստծո օրենքի և արդեն այն ժամանակ գոյություն ունեցող հավատի փոխադարձ կապի մասին: _____

_____

_____

_____

Երեքշաբթի **հունիսի 17**

Աբրահամից դեպի Մովսես

Ջրհեղեղից հետո Նոյի և նրա որդիների վրա ընկավ՝ Աստծո կամքն իրենց սերունդներին փոխանցելու պատասխանատվությունը: Նոյի ընտանիքը գիտեր, որ համաշխարհային կործանումը վրա էր հասել աշխարհին՝ Աստծո օրենքին ենթարկվելու՝ մարդկանց ցանկության բացակայության արդյունքում, և նրանք պետք է նպաստեին առավել հոգևոր սերնդի դաստիարակմանը: Ցավոք, ջրհեղեղից ոչ շատ անց երկրի բնակիչները կրկին ապստամբեցին Աստծո դեմ (Ծննդոց 11.1-9): «Նրանցից շատերը հերքում էին Աստծո գոյությունը և համարում էին, որ ջրհեղեղը առաջ էր եկել զուտ բնական պատճառներից: Ուրիշները հավատում էին գերագույն էակին և համարում էին, որ հենց նա էլ ոչնչացրել էր հին աշխարհը և, Կայենի նման, ապստամբեցին Նրա դեմ» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 119):

Ծննդոց 12 և 15.1-6 համարները ի՞նչ են հայտնում մեզ օրենքի և շնորհի փոխադարձ կապի մասին: _____

_____

_____

Աստված կանչեց Աբրահամին՝ Սեմի հետնորդին, և նրա հետ շնորհի ուխտ կնքեց (Ծննդոց 12.1-3): Աստվածաշունչը չի նշում պատճառները, թե ինչու կանչվեց Աբրահամը: Նա չի ներկայացված որպես նույնպիսի

բնութագիր կրող, ինչպես Նոյը: Փաստորեն կանչվելուց շատ չանցած՝ նա փոքրոգություն դրսևորեց և խաբեց՝ (Ծննդոց 12.11-13) խախտելով Աստծո օրենքը: Սակայն Աբրահամը ճշմարիտ հավատի մարդ էր, և Աստծո շնորհով այդ հավատը նրան արդարություն համարվեց (Ծննդոց 15.6): Թեև նա կատարյալ չէր, սակայն հաճույքով լսում էր Աստծո ձայնը, անգամ եթե դա նշանակում էր Աստծուն վստահել այն բանում, ինչը մարդկային տեսկետից անհնար է թվում:

Միայն Աբրահամը չէր, որ պատրաստ էր ունկնդրել Աստծո ձայնին և հնազանդվել Նրա պատվիրաններին: Փարավոնը, երկու Աբիմելեքները և Հովսեփը հիանալի կերպով հասկանում էին, որ Աստված չի խրախուսում շնությունն ու սուտը: Երկրորդ Աբիմելեքն անգամ հանդիմանեց Իսահակին, որ վերջինս փորձության էր ենթարկում նրա մարդկանց (Ծննդոց 26.10): Երբ Աստված Աբրահամին ընտրեց հատուկ նպատակի համար, տարբեր ժողովուրդների մեջ նույնպես կային Նրանից վախեցող մարդիկ: Ավելին, այն բանից հետո, երբ Աբրահամն իր պատերազմներով հաղթեց Քոդողագոմորին և իր դաշնակիցներին, Աբրահամը օրհնություն ստացավ Մելքիսեդեկ թագավորից. «և նա բարձրյալ Աստծո քահանա էր» (Ծննդոց 14.18): Սա ևս մեկ վկայություն է, որ այն ժամանակ, անգամ մինչև Մովսեսի ծառայությունը, աշխարհում կար Աստծո գիտությունը:

Չորեքշաբթի **հունիսի 18**

Մովսեսից դեպի Հիսուս

Թեև Եգիպտոսում և Միջագետքում գտնված հին օրենսգրքերը նույնպես վկայում են, որ Աստծո օրենքում բովանդակվող սկզբունքների և կանոնների իմացությունը լայնորեն տարածված էր, սակայն դրանցից ոչ մեկը լիարժեք չէր: Փաստորեն այդ օրենսգրքերից շատերը բովանդակում են օրենքներ, որոնք խրախուսում են կռապաշտությունը և հետագայում Աստծո կողմից դատապարտված այլ երևույթներ: Այդ ժողովուրդը դարձավ հրեա ազգը՝ Աբրահամի հետնորդները և ուխտի խոստման ժառանգները, որ նրան տրված էր շատ դարեր առաջ: Այդ խոստումը լիակատար իրականացում գտավ միայն Հիսուսի մեջ:

Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 7.6-12-ը: Այս հատվածն ինչպե՞ս է բացահայտում օրենքի և շնորհի միջև փոխադարձ կապը: _____

_____

_____

Երբ Աստված ընտրեց հրեաներին՝ լինելու Իր օրենքի պահապանները, Նա գիտեր, որ նրանք անկատար մարդիկ են: Սակայն, չնայելով դրան, Նա նրանց հանձնարարեց Իր կամքը հռչակել մյուս անկատար մարդկանց: Բուն իսկ «քահանաների թագավորություն և սուրբ ազգ» (Ելից 19.6) լինելու նշանակությունը խոսում է այն մասին, որ Իսրայելը պետք է դառնար Աստծո միջնորդը, քահանայություն՝ ողջ աշխարհի համար: Նրանք ընտրված էին՝ հռչակելու Աստծո կամքը խավարի մեջ ապրող ազգերին: Եվ, չնայած Իսրայելի սխալներին, նրա անհաջողություններին, անգամ նաև բացահայտ ապստամբություններին՝ հենց այդ ժողովրդի մեջ ծնվեց, ապրեց, ծառայություն իրականացրեց, մահացավ և հարություն առավ Օծյալը՝ (Քրիստոսը) կատարելով շատ դարեր առաջ Աբրահամին տրված ուխտի խոստումը:

Կարդացե՛ք Գաղատացիս 3.6-16-ը: Պողոսի այս դատողություններն ինչպե՞ս են օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու ուխտի խոստման ճշմարիտ նշանակությունը: _____

_____

_____

Թեև Հին Իսրայելում շատերը համարում էին, որ *սերունդ* բառը (եզակի թվով) վերաբերում է Իսրայելին՝ որպես մեկ ամբողջության, Պողոսն այստեղ ներկայացնում է Նրան՝ Հիսուսին՝ որպես ուխտի խոստման ճշմարիտ և լիակատար իրականացում: Այդ պատճառով բուն Ավետարանը՝ ինչպես օրենքի, այնպես էլ շնորհի վրա իր հստակ շեշտադրումներով առավել լրիվ է ի հայտ բերում և բացահայտում ուխտի էությունը:

Խորհե՛ք այն բոլոր երկար դարերի մասին, որ անցել են Աբրահամի ժամանակներից (թեև նրան առաջինն էր տրվել ուխտի խոստումը) մինչև Քրիստոսի ժամանակը: Ի՞նչ է ասում սա մեզ՝ Աստծուն վստահելու հարցերում համբերություն դրսևորելու անհրաժեշտության մասին:

Հինգշաբթի **հունիսի 19**

Հիսուսից դեպի Մնացորդը

Սկսած Եդեմից՝ Աստծո եկեղեցին միշտ բաղկացած է եղել սխալվելու հակված մարդկանցից: Աստծո արդարությունը վկայելու համար նախատեսված կազմակերպությունը այդ նույն արդարության կարիքն ուներ: «Փոխանցման ձողը» սերնդից սերունդ փոխանցվելուն

զուգընթաց՝ ոչ մի «վազորդ» բավականաչափ արժանավոր չի եղել, որ հատի եզրագիծը: Օրենքն ստացողներից ոչ ոք ընդունակ չէր հասնելու արդարության պահանջված մակարդակին: Աստծո հավանության իր որոնումներում մարդկությունը, թվում է, ընկել է ունայնության շրջապտույտի մեջ:

Սակայն, երբ թվում էր՝ ոչ մի հույս չկա, Աստված Իր Որդուն ուղարկեց՝ ընդունելու «փոխանցման ձողը»: Երկրորդ Ադամը՝ անմեղ Հիսուսը, եկավ այս երկիր և, Իր Հոր հանդեպ ունեցած անփոփոխ նվիրվածության շնորհիվ, կարողացավ հնազանդության ճանապարհով անցնել մինչև բուն խաչը: Իր հարությամբ Հիսուսը հատեց եզրագիծը, քանի որ Նա քանդեց մահվան կապանքները: Այժմ Սուրբ Հոգու զորության շնորհիվ հարություն առած Քրիստոսն Իր արդարությամբ կիսվում է յուրաքանչյուր հավատավորի հետ: Այս լուրը, մեկընդմիշտ լինելով ուխտի խոստման կենտրոնը, առավել հստակ ըմբռնվեց այն բանից հետո, երբ Հիսուսն ավարտեց իր երկրային ծառայությունը, և սաղմնավորվեց նորկտակարանյան եկեղեցին:

Ցավոք, քրիստոնեական եկեղեցին, չնայելով ստացած ողջ լույսին, ժամանակ առ ժամանակ ավելի քիչ հավատարմություն էր դրսևորում ուխտին, քան հին Իսրայելը, և շուտով գրեթե ամենուրեք տիրեց խոր ուրացությունը: XVI դարում սկսված բարենորոգումն սկսեց փոխել այդ միտումը: Բայց անգամ նա էր սայթաքում, և քրիստոնեական աշխարհում շատ կեղծ դավանաբանություններ և ուսմունքներ մնացին, ներառյալ (ինչպես մենք տեսանք) օրենքի դերի և նպատակի վերաբերյալ սխալ տեսակետները՝ նորկտակարանյան քրիստոնյայի կյանքում: Աստված պետք է կանչեր Մնացորդին շատ կորսված ճշմարտությունների վերականգնման համար:

Կարդացե՛ք Հայտնություն 12.17-ը և 14.6-12-ը: Այս համարներն ինչպե՞ս են բացահայտում օրենքն ու շնորհը աշխարհին նախազգուշացնելու՝ Աստծո վերջին լուրի մեջ: _____

_____

_____

_____

Ինչպես տեսանք, Աստծո պատվիրաններին հետևելը ճշմարիտ սիրո դրսևորման Աստծո նշանակած ճանապարհն է: Սակայն ինչպե՞ս կարող ենք ձևականորեն պահել այդ պատվիրանները, բայց իրականում չդրսևորել այն սերը, որն ակնկալվում է մեզանից: Մենք ինչո՞ւ չենք կարող իսկապես հետևել պատվիրաններին՝ առանց սեր դրսևորելու:

Հետագա ուսումնասիրության համար

«Հայտնություն 14-րդ գլխի երեք հրեշտակները խորհրդանշորեն պատկերում են Աստծո լուրերի լույսն ընդունած և որպես Նրա ներկայացուցիչներ ողջ աշխարհում նախազգուշացումը հռչակելու գնացող ժողովրդին: Քրիստոսն Իր հետևորդներին հռչակում է. «Դուք աշխարհի լույսն եք» (Մատթեոս 5.14): Հիսուսին ընդունող յուրաքանչյուր հոգու Գողգոթայի խաչն ասում է. տեսե՛ք, թե որն է մարդու գինը: «Գնացե՛ք ամբողջ աշխարհը, Ավետարանը քարոզե՛ք յուրաքանչյուր արարածի» (Մարկոս 16.15): Ոչինչ չպետք է խոչընդոտի մեր ժամանակի համար այդ ամենակարևոր գործին, քանի որ այն նույնքան հեռահար է, որքան հավիտենությունը: Սերը, որ Հիսուսը Իր բերած զոհի մեջ բացահայտել է մարդկային հոգիների հանդեպ՝ հանուն նրանց փրկագնման, պետք է գործողության դրդի Նրա բոլոր հետևորդներին» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հատոր 5, 455, 456):

«Առաջնային կարևորության թեման երրորդ հրեշտակի լուրն է, որն ընդգրկում է առաջին և երկրորդ հրեշտակների լուրերը: Ամենքը պետք է հասկանան այդ ուղերձներում բովանդակվող ճշմարտությունները և առօրյա կյանքում հետևեն դրանց, քանի որ դա կենսականորեն կարևոր է փրկության համար: Մեզ հարկավոր է նախանձախնդրորեն, աղոթքի ոգով ներթափանցել դրանց մեջ՝ հասկանալու համար այդ մեծագույն ճշմարտությունները, և սովորելու ու ճանաչելու մեր ընդունակությունը կփորձվի բարձրագույն չափով» (Է. Ուայթ, Ավետարանչություն, 196):

Հարցեր քննարկման համար

1. Հայտնություն 12.17 համարը Մնացորդը համարում է այն մարդկանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները և ունեն Հիսուս Քրիստոսի վկայությունը: Ո՞րն է Ադվենտիստական եկեղեցու առանձնահատուկ նպատակը աշխարհում, որտեղ շաբաթը պահող հարյուրավոր այլ քրիստոնեական եկեղեցիներ կան: Մենք ի՞նչ ենք հռչակում և ի՞նչ ենք սովորեցնում՝ ի տարբերություն այդ եկեղեցիների:

2. Կարդացե՛ք Հռոմեացիս 4.3-ը, Գաղատացիս 3.6-ը և Հակոբոս 2.23-ը՝ դրանց անմիջական համատեքստում: Այդ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ՝ հասկանալու հավատքով արդարացումը:
3. Ուշադրություն դարձրեք, որ առաջին հրեշտակի լուրի մեջ, որն սկսվում է «հավիտենական Ավետարանից», հռչակվում է. «Դատաստանի ժամը եկել է»: Այսպիսով, երեք հրեշտակների պատգամի մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիշատակվում են Ավետարանը, օրենքն ու դատաստանը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում դատարանում օրենքի և շնորհի դերը: Այս բոլոր հասկացություններն ինչպե՞ս են կապակցված իրար հետ:

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 4.8,9, Դանիել 2.44, Ա Պետրոս 2.11, Ա Կորնթացիս 6.9-11, Հայտնություն 22.14,15, Ա Կորնթացիս 15.26:

Հիշելու համարը.

«Այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, ասում է Տերը. Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն. և Ես պիտի լինեմ նրանց համար Աստված, և նրանք պիտի լինեն ինձ համար ժողովուրդ» (Երեմիա 31.33):

2011 թվականին մահացավ «Apple» ֆիրմայի հիմնադիր Սթիվ Ջոբսը: Նա 56 տարեկան էր: Մի քանի տարի դրանից առաջ, քաղցկեղի սրացումից հետո, Ջոբսը մահն անվանել է «կյանքի լավագույն հայտնագործությունը», քանի որ այն մեզ ստիպում է լավագույն արդյունքների հասնել: Այլ խոսքերով, քանի որ մեր ժամանակն այդքան սահմանափակ է, մենք պետք է ողջ ուժով ձգտենք հաջողության:

Սակայն Ջոբսն ինչ-որ բան խառնել է: Այն, ինչ նրան ստիպում էր մեծ նպատակների հասնել այս աշխարհում (մահը կամ, գոնե, դրա անխուսափելիությունը) պետք է ցույց տա, որ չարժե չափազանց խորը արմատներ նետել այստեղ՝ երկրի վրա, արմատներ այն բանի մեջ, ինչը միշտ ճղճիմ ու կարճաժամկետ է դուրս գալիս: Իհարկե՛, Ջոբսը շատ բանի հասավ, բայց միլիոնավոր տարիների, հավիտենության համեմատությամբ ի՞նչ նշանակություն ունի դա:

Մենք գիտենք. այս աշխարհն ու այն ամենը, ինչ նրանում կա, կոչնչանան: Բայց Աստված նոր, հավիտենական Թագավորություն կհաստատի, որտեղ արդեն երբեք չեն լինի մեղք և մահ՝ Աստծո օրենքի խախտման հետևանքները:

Այս շաբաթ մենք կմտորենք Աստծո հավիտենական Թագավորության և այն մասին, թե դրա հետ ինչ առնչություն ունի օրենքը:

Աստծո արքայությունը

Երբ Աստված ստեղծեց առաջին մարդկանց, Նա նրանց իշխանություն տվեց երկրի ողջ արարչագործության վրա: Ադամը պետք է կառավարեր աշխարհը: Սակայն, խախտելով Աստծո օրենքը, նա զրկվեց երկրի տիրապետման իրավունքից, և այդ իրավունքն անցավ մարդկության թշնամուն՝ սատանային: Երբ նահապետների ժամանակ տարբեր աշխարհների ներկայացուցիչները հավաքվեցին Աստծո առջև, Երկիր մոլորակից «պատվիրակը» սատանան էր (Հոբ 1.6):

Կարդացե՛ք Եփեսացիս 2.2, Բ Կորնթացիս 4.4, Մատթեոս 4.8, 9-ը: Բերված համարներն ի՞նչ են հայտնում մեր աշխարհում սատանայի իշխանության մասին: _____

_____

Այն, ինչ տեղի ունեցավ անապատում՝ Քրիստոսի փորձության ժամանակ, շատ բան պարզաբանեց: Սատանան Հիսուսին առաջարկեց բոլոր երկրային թագավորությունների իշխանությունը՝ պայմանով, եթե Հիսուսը բերանքսիվայր երկրպագի իրեն (Մատթեոս 4.8,9, տե՛ս նաև Ղուկաս 4.5-7): Հիսուսն եկավ, որպեսզի սատանայից խլի մեր աշխարհը, սակայն դա կարող էր անել միայն Իր կյանքի գնով: Որքա՜ն ուժեղ պետք է լիներ գայթակղությունը, երբ սատանան առաջարկեց՝ Նրան տալ երկիրը: Սակայն, երկրպագելով սատանային, Հիսուսը կընկներ այն նույն թակարդը, ինչ և Ադամը և, հետևաբար, նույն կերպ մեղավոր կլիներ Իր Հոր օրենքի խախտման մեջ: Եթե Նա աներ դա, փրկության ծրագիրը չէր կայանա, և մենք կկործանվեինք մեր մեղքերի մեջ:

Իհարկե՛, մենք գիտենք, որ Հիսուսը այդ պայքարից հաղթող դուրս եկավ: Նրա հաղթանակը մեզ համար երաշխիք և խոստում է բովանդակում՝ կյանք Աստծո հավիտենական Թագավորության մեջ: Այդ Արքայությունը Դանիել 2-ում ներկայացված է առանց մարդկային ձեռքի օգնության կտրված և աշխարհի բոլոր թագավորությունները կործանած քարով: Հետո «երկնքի Աստվածը մի թագավորություն է վեր կացնելու, որ հավիտյանս չի ավերվի, և նրա տիրակալությունը ուրիշ ազգի չի տրվի. նա պիտի փշրի և վերջացնի այս բոլոր թագավորությունները, իսկ նա ինքը կմնա հավիտյանս» (Դանիել 2.44):

Դանիել 2-ում պատկերված բոլոր թագավորությունները կատարել են իրենց մասին կանխագուշակվածը, ներառյալ Եվրո-

պայում մշտական միասնականության բացակայությունը, ինչը խորհրդանշորեն ներկայացված է երկաթով ու կավով, որոնցից բաղկացած են արձանի ոտքերի մատները: Այս զարմանահրաշ փաստերը կարող են օգնել մեզ՝ վստահելու վերջին Թագավորության մասին խոստմանը, որը լինելու է հավիտյան:

Երկուշաբթի **հունիսի 23**

Թագավորության քաղաքացիները

Մի երկրից մյուսը տեղափոխված մարդիկ մեծամասամբ պետք է հրաժարվեն իրենց հայրենիքի քաղաքացիությունից, եթե ցանկանում են դառնալ մյուս երկրի քաղաքացիներ: Սակայն որոշ պետություններ մարդուն թույլ են տալիս ունենալ երկքաղաքացիություն, այսինքն՝ հավատարմություն պահպանել երկու պետությունների փոխհարաբերություններում:

Սակայն մեծ պայքարի մեջ չկա երկքաղաքացիության հասկացություն: Մենք կա՛մ մի, կա՛մ մյուս կողմում ենք: Չարի թագավորությունը հազարամյակների ընթացքում պայքարում է արդարության արքայության դեմ, և մարդը չի կարող հավակնել միաժամանակ երկուսին հավատարիմ լինելուն: Մենք ամենքս պետք է ընտրություն կատարենք, թե ո՛ր թագավորությանը հավատարիմ լինենք:

Կարդացե՛ք Ա Պետրոս 2.11, Եբրայեցիս 11.13, Եփեսացիս 2.12, Կողոսացիս 1.13, Երկրորդ Օրինաց 30.19, Մատթեոս 6.24-ը: Այս համարները ի՞նչ են ասում մեզ Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարում «երկքաղաքացիության» անհնարինության մասին: Օրենքին հետևելն ի՞նչ դեր է խաղում մեր ճշմարիտ քաղաքացիության որոշման մեջ: Տե՛ս Հայտնություն 14.12: _____

_____

Երբ մարդիկ Քրիստոսին հետևելու որոշում են ընդունում, նշանակում է, որ նրանք թիկունք են դարձնում սատանայի թագավորությանը: Այժմ նրանք պատկանում են մեկ այլ պետության՝ Տեր Հիսուս Քրիստոսի Արքայությանը և, հետևաբար, ապրում են Նրա կանոններով, Նրա օրենքի համաձայն, և ոչ թե սատանայի կանոններով: Սակայն սատանան չի ողջունում մարդկանց այդպիսի հնազանդությունը և ջանում է հետ վերադարձնել նրանց: Այդպիսի որոշումը հաճախ չեն ողջունում նաև մարդիկ, ովքեր հակված են չվստահելու իրենց մեջ

եղած «պանդուխտներին և օտարականներին»: Սակայն, չնայած բոլոր դժվարություններին, Աստված ունի ժողովուրդ, որը հավատարիմ է Իրեն, և ոչ թե այս աշխարհի իշխանին (Հովհաննես 12.31):

Հաճախ օտարերկրացիները առանձնանում են տեղաբնակներից, քանի որ տարբերվում են նրանցից: Իսկ ինչպե՞ս պետք է առանձնանանք մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս. չէ՞ որ մենք նույնպես «պանդուխտներ և օտարականներ» ենք: Թե՞ դա այդպես չէ:

Երեքշաբթի **հունիսի 24**

Հավատը և օրենքը

Սուրբ գրքի հիմնական թեման պարզ է՝ Աստված սեր է: Աստծո սերն առավել վառ կերպով դրսևորվում է Նրա շնորհի մեջ: Իր անսահման սիրով Տերը կարող էր մարդկանց հեշտությամբ ջնջել երկրի երեսից, բայց Նա գերադասեց համբերություն դրսևորել և ամենքին պարգևել Իր հավիտենական Թագավորության մեջ կյանքի լիությունը: Ավելին, Նրա սերն արտահայտված է այն գնի մեջ, որ Նա Ինքը վճարեց խաչի վրա:

Աստծո սերը նաև ուղղակիորեն կապված է Նրա արդարության հետ: Մարդկանց՝ իրենց ճակատագրի ընտրության անհամար հնարավորություններ տալով՝ սիրո Աստվածը նրանց բռնությամբ չի ներգրավի Իր Թագավորության մեջ, որը նրանք մերժել են: Երբ դատաստանի ժամանակ ամբարիշտները կանգնեն Աստծո գահի առջև, նրանք կդատապարտվեն իրենց սեփական վկայությամբ: Նրա գահի առջև կանգնածներից ոչ ոք չի կարող ասել, թե չգիտեր Աստծո պահանջների մասին: Գրված հայտնության կամ բնության միջոցով ամենքին հայտնվել են Աստծո Օրենքի հիմնական սկզբունքները (Հռոմեացիս 1.19,20, 2.12-16):

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 6.9-11-ը և Հայտնություն 22.14,15-ը: Ո՞վ է մտնում Աստծո Արքայություն, իսկ ո՞վ է մնում դրսում, և ինչո՞ւ: Ի՞նչ դեր է խաղում այդտեղ Աստծո օրենքը: Ուշադրություն դարձրեք նաև երկու խմբերի միջև կտրուկ հակադրությանը: ____

_____

_____

Միավորելով Ա Կորնթացիս 6.11 և Հայտնություն 22.14 համարները՝ դուք կկարողանաք տեսնել հավատարիմ քրիստոնյային, ով ար-

դարացված է Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ: Այդպիսի մարդը «հավատքով է արդարանում՝ առանց օրենքի գործերի» (Հռոմեացիս 3.28), բայց միևնույն ժամանակ պահում է օրենքը: Սա ոգևորո՞ւմ է:

«Ամենևին էլ ինքնակամ որոշմամբ չէ, որ Աստված մեղսավորներին երկինք չի թողնում, այլ այն պատճառով, որ նրանք ուղղակի չէին կարողանա ապրել այնտեղ՝ իրենց փչացածության պատճառով: Աստծո խոսքերը նրանց համար «մաշող կրակ» կլինեին: Նրանք կգերադասեին մահանալ, որպեսզի ծածկվեն Նրա երեսից, Ով մահացավ հանուն նրանց փրկության» (է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 18): Այս խոսքերն ինչպե՞ս են օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու ամբարիշտների ճակատագրի մասին ցավոտ թեման:

Չորեքշաբթի **հունիսի 25**

Հավիտենական արքայությունը

Աստված կատարյալ աշխարհ է ստեղծել: Այդ կատարյալ աշխարհ մտավ մեղքը և դաժանորեն վնասեց նրան: Փրկագնման պատմությունը մեզ պատմում է այն մասին, որ Հիսուսը եկավ մարդկանց աշխարհ, որպեսզի, բացի ամեն մնացյալից, վերականգնվի նախաստեղծ կատարելությունը: Փրկագնվածները ապրելու են կատարյալ աշխարհում՝ սիրո Արքայության մեջ:

Ինչպես տեսանք, սերը կարող է գոյություն ունենալ միայն բարոյական տիեզերքում, միայն այն տիեզերքում, որ բնակեցված է բարոյական էակներով: Բայց բարոյական լինելու համար նրանք պետք է ազատ լինեն: Հարց է առաջանում՝ կարո՞ղ է կրկին ի հայտ գալ չարը:

Ինչպե՞ս են Դանիել 7.27, Հովհաննես 3.16 և Հայտնություն 21.4 համարներն օգնում պատասխանելու այն հարցին, թե կրկին ի հայտ չի՞ գա չարը: Ո՞րն է «հավիտյանս» բառի իմաստը:

Երբ Աստված ստեղծեց աշխարհը, նրա կայունությունը հնարավոր էր միայն որոշակի պայմաններով: Սա հատկապես ակնառու է Ծննդոց 2.16,17-ից, որտեղ Ադամին նախազգուշացում է տրվում այն մասին, որ Աստծո հրամանի խախտումը հանգեցնում է մահվան: Մահվան հիշատակումն արդեն ցույց է տալիս, որ մարդկության համար հավիտենության հայեցակարգը պայմանական էր: Ադամը կարող էր ապրել հավիտյան, եթե հավատարմություն պահպաներ Աստծո նկատմամբ:

Սակայն կրկին արարված երկրի վրա մահ արդեն չի լինի, իսկ դա նշանակում է, որ մենք ապրելու ենք հավիտյան, և կկատարվեն Սուրբ գրքի բազմաթիվ խոստումները: Կարելի է շատ բանավիճել կրկնակի ապստամբության հնարավորության մասին, սակայն այն փաստացի երբեք չի կրկնվի (տե՛ս Նաում 1.9):

Կարդացե՛ք Երեմիա 31.31-34-ը: Ի՞նչ սկզբունք է շարադրված այստեղ, որը մեզ թույլ է տալիս հասկանալու, թե ինչո՞ւ կրկին ի հայտ չի գա չարը: _____

_____

_____

Մեսիայի Արքայությունը բաղկացած կլինի իրենց կրոնական փորձառության մեջ Աստծուն հավատարիմ մարդկանցից: Հալածանքներին և անձնական ապրումներին դեմ հանդիման՝ նրանք ընտրեցին հնազանդության ուղին և իրենց կյանքով Աստծուն ծառայելու պատրաստակամություն դրսևորեցին: Աստված Իր օրենքը գրեց նրանց սրտերի մեջ, և Նրա զորությամբ նրանք անում էին Աստծուն հաճելին: Քրիստոսի Արքայության մեջ մեղք չի լինի, այնտեղ թագավորում է արդարությունը:

Հինգշաբթի **հունիսի 26**

Օրենքը Արքայության մեջ

Մեղքի բոլոր սոսկալի հետևանքներից մահը ամենակայունն ու անխուսափելին եղավ: Մեղքը կարելի է հաղթել, սատանային կարելի է հակահարված հասցնել, բայց միլիարդավոր մարդկանցից ո՞վ, բացառությամբ մեզ հայտնի երկու անձանց (Ենովքը և Եղիան), կարողացավ խուսափել մահից: «Իսկ ինչ վերաբերում է մահվանը, ապա մենք ամենքս ապրում ենք պարիսպներով չպաշտպանված քաղաքում», - գրում էր հին փիլիսոփան:

Ի՞նչ լուր է բովանդակվում Հայտնություն 20.14 և Ա Կորնթացիս 15.26 համարներում: _____

_____

Հաշվի առնելով մահվան ուժը՝ մենք չենք զարմանում, որ, նախքան երկրի վրա մեսիական Արքայությունը հաստատելը, Քրիստոսը կոչնչացնի մահը:

Մահը կապված է մեղքի հետ (Ա Կորնթացիս 15.56), իսկ դա նշանակում է, որ այն առնչություն ունի նաև Աստծո օրենքի հետ. չէ՞ որ

մեղքը Աստծո օրենքի խախտում է: Հետևաբար, չի կարող լինել մեղք, եթե չկա օրենք: Մեղքը կախված է օրենքից, սակայն օրենքը կախված չէ մեղքից, այսինքն՝ օրենքը կարող է գոյություն ունենալ առանց մեղքի: Այն փաստորեն առանց դրա գոյություն ուներ բոլոր դարերի ընթացքում, մինչև որ Արուսյակը երկնքում ապստամբություն բարձրացրեց:

«Երբ սատանան ապստամբեց Եհովայի օրենքի դեմ, օրենքի գոյության մասին միտքն անգամ հրեշտակների համար գրեթե հայտնագործություն եղավ. չէ՞ որ նրանք երբևէ չէին մտածել այդ մասին: Նրանք իրենց ծառայությունն իրականացնում են ոչ թե որպես ծառաներ, այլ որպես որդիներ: Նրանց և իրենց Արարչի միջև լիակատար համաձայնություն է տիրում» (Է. Ուայթ, Երջանիկ կյանքի կանոնները, 109):

Հասկանալով դա՝ մենք կարող ենք եզրակացնել, որ մահվան և մեղքի բացակայությունը Աստծո Արքայությունում չի նշանակում օրենքի բացակայություն: Ինչպես ձգողականության օրենքն է անհրաժեշտ տիեզերքի ֆիզիկական տարրերի միջև ներդաշնակ փոխգործունեության համար, այնպես էլ Աստծո բարոյական օրենքն է անհրաժեշտ սուրբերի միջև արդար փոխհարաբերությունների կառավարման համար: Երբ Աստված Իր օրենքը գրում է փրկագնվածների սրտում, Նրա միակ նպատակն է՝ փորագրել ողջ հավիտենության ընթացքում արդարության ճանապարհներով գնալու նրանց որոշումը: Հետևաբար, Աստծո օրենքը դառնում է Նրա Արքայության բուն էությունը: Այդ պատճառով մենք բոլոր հիմքերն ունենք՝ հավատալու, որ Աստծո բարոյական օրենքի սկզբունքները կիրականացվեն Աստծո հավիտենական թագավորության մեջ: Իհարկե, տարբերությունն այն է, որ այդ սկզբունքները երբեք չեն խախտվի:

Փորձե՛ք պատկերացնել երկնքի կատարյալ կարգուկանոնը. չկան ընկած էակներ, չկա մեզ գայթակղող սատանան, չկան մեղքն ու մահը: Այժմ հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ ձեր կյանքում և բնավորության մեջ ի՞նչը չէր կարող ներդաշնակել այդ կարգուկանոնին:

Ուրբաթ **հունիսի 27**

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Քրիստոսի առակները» գրքից կարդացե՛ք «Ոչ ամուսնական հանդերձներով» գլուխը (307-319):

«Սատանան ասում էր, որ մարդն ի զորու չէ պահելու Աստծո պատվիրանները, և դա իսկապես հնարավոր չէ մեզ համար, եթե մենք ապավինում ենք միայն մեր սեփական ուժերին: Բայց Քրիստոսը, մարդկային բնույթ ընդունելով, Իր կատարյալ հնազանդությամբ ապացուցեց, որ Աստծո հետ միության մեջ մարդը կարող է հնազանդվել Աստծո յուրաքանչյուր հրամանի:

Երկրի վրա Քրիստոսի կյանքը Աստծո Օրենքի կատարյալ արտահայտությունն էր: Այդ պատճառով երբ նրանք, ովքեր իրենց Աստծո զավակներ են անվանում, բնավորությամբ դառնան Քրիստոսի նման, նրանք հնազանդ կլինեն նաև Աստծո պատվիրաններին: Այդ ժամանակ Տերը կկարողանա նրանց երկնային ընտանիքի անդամներ դարձնել: Քրիստոսի արդարության փառավոր հանդերձները հագած՝ նրանք տեղ կստանան Արքայի ամուսնական խնջույքում: Նրանք իրավամբ կմիանան արյամբ լվացվածների բազմությանը» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 314, 315):

Հարցեր քննարկման համար

1. «Կարդացե՛ք էլեն Ուայթից վերը բերված մեջբերումը: Այստեղ ինչպե՞ս է բացահայտված օրենքի և շնորհի թեման: Ինչո՞ւ է այդքան կարևոր դրանց փոխադարձ կապն ըմբռնելը: Ի՞նչ է տեղի ունենում, երբ այդ հայեցակարգերը ներկայացնում են մեկը մյուսից անկախ:
2. Այս դասի ներածության մեջ մենք խոսում էինք Սթիվ Ջոբսի կյանքի վերջին տարիների և նրա այն պնդման մասին, որ մահվան ուրվականը պետք է մեզ դրդի առավելագույն ձեռքբերումների: Թեև այս գաղափարի մեջ ճշմարտության բաժին կա, սակայն այն ինքնին բավարար չէ: Այն չի լուծում բուն մահվան խնդիրը և այն, ինչ մահն ասում է դրան նախորդած կյանքի իմաստի մասին: Ջոբսի մահից հետո «The New Yorker» ամսագրի շապկին պատկերեցին սուրբ Պետրոսին՝ այփադը ձեռքին, մարգարտե դարպասների մոտ Սթիվ Ջոբսի անունը գրանցելիս: Որքան էլ հնարամիտ լիներ այդ պատկերավորումը, մենք ի՞նչ կարող ենք սովորել այն փաստից, որ ավելի շուտ երկնքում ոչ մի այփադ կամ որևէ այլ բան՝ երկրի վրա Ջոբսի ստեղծածներից չի լինի:
3. Այժմ երկրի վրա գոյություն ունեցողներից ի՞նչ կլինի հավիտենության մեջ: Ի՞նչ չի լինի այս աշխարհի կործանումից հետո: Ինչո՞ւ է կարևոր հասկանալ մեկի և մյուսի միջև եղած տարբերությունը:

ՆՈՐՈՒՅԹ

Ընտանեկան կյանքի ձեռնարկ

Իմաստությամբ և սիրով ամրապնդված ընտանիքը կարող է դիմագրավել մեր օրերի կենսական փոթորիկներին: Հասարակության մեջ շատ կարծրատիպեր են ձևավորվել, որոնք թույլ չեն տալիս ընտանիքին զարգանալու և աճելու: Դա կարող է լինել փոխադարձ բռնությունը, թյուրըմբռնողությունը և պարզապես հիմնարար սկզբունքների չիմացությունը:
Իսկ ահա ընտանեկան երջանկությանը նպաստող ճիշտ սկզբունքների իմացությունը և կյանքում դրանք կիրառելը շատ ու շատ խնդիրներից կազատագրի ընտանիքը:

ՆՈՐՈՒՅԹ

Մեծ հակամարտություն

«Մեծ պայքարի» տեսիլքը էլեն Ուայթին տրվել է 1858 թ. գարնանը ԱՄՆ-ի Օհայո նահանգում՝ Լովետս Գրովում: Դրա հետ կապած շատ բան նա տեսել էր ավելի քան 11 տարի առաջ, սակայն այս անգամ նրան հանձնարարվեց գրի առնել այդ ամենը, չնայած սատանան պետք է մեծ ջանքեր գործադրեր՝ խոչընդոտելու դրան: Որոշ մաս՝ հատկապես 30-րդ գլուխը, հրատարակվել է 1847 թ.՝ «Փոքր հոտ», 1851 թ.՝ «Քրիստոնեական փորձառություններ և տեսիլքներ», և 1854 թ.՝ «Հավելված» գրքույկներում: Այդ ամենը ներշնչվել է Սուրբ Հոգու կողմից, գրի առնվել փխրուն, սակայն աստվածավախ կնոջ կողմից, և առաջին անգամ տպագրվել 1858 թվականին:



Քայլեր դեպի Քրիստոս

Այս գրքի էջերին պարզ և հստակ ցույց է տրված Աստծո մոտ տանող ճանապարհը: Ընթերցողի հայացը ուղղված է Հիսուս Քրիստոսին: Հետևելով այստեղ առաջարկվող խորհուրդներին՝ ճշմարտություն և բնավորության կատարելություն փնտրողը կարող է քայլ առ քայլ գնալ քրիստոնեական ճանապարհով դեպի հաջողության լրությունը, որը մեզ վրա Տիրոջ իշխանության և փրկագնման լիովին ընդունման արդյունքն է:

Հույսով դեպի ապագա

Գրքի հեղինակը հավատացած է, որ հաճախակիացած բնական աղետները, այժմեականության սոցիալական և քաղաքական հակասություններն ունեն իրենց բացատրությունը: Այդ ամենի մեջ նա լսում է վաղեմի տիեզերական հակամարտության եզրափակիչ ակորդները:
Հիմնվելով աստվածաշնչյան մարգարեությունների վրա՝ հեղինակը կատարում է խորաթափանց հետազոտություն, որը ցույց է տալիս մարդկության պատմության վիթխարի և երջանիկ հանգուցալուծման մոտեցումը:



Ընտանեկան երջանկության գաղտնիքները

Ի՞նչ է երջանկությունը: Այս հարցը աշխարհի չափ հին է, և ունի հազարավոր պատասխաններ: Սակայն շատ ընտանիքների չի հաջողվում այն ձեռք բերել: Գրքում դուք չեք գտնի յուրօրինակ բաղադրատոմսեր, սակայն կիմանաք, թե ինչպես իրագործելով աստվածաշնչյան սկզբունքները՝ ամուսնական փոխհարաբերություններում հասնել ներդաշնակության:

Ժամանակից դեպի հավերժություն

Սույն գիրքը ապշեցուցիչ գիտական ուսումնասիրություն է մարդկության ճակատագրի վերաբերյալ՝ հիմնված աստվածաշնչյան մարգարեությունների և դրանց պատմական իրականացման վրա: Հեղինակը՝ աստվածաբանության դոկտոր ավստրիացի Հանս Հայնցը, խորապես վերլուծելով ականավոր փիլիսոփաների և գիտնականների գաղափարները, համոզիչ կերպով ընթերցողին է ներկայացնում ապագա բախտորոշ իրադարձությունները և դրանց փառավոր վախճանը:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի երկրորդ եռամսյակ

ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ՕՐԵՆՔԸ

Քեյթ Բերթոն

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝ Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան